

Զ.ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՑ

8.91-99

7-91

9255

7. nekemus, 9.

Դպրություն. 6 մ.

891.99
n-91

Զ. ԱՐԿԱՆՅԱՆ

Ապրիլի 5, 1961 թ.

ՀՊԱՐՏԱՒԹՅՈՒՆ

Ա 18402 02355



ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

1947

З. ГУКАСЯН
ГОРДОСТЬ

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1947 г.

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ուսման առաջին տարին մեր կուրսում կային տարբեր տարիքի, հասարակական տարրեր միջավայրի և նույնական տարրեր կրթության տեր մարդիկ: Տասնամյա դպրոցի նոր շրջանավարտների հետ սովորելու էին եկել վաղուց ավարտածներ, որ տարիներ շարունակ աշխատել էին, հիմա էլ աշխատում էին և ընտանիք ու երեխաներ ունեին: Կուրսի երիտասարդ ուսանողները դրանցից շատերին կատակով «հայրիկ» կամ «մայրիկ» էին կանչում, իսկ մեկին՝ երեսունհինգ տարեկան մի գեր մարդու առաջին իսկ օրից՝ «պապաշա»:

Սյու պապաշայի ստամներն այնքան սպիտակ էին, որ թվում էր, թե արհեստական են, աշ ձեռքն էլ ինչոք թերություն ուներ՝ զրելու ժամանակ արմունկը քանի գընում՝ վեր էր բարձրանում և էջը վերջանալու ժամանակ զրեթե ուսին էր հավասարվում: Պապաշայի գեմքի վրա բաղմաթիվ սպիտակ կետեր կային, որ նման էին այրագածքի հետքերի: Ասում էին, որ գրանք վառողի հետքեր են, բայց պապաշան չեր սիրում իր անցյալի մասին պատմել: Նա մեր շրջանում խոսում էր իր հաշվապահական գործերի, իրենց հիմնարկի անց ու դարձի և ամենից շատ՝ դասութիւն ու դասախոսների մասին:

Մեծահասակ ուսանողների մեջ աչքի էր ընկնում նաև մի կին: Բայց նա երիտասարդների հետ պապաշայի պես սրտաբաց չեր, խոսում էր շատ հազվագեպ, կարծես զիջողաբար, ճաշակով էր հագնվում և արտակարդ մաքրությունից նրա առանց այն էլ սպիտակ գեմքն ու պարա-

նոցը կարծես փայլում էին: Դրանից էր երկի, որ այնպես
թարմ էր երկում ու իր տարիքից փոքր: Այնուամենայնիվ
նրա մեջ կար մի ձանձրալի միօրինակություն: Այդ առա-
ջանում էր միշտ միատեսակ հեղահամբույր ժպիտից, որը
ինամքով թագնում էր նրա ներքնաշխարհը և զրա հա-
մար էլ որոշ հետավորության վրա էր պահում նրան մարդ-
կանցից:

Սակայն իմ հերոսուհին այն կենսուրախ ու անհող
նըխտասարդներից էր, որ հենց նոր էր ավարտել միջնա-
կարգ գպրոցը և համալսարան եկել: Այդ աղջիկը, սկզբում
կարծես զբոսանքի համար էր զալիս դասերին: Նա ուսա-
նողների շրջանում և զբուժ բազմաթիվ ծանոթներ ուներ:
Բոլորովին անծանոթ մարդուն էլ որևէ հարցով զիմում էր
առանց քաշվելու, իրենից մեծ մարդու հետ կարողանում
էր խոսել բոլորովին ազատ, վիճել և հաղթող դուրս գալ
վեճից:

Նրա ոչ աչքերն էին առանձնապես գեղեցիկ ոչ ուն-
քերը և ոչ էլ նույնիսկ քիթն էր շատ կանոնավոր, որն
այնպես անհրաժեշտ են համարում նկարիչները կնոջ գե-
ղեցիկության համար: Բայց այնուամենայնիվ Հասմիկը ոչ
թե սոսկ սիրուն աղջիկ էր, այլ և գեղեցիկ: Նա ցորնագույն
դեմք ուներ, սովորակ, բաց ճակատ ու մինչև վիզը հասնող
ալիքաձև մազեր, որոնք զլիսի մեջտեղում բաժանվերավ,
ներքեսում հարուստ գանգուրներ էին գառնում և նրա սպի-
տակ երկար վզի հետ մի ներդաշնակ ամբողջություն կաղ-
մում: Բայց եթե կուզեք ճիշտն իմանալ այդ լլ չեր Հաս-
միկի իսկական գեղեցիկությունը: Նրա գեղեցիկության յու-
րահատկությունը ուացիկ հասակն էր, հաղթական քայլ-
վածքը, անբանապաս շարժ ու ձեւերը: Վերջապես Հասմիկը
համալսարան էր եկել գիտելիքների այնպիսի սլաշարով,
որ ամեն մի խոսակցություն նրա հետ հետաքրքիր էր լի-
նում: Աակայն նա ևս, ինչովես սովորական մահկանացու-
ներից շատերը, ուներ պակասավոր զծեր: Երբեմն անտակա
էր և առնելորդ ինքնավատան, որը թեև հազվագել, բայց

Տայրահեղությունների էր հասցնում նըտան: Այդ պատճառով էլ մականունների սիրահար ուստանողները Հասմիկին երբեմն «անարխիստ» էին անվանում:

Իմ մյուս հերոսին, որը հասկանալի է, աղա էր, պարագմունքների առաջին օրերին ևս չէի նկատել: Նա Հառմիկի նման անմիջապես աչքի ընկնող չէր: Մի անգամ դաստիջոցին ևս նրան ահսա լսաբանի դուանը, ծառի փոքրիկ արգեն մերկացած ճյուղը ձևոքին: Խոսում էր մի աղջկա հետ, որին ուսանողները և հատկապես Համբիկը «Օրլովա» էին կանչում, որովհետև այդ աղջիկը նման էր Օրլովային և կինոդերասանուհի գառնալու հավակնություններ: Այդ աղջկան ևս նկատեցի այն պատճառով, որ ինչպես ինձ թվաց, զեղեցիկ ժպտում էր, այսինքն այնպես, ինչպես ժպտում են աղջիկները, երբ ուղում են գուր գալ տղային: Սակայն երիտասարդը, զատելով դեմքը արտահայտությունից, այլ կերպ էր արամադրված: Նա խոսում էր ինչ որ շատ լուրջ, հասուն մարդու ոկտու: Միշտահակ ու թիկնեղ էր, դեմքը բրոնզագույն չէր, այլ թուխ, և մի քիչ էլ հողմահար: Այդ առաջին հանդիպումից հիշողությանս մեջ մնացել են նրա գանգուը, դեպի վեր սանրած մազերը, որոնց մեջ դեռ այն ժամանակ սպիտակ թելիկներ էին երևում:

Դասերի ժամանակ մեր կուրսում այնքան շատ մարդկար, որ հազիվ էինք լսաբանում տեղավորվում: Նստում էինք իրար շատ մոտ և դասախոսությունները գրելիս խանգարում էինք միմյանց: Նկատելի էր, որ միջնակարգ դպրոցը նոր ավարտածները նստում էին առաջին նստարանների վրա և մեծ ջանասիրությամբ գրում բոլոր դասախոսությունները, իսկ աշխատող-սովորողները ընդհակառակը վերջին նստարաններին էին նստում և նրանցից շատ քչերն էին դասախոսությունները՝ զրում: Առաջին խմբի մեջ բացառություն էին կազմում իմ հերոսները: Հասմիկը նստում էր, մանավանդ սկզբում, որտեղ պատահեր և զրի էր տանում իրեն դուր եկած որևէ բան, իւրեւ

Արշան, թեև քսան տարեկան էր և անմիջապես գպըոցից
էր համալսարան եկեւ բայց միշտ նստում էր Պապաշայի
կողքին և դասախոսությունները երբեք չէր զրում: Զմեռը
նա դասի էր գալիս մի գարչնագույն, իր վրա արդեն փոքր-
բացած վերաբերյով, ձեռքերը զրպանները գրած և մըշ-
տապես բաց գլուխը բարձր բանած: Միայն տարիններ հե-
տո նա նրա գլխին գլխարկ տեսա, բայց դա զինվորականի
կարմիր երիզով գլխարկ էր: Արշոն հետը կամ տեսր չէր
բերում, կամ բերում էր մի հատ տեսր, որը սովորա-
լար որևէ նոր գրքի մեջ գրպանն էր գնում: Դասամիջոց-
ներին շրջում էր տղաների ու աղջիկների հետ բարձրա-
ձայն խոսելով, հետը բերած զրքից որևէ բան կարգալով,
միշտ ինչ-որ բանով ոգեսրված: Երբեք չեմ տեսել նրան
զլուխը կամ, տիսուր կամ գունատ: Շատ հետո մեզնից ո-
մանք իմացան, որ նա բանաստեղծություններ է զրում,
բայց այդ ասրիբում շատ-շատերն են գրում:

Արշոն մի քիչ տարօրինակ վերաբերմունք ուներ գի-
պի աղջիկները: Նա աղջիկների վրա նայում էր որպես
չքնաղ արարածների, բնության հրաշագեղ ստեղծագոր-
ծությունների, նրանցից մեկին նմանեցնում էր քնչուշ
մանուշակի, մյուսին՝ նոր բացված վարդի, երբորդին՝
սպիտակ շուշանի, չորրորդին՝ եղնիկի, միենույն ժամանակ
գնահատում էր նրանց խելքն ու արժանիքները՝ իրսկ
տղամարդուն հավասար: Նա կատակով ասում էր, որ իր
մայրը հորից խելցի է: Մի խոսքով այնպիսի տպավո-
րություն էր ստացվում, թե նա աղջիկներին այնքան է
«ընդհանրապես» սիրում, որ չի կարող որևէ մեկին սիրել
«մասնավորապես»:

Իսկ Հասմիկը, ընդհակասակը, աղջիկների վրա նա-
յում էր թեթև արհամարհանքով, ընկերանում էր տուավե-
լապես տղաների հետ և մյուս աղջիկների նման չէր կար-
մըրում, երբ աղաներից որևէ մեկը բաց կատակ էր անում:
Հասմիկը ոչ մի ներկայացում կամ համերգ բաց չէր

թողնում: Այդ էր պատճառը, զուցե, կամ մի ուրիշ բան, որ նրա մասին ուսանողության մեջ այն կարծիքն էր ստեղծվել, թե նա շատ սիրային արկածներ ունի, իսկ Արշոյի մասին, ընդհակառակը, թե նա սիրային գործերով չի զբաղվում, աարված է միայն հասարակական շատ բարձր իդեաներով: Այսպիսով, ոչ ոքի մտքով չէր անցնում, թե կարող է որևէ կառ լինել Հասմիկի և Արշոյի միջև:

Ուրիմն, որքան զարմացանք մենք, երբ լոեցինք, որ «Արշոն սիմպատիա ունի ինստիտուտներից մեկում»: Բայց զարմանալին այն չէր, այլ այն, որ գեղեցկունի Հասմիկը մի խասակցության ժամանակ, իրը թե պատահաբար ակնարկեց այդ մասին և սաստիկ կարմրեց, մի բան, որ քեզ էր պատահում նրա հետ:

Գրանից հետո նկատելի էր, որ Արշոն ու Հասմիկը իրար հետ խոսում կամ վիճում էին մի առանձին ձևով, այսինքն այնպես, որ կարծեն մի բան մինչև վերջը չեն ասում, ամաչում են իրարից:

Միջանցքում, մեր լսարանի դիմաց մի կոտրված նըստարան կար, որ չգիտես ինչու, գուրս չէին տանում: Ծեր, հաստամարմին պրոֆեսորը սովորություն ուներ դասամիջոցին նստել այդտեղ, ծխել ու խոսել ուսանողների հետ: Մի անգամ էլ Արշոն էր նստել այդ նստարանի վրա և ուսանողներին գլխին հավաքած՝ սկսորված խոսում էր:

— Ասում են, որ մի անդամ Մայակովսկին միտինգի ժամանակ ամբոխն է բարձրացել որ ճառ արտասանի, բայց ճառի փոխարեն կարդացել է իր բանաստեղծություններից մեկը և բանաստեղծության սիթմով ներքակից համընթաց անցել ևն բանվորական շարասյունները: Ահա թե ինչպիսի բանաստեղծ պետք է լինել:

Ուսանողներն աղմկում էին: Ամեն մեկն աշխատում էր իր կարծիքն հայտնել Մայակովսկու մասին: Մի քանի բավարարվեցին միայն սեղիկաներով և հեռացան: Շուտով մնացին միայն Հասմիկն ու Արշոն, որ դեռ տաքաք վիճում էին: Հասմիկը խոսում էր բանաստեղծների, պոեզիայի դերի ու նշանակության մասին՝ իր կարծիքը

պնդելու ակնհայտ տրամադրությամբ։ Արշոն երբեմն համաձայնվում էր նրա հետ, երբեմն հակածառում, իոկ հետո սկսեց արտասանել Մայակովսկու «Ըենին» պոեմից մի հատված։ Նա այնքան լավ էր արտասանում, որ ուսանողները այս ու այն կողմից նորից հավաքվեցին։ Նկատելի էր, թե Հասմիկը այդ բոպեին ինչպիսի հիացմունքով էր նայում Արշոյին, իսկ երբ վերջինս ավարտեց արտասանությունը, նա շատ հասարակ ու պարզ կերպով առաց։

— Գիտե՞ս, դու լավ աղա հա։

Արշոն այդպիսի հանկարծակի խոստովանությունից զարմացած, նայեց Հասմիկին ու շտապ հեռացավ։

Ուսանողներից ոմանք ծիծաղեցին։ Ամենից բարձր ծիծաղեց ինքը Հասմիկը և ինչ որ ծաղրական բան առաց ամաչկոտ Արշոյի հասցեին։

Բայց այս բոլորը Հասմիկի համար այնքան էլ հատկանշական չէին։ Օտար լեզվի և ոռւսաց լեզվի դասերին Հասմիկն ու Արշոն նստում էին իրար կողքի, ավելի ճշշտ՝ Հասմիկը նստում էր Արշոյի կողքին, վերջին նստարանի վրա։ Պապաշան լսում էր, իսկ նրանք երբեմն-երբեմն խոսքեր էին փոխանակում, այն էլ դասի մասին։ Մյուսների համեմատությամբ նրանք լեզվի առարկաներից սովորում էին գերազանց և այդ զասերին նրանց մեջ յուրահատուկ մտերմություն էր նկատվում։ Բայց անկախ գրանից իրար մոտ նստած ժամանակ էլ նրանք մի տեսակ լրջանում էին։ Մի խոսքով ուշադիր գիտողը կարող էր նկատել որ այդ երիտասարդների միջև ինչ որ բան կար, որ պետք է փռխարկվեր սիրային ոռմանի։

Բայց այդ ոռմանը սովորական իմաստով տեղի չունեցավ և նախքան այդ մասին պատմելը ես մի ուրիշ փոքրիկ գեղագություն։

Մի անգամ Հասմիկը գասամիջոցին շատ խորհրդավոր կերպով հարցրեց։

— Զե՞ր կարդացել Արշոյի բանաստեղծությունը։
Զէինք կարդացել

—Եկեք, եկեք կարւացեք:

Մենք դուրս եկանք միջանցք: Պատի թերթի շուրջը
մի խումբ ուստանողներ էին հավաքվել իսկ ինքը, Արշոն,
նստել էր լուսամռւտի գոզը և այրվող աչքերով նայում էր
հավաքվածներին: Մեղ տեսնելով նա ցած թռավ և մոտե-
ցավ:

Ես հիմա բերանացի չեմ հիշում այդ բանաստեղծու-
թյունը, բայց բովանդակությունը միտու է մնացել: Բանա-
տեղծը դիմում է Հայնեին:

Ես քեզ նման կը ջեմ Հարց լեռան վրա,

Ծաղիկներ կքաղեմ, զույնզգույն, չքնաղ ծաղիկներ,

Որոնեսզի երբ վայր իջնեմ սարից,

Փոեմ գրանք այն սազմիկների ոտների տակ, որոնք
կը արձբանան ազատագրելու քո Գերմանիան

Դարչնագույն մորեիսից:

—Ոնց որ իսկական բանաստեղծ լինես,—կատակով
տառց ուստանողներից մեկը:

—Ճիշտ, —ուրախ բզմավեց Արշոն և է՛լ ավելի կտր-
մբեց: Ձեռքերով զանազան շարժումներ անելով նա արագ-
արագ խոսում էր, ոգեսրվում, ծիծագում: Կարմիր և նուրբ
շրթունքների արանքից փայլում էին սպիտակ, ջանել ա-
տամները: Նա խոսում էր Գյոթեի և Հայնեի հումանիզմի
մասին, բերանացի արտասանեց թումանյանի՝ Հայնեից
կատարած թարգմանություններից մի քառյակ և ավելա-
ցրեց.

—Սքանչելի թարգմանություն է, չէ՞: Ու այդ ժամա-
նուկ մի շիռթված հայացք ձգեց Հասմիկին:

Հասմիկը անսովոր կերպով լուրջ նայում էր պատի
թերթին: Նրա դեմքի վրա մի տեսակ տարակուսանքի թի
ափառանքի արտահայտություն կար: Հետո նա դարձավ
Արշոյին և քերը վեր քաշելով, աշխատելով կատակե-
ռաց.

—Լավ կլիներ, որ բանաստեղծը, քանի որ նա տղա-
է, լիներ այդ ուազմիկների շարքերում, և ոչ թե ծաղիկներ
փոփոք նրանց ոտքերի տակ, այդ աղջիկներն էլ կանեին:

Արշոն լրջորեն գժգոհեց: Նա ասաց, որ բանաւտեղծը յուրահատուկ հոգի ունի, նա կարող է այդպիսի բան գրել բայց կյանքում լինել կուլողների առաջին շարքերում: Հասմիկը այնուամենայնիվ նրա նկարագրած բանաստեղծին անվանեց «փոքրիկ ու քնքուշ», որից վիրավորվեց Արշոն: Բայց պատահեց մի դեպք, որը լուրջ գժտության պատճառ դարձավ:

Միր կուրսում մի ոռւս տղա կար: Ասում են, որ Ալեքսեյը (այդպես էր նրա անունը) փախել էր իր խորթ մոռից և տառներկու տարեկան հասակում կամավոր մասել Կարմիր բանակ: Մի գորամաս որդեգրել էր նրան, գասակարակել և կըթության տվել: Քսաներեք տարեկան հասակում Ալեքսեյը ցանկություն էր հայտնել բարձրագույն կըթություն ստանալու: Նրան զորացրել էին և ուղարկել համալսարան: Ուսման երկորդ տարում մենք Ալեքսեին ընտրեցինք մեր կուրսի կոմսոմոլի կազմակերպիչ: Նա շատ կազմակերպված, գործունյա և ճարպիկ տղա էր: Նրա շնորհիվ կարճ ժամանակում ուժեղ կարգապահություն հաստատվեց մեր կուրսում: Անդամ աշխատող-սովորողները չէին բացակայում դասերից:

Բայց նա միայն կարգապահության հարցերով չէր զբաղվում: Մի քանի ուսանողներ վատ էին սովորում ուսուսաց լեզուն, միջնակարդ դպրոցը շատ քիչ բան էր տվել նրանց: Հասմիկը մեր կուրսի «սուսագետն» էր: Նա նույնիսկ Ալեքսեյից լավ դիտեր ուսուելեն: Եվ ահա Ալեքսեյը որոշել էր Հասմիկին կամերիտական պարտականություն տալ: Դասմերից գուրս Հասմիկը պետք է պարապեր ուսուելենից թույլ ուսանողների հետ և սուսերեն լեզվով պատի թերթ հրատարակեր:

Դասմիջոցին Ալեքսեյը երկար համոզում էր Հասմիկին, օրինակ էր բերում այն ուսանողներին, որոնք ժամանակ չունենալով, գասամիջոցներն էին օգտագործում ընկերներին որևէ կերպ օգնելու համար:

—Իսկ դու ժամանակ ունես, չես աշխատում, հասա-

բակական որևէ պարտականություն չես կատարում, — ասում
էր Ալեքսեյը:

Հասմիկը պատասխանելիս գլուխը ետ էր գցում, ծի-
ծաղում էր, իր անկաշկանդ շարժ ու ձեռքով ուշագրու-
թյուն էր գրավում:

— Ես ձեր ծառան եմ, ինչ է, — ասում էր նա, — զա ի՞նչ
դպրոցական մեթոդ է, ինձ որևէ մեկն օգնել է, որ ես սո-
վորել եմ: Ես գայակ դառնալու միտք չունեմ:

— Ի՞նչ — բարկացած ասաց Ալեքսեյը, — զու լմւրջ ես
խոսում, թե կատակ ես անում: Հետո վճռական տոնով ա-
վելացրեց.

— Կարձ ասած՝ զու հրաժարվում ես ընկերներիդ օգ-
նելուց: Այդ գեղքում մենք քեզ կազմակերպության միջոցով
կատիպենք:

Երկու օր հետո Ալեքսեյը դասամիջոցին մեզ հայտնեց,
որ դաներից հետո կոմսոմոլի ժողով է: Հայաքվեցինք մի
փոքրիկ լսարան: Ալեքսեյը ըստ իր սովորության պինջակը
ուսերին էր զցել լուրջ էր ու խստատես և իր ազգեցու-
թյունը գիտակցողի հմայք ուներ: Պետք է ավելացնել, որ
նա եկել էր գիտություն սովորելու և հասուն մարդու լըր-
ջությամբ էր վերաբերվում այդ գործին, բայց միհնույն
ժամանակ պարզ երեսում էր, որ նրա տարերքը մարդկանց
դեկավարելն է:

— Զես հասկանում, թե ընկեր կարախանյանն ի՞նչ
կարեոր գործեր ունի, որ համալսարանի հետ լրիվ չե կապ-
վում, — անցնելով Հասմիկի հարցին — ասաց Ալեքսեյը, —
դասերից բացակայում է, իսկ ընկերներին օգնելը համա-
մարում է ծառայություն: Ենթադրենք թե ծառայություն
է, — հանկարծ տաքացավ նա, — ինչու չպետք է ծառայել
ընդհանուր գործին: Դու ընդունակ մարդ ես, շատ լավ,
ուրախ ենք, օգնիր ընկերներից, որ նրանք եւ քեզ հաս-
նեն: Ինքդ հոգս չունես, ուրիշների հոգսերով էլ չես հետա-
քրքրվում: Օրը մեկի հետ զբանում ես, զբա համար ժա-
մանակ կա... Զենք ասում թե մի զբանիք, բայց...

Եվ Ալեքսեյը իր ասածները հիմնավորելու համար պատկառանքով ավելացրեց.

— Հենինն ասել է. « Զսպվածությունը սիրո մեջ անգամ սորկություն չէ »:

Ալեքսեյի ճառը բոլորին դուք եկավ: Այդ էր պատճառը, որ Հասմիկի ուելլիկները շատերին զղայնացըրին: Գրեթե յուրաքանչյուր նախադասությունից հետո Հասմիկը ընդհատում էր Ալեքսեյն, « Նորություն առա, ես այդ քեզ-նից լավ գիտեմ »:

Ժողովի ժամանակ Արշոն լուս նատել էր վերջին նստարանի վրա: Նա ուշադրությամբ, նույնիսկ հիացմունքով էր լուսմ Ալեքսեյին: Հասմիկին նա ուղղում նայում էր հետաքրքրությամբ, հետո զարմացած, ապա կարծես վրդովված: Նա ըստ երևույթին մինչ այդ չգիտեր, թե ինչ առեթով է քնննվում Հասմիկի հարցը:

Իր խոսքը վերջացնելուց հետո Ալեքսեյը ձայն տվեց Հասմիկին:

— Այսուղ ընկեր Ալեքսեյը հին կոնսպիկատով խոսեց, — այսպիս սկսեց Հասմիկը: — Համալսարանը խոմ միջնակարգ դպրոց չէ: Բարձրագույն դպրոց պետք է մտնեն այնպիսի մարդիկ, որոնք կարող են ինքնուրույն կերպով սովորել: Ի՞նչ է, աշակերտներ հո չեն, որ ես նըանց դաս տամ: Ել ուրիշ բան ու գործ չունեմ, ինչ է...

Տեղերից հավանության շնորհներ լովեցին: Ռւսանողներից մեկը, Փիզիկուլտուրնիկ Վարդգեսը, որ մազերը «բոքս» էր խուզում և ձմեռ-գարուն առանց վերաբերուի ու գլխարկի, իր Փիզիկուլտուրնիկի հավուստով ու ֆուտբոլիստի կոշիկներով էր համալսարան գալիս, պատուհանի մոտեց գլուխը բարձրացնելով ձայն տվեց.

— Այսինքն՝ այդ էլ է ճիշտ:

Այս խոսքի վրա Հասմիկը թեր առավ և հենց այդ էլ փչացրեց նրա գործը:

— Զեն կարող ոովորել՝ իրենց մվէ ինսպրել որ համալսարան մտնեն, իրենք տանջվեն, ուրիշներին էլ տանջեն:

Ես վարժուեի չեմ կարող դառնալ այն մարդկանց համար, որոնք ինձ հետ հավասար պայմաններում են և ուզում են հեշտ կերպով սրանքար օգնությամբ մի կերպ յուլա տաճել: Եվ վերջապես, ընկեր Ալեքսեյ, —շարունակեց Հասմիկը վկի մոտի զանգուրները թափ տալով և թեթևակի դառնալով դեպի Ալեքսեյը, —դուք ի զուր եք կարծում, որ ես ոչ մի գործ չունեմ, ես իմ գործի մասին ամենքին չեմ պատմելու:

Հասմիկը, ինչ խոսք, կարծես ինքն էլ զգաց, որ չափն անցնում է իր գործերի մասին խոսելով և գրանով իոկ ամբողջովին անկեղծ չէ: Այդ սպատճառով ձայնը ցածրացնելով և աչքերը ընկերներից մի բոպե փախցնելով գեղի պատռւճանը կամ սեղանը, շարունակեց.

—Ճիշտ է, զբանք մեծ գործեր չեն, բայց և այնպես պործեք են... Գիտեք, որ մայրս հիմանդ է, նույնիսկ եղբայրներիս շարերը ևս եմ լվանում ու հաբթուելում:

—Թաշկինակիները չմոռանաս, —ասաց մեկը հեղինանքով և ժողովականները քահարան ծիծաղնցին:

—Ասում են՝ օրը մեկի հետ ման ես զալիս, —չլսելով ժողովականներին նորից ձայնը բարձրացրեց Հասմիկը, այս գեղքում զգալով իր իրավացիությունը... —Համենայն գեղս ես օրը մեկի վրա չմա սիրահարվում, այնպես որ այսուել բոլորովին ճիշտ չեն: Եվ վերջապես...

Հասմիկը համարձակ ժեստով ծիռքն առաջ տարածեց և իրոնիկ ծիծաղով ըստ երկույթին ենթադրելով, թե իր վերջին խոսքերով կրածրացնի ընկերների տրամադրությունը և թերեւս հաղթանակ կնվաճի, ասաց.

—Դուցե ես վաղն ամուսնանում եմ, պիտի ասես չի կարելի, դա մեր գործին խանգարո՞ւմ է...

Հասմիկը չկարողացավ վերջացնել: Մեկի ոեալիկան և գրան հաջորդող ընդհանուր ծիծաղը ընդհատեցին նրան:

—Առանց մամային ու պանային հարցնելու չամուճնանաս, —ասաց այն երիտասարդը, որը վաստակել էր «պրոֆեսորի փեսա» անունը և այդ այն պատճառով, որ նա թեև իր տարիքից լուրջ տղա էր, շատ լավ էր պարա-

պում, բայց երբ տըսմաղբությունը լավ էր լինում, կամ ինչպես ուսանողներն էին ասում նրա հոսցեին, հանկարծակի «ջրիկանում» էր, ասում էր, որ ինքը փոքր ժամանակ երազել է պրոֆեսոր դասնալ և անպատճառ ամուսնալ պրոֆեսորի աղջկա հետ:

«Պրոֆեսորի փեսայի» ռեպլիկայի վրա վարդուշը, որը ընդունակ էր ծիծագել անգամ այն ժամանակ, երբ ոչ էր ստանում, ասած ինը փոթկացրեց: Շատերը հետեւցին նրան, Հասմիկը ինքն էլ ծիծագելով և ինչ որ ծաղրական խոռքեր ուղղելով «պրոֆեսորի փեսային», նստեց իր տեղը:

Հայոնի չէ, Արշոն վիրավորվեց ընկերների թեթևամիտ վերաբերմունքից, թե նրա զգայուն սիրութ հիառթափվել էր իր ընտրյալից: Բայց նա ձայն խնդրեց և կանգնեց տեղից, կարմրեց, մի բոտե չիմացավ ինչպես սկսեր ատա լուրջ և հուզված ասաց.

— Այսինքն ընկերներ, ինչպես էք ծիծաղում: Ի՞նչ վաստիան կա դրա միջ, որ ծնողներն իմանան, թե իրենց աղջեկը կամ տղան ում հետ են ամուսնանում: Հիմու ծնողների ու որդիների միջև առաջլա պես անլուծելի հակասություններ չկան: Մեղ չեն սովորեցնում չհարգել մեր ծնողներին, արհամարհել նրանց կարծիքը՝ կյանքում այդքան կարեոր մի հարց լուծելիս, ինչպիսին ամուսնությունն է:

Հասմիկը ուշադրությամբ լսում էր Արշոն, մինչդեռ մյուսները զարմացական բացականչություններ էին անում, ոմանք առանց ձայն խնդրելու առարկում էին Արշոնին, վիճում: Վերջում Հասմիկը ուրախ ու թեթիամիտ, բայց ինքնավստահ մի տոնով դարձավ գետի Արշոն.

— Լավ, ի՞նչ ես փելիսոփայում, իմ հարցն է քննովում, իմ մասին խոսիր, ես համոզված եմ, որ իմ ծնողները կը համաձայնվեն իմ ընտրության հետ:

— Այո, քո մասին,— զառնությումը և չգիտես ինչից վերջնականապես վիրավորված, աչքերը հեռացնելով Հասմիկից և ձեռքը ամուր սեղմելով գրքին, շարունակեց Ար-

շոն, —այսօր այնպիսի ապավորություն է ստացվում, թե
դու ոչ համաշարանը կարգին կավարտես, և ոչ էլ օրի-
նավոր կերպով կամուսնանաս: Ամբողջ հույսդ գորել ես ըն-
դունակություններիդ վրա, իսկ այստեղ ցույց սարքեցիր,
թե պարագում ես, ամուսնության մասին էլ խռոսում ես
առանց ամոթիսածության:

Հասմիկը կարմրեց և շփոթվեց: Հստ երևույթին այդ
հարվածը նրա համար անսպասելի էր և ծանր: Բայց մի
վայրկյան չանցած մրցման հրավիրողի պես համարձակ
ասաց.

—Իսկ դու և՛ կավերտես և՛ կամուսնանաս, ի՞նչ մեծ
բան... Բայց դու բանաստեղծ չես գտնա, այ թե ինչ:

Այստեղ էլ Արշան շփոթվեց, բայց նա չափազանց
հանգիստ ու հանդիսավոր, կարծես երդվում էր, ասաց.

—Ես իմ հայրենիքի արժանավոր քաղաքացի կը դառ-
նամ, զբանում կարող ես չկասկածել:

Ժողովը սկսել էր ավելի աղմկել: Չորս կողմից ձայն
էին խնդրում, միկը մյուսին ընդհատում էր, բայց այդ
աղմուկի միջից լսելի դարձավ և ուշադրություն գրավեց
նունիկի վիրավորված ձայնը:

Նունիկը ակտիվ կոմերիտունի էր, չափազանց ջանո-
սեր, թեև պահաս կարգացած: Նա սուսերենից թույլերի թը-
վումն էր և գտնում էր, որ օրակարգը իրեն էլ է վերաբերում,
և որ Հասմիկը ծաղրում է իրենց, տհառ է համարում: Իր
լայն ճակատից հետ տանելով հաստ և ուղիղ մաղերը ու-
նայելով միայն Ալեքսեին, Նունիկն ասաց.

—Ես մի քանիսի անունից կարող եմ ասել, որ մենք
այսպիսի ընկերոջ օդնությունը չենք խնդրում, մենք խըն-
դրելու սովոր էլ չենք, օրիորդ Հասմիկ դու քեզ այնքան
մի երեակայիր, իմացիր, որ եթե եկել ենք սովորելու, ու-
րեմն առանց քեզ էլ կսովորենք. լավ կանես, որ քո բարի
խորհուրդները քեզ համար պահես:

—Դու ի՞նչ ես վեր-վեր թոշում,—իրեն կորցրած ասաց
Հասմիկը:

Ժողովականներից մի մասն սկսեց աղմիկը: Ալեքսեյը
ձեռքով խփեց սեղանին:

—Նստեցեք, բոլորդ նստեցեք:

Եվ երբ հանկարծակի լուսթյուն տիրեց, Ալեքսեյը
անմիջապես օգտագործեց առէթը: Նա զիտեր, որ Հասմիկի
հետապա ներկայությունը թույլ չեր տալու մինչեւ վերջը
կանոնավոր տաճնելու ժողովը: Նա այժմ արգեն վարպետու-
րեն ձևացնելով, թե առաջվա պես հանգիստ է, հայացքը
վրջեց ժողովականների վրա և տռաց:

—Ընկեր Կարախանյանը իր վիրավորական արտա-
հայտություններով ու սեպլիկներով խանգարում է ժողովը:
առաջաբկություն կա նրան դուրս հրավիրել ժողովից:

—Համաձայն ենք,—բղավեցին մի քանիսը:

—Ի՞նչ իրավունքով—եռանդուն առարկում: Եր Հաս-
միկը, —իմ հարցն է քննվում, ինձ հետացնեք ժողովից:

—Ես քվեաբկում եմ, —պաշտպանելով իր միանգամայն
հանգիստ տոնը, շարունակեց Ալեքսեյը: —Ո՞վ է կողմ:

Բաղմաթիվ ձեռքեր համարձակ վեր պարզեցին. իսկ
ֆիզկուլտուրնիկ Վարդգեսը, նրա կողքին նստած մի զու-
նաստ տղա՝ Կոստյա անունով, որ զիտառ նվազելու մեջ
վարդես էր, «զրոֆեսորի վիճան» և մի քանի ուրիշներ՝
դեմ քվեաբկեցին:

Հասմիկը դուռը շրխկացնելով դուրս եկավ լսարանից:
Նրա բայցակայությամբ երկար վեճ սկսվեց այն մասին, թե
նկատողությունն պետք է անել Հասմիկ Կարախանյանին,
թե զգուշացում, բանավոր զգուշացում, թե գրավոր:

Քիչ անց դուռը բացվեց և երեաց Հասմիկի գեղեցիկ
գլուխը: Հասմիկը, թեև կամաց ու կարծես վախենալով բա-
ցեց դուռը, բայց ձայնն առաջվա պես համարձակ հնչեց.

—Ընկեր Ալեքսեյ, դուք պարտավոր եք ինձ թույլ
տալ ժողովին մասնակցելու: Վերջիվերջո ես կոմերիտական
եմ՝ թե չեմ:

Հասմիկն ուզում էր ներս մտնել:

— Ես կատարում եմ ժողովի որոշումը, — առաց Ալեքսեյը
և դուռը ծածկեց:

Եթե մենք ժողովից գումար եկանք, պատուհանի մոտ,
միջանցքում տեսանք Հասմիկին: Նա գլուխը ճենել էր
պատին և ճեկելում էր: Ոչ ոք չէր պատկերացնում, թե
Հասմիկին երբեցին կարելի էր տեսնել յաց լինելիս: Աղջիկ-
ներից մի երկուսը մոտեցան նրան միեթարական խոռքի ր
ասելու, իսկ Արշոն դիտմամբ զնաց պատի տակով և Հաս-
միկի կողքով անցնելիս առաց.

— Կոլեկտիվը հաղթեց, մենմի ես զգում քեզ...

Այս գեղքից հետո Հասմիկին ու Արշոն չէին խոսում
իրար հետ: Այդ ժողովի պատճառով էլ նրանց սոմանն ու
հնդադրվող ամուսնությունը մնաց օդից կախված:

Մի քանի որ անց, Ալեքսեյը կուրսի կոմերիտական-
ներին տեղեկացրեց, որ կամիտեն հաստատել է մեր ժողովի
որոշումը և պարագրել է Հասմիկին պարագել ուսանող-
ների հետ, ինչպես նաև պատի թիրթ հաստարակել: Ալեք-
սեյն առաց, որ Հասմիկը հաստատվել է թիրթի խմբագիր
և պահանջեց մնպնից օդնել Հասմիկին, կատարել նրա հանձ-
նարարությունները:

Հետեալ օրը, եթե մենք հավաքվել ենք Պատաշացի
շուրջը և շնորհավորում էինք նրա որդու ծնունդը, լսարան
մտավ Հասմիկը, ձեռքին մի ոլորած թուղթ: Նա մի բոսկ
լուրջ նայեց մեզ, հետո մոտեցավ Պատաշային ու բարձրա-
ձայն ծիծաղելով ձեռքը մեկնեց նրան:

— Շնորհավո՞ր, շնորհավո՞ր, — հետո հանկարծ սպառ-
անաց, — Զամարձակինը անուն դնել մինչև ես չգամ ձեր
տուն: Սփռու որ ամուսնացած չեմ, քավորակին կլինէի:

— Մի քիչ համեստ եղիր, ինտելիգենտ մարդ ես, —
Աջանալով տաց «պրոֆեսորի վեսան»:

— Տանել չեմ կարող քեզ նմաններին, որոնք շատ
լուրջ են, — պատասխանեց Հասմիկը՝ բայց այնուամենայնիվ՝
աջացավ և իր հնչուն ձայնով բարձր առաց.

— Պատի թերթի համար ոռւսերեն նյութեր կը երեք Պապաշա, դու մի հատ ուերուս թիվիր, հաշիմերի հետ լավ ես: Ընկեր ժուռանալիստկա,—դիմելով ինձ առաջ նա, —դու էլ կերմանառվի երեկոյի մասին մի բան զրիր, ընկեր նունիկը —իրանիայով շարունակեց նա.—դու էլ զրիր, թե ինչպիսի դժվարությունների ես հանգիպում ոռւսերեն դասերդ սպարապելիս: Ընկեր Ալեքսեյ, առաջնորդողը չմոռանաւ:

Հասմիկը նայեց Արշոյին, կարծես ուզում էր նրան էլ մի բան ասել բայց չասաց, այլ շրջվեց ու դուրս եկավ լսարանից:

Մենք չիբավպորվեցինք Հասմիկից, անդամ նունիկը կարծեմ ներել էր նրան Հասմիկի պարզ, յաւրայինի տոնը հարազատ էր ընկերներին Ալեքսեյն էլ ուրախ էր Հասմիկի մեջ «հասարակական» ջիղ հայանարերելու համար և խորամանկ ժուռում էր, երբ Հասմիկը հանձնարարություններ էր անում ուստանողներին, կամ պարագմունքների ժամել էր նշանակում: Բայց Հասմիկի մեջ կատարված փոփոխության առթիվ ուրախացել էր նաև Արշոն: Նա տեղից վեր թռչելով բացականչեց:

— Կեցցես, դործի է անցել ես էլ մի բանաստեղծություն կզբամ թերթին:

Հասմիկը չմեց այդ խոսքերը: Նրանք շարունակում էին խոսվ պահել: Հասմիկը միայն նրա հետ էր, որ չէր հաշտվում, ցասումնալիք հայացքներ էր նետում նրան, երբեմն էլ աշխատում էր ձեւացներ թե արհամարհում է, իսկ Արշոն խոցվելով այդ վերաբերմունքից, սկսել էր նույն ձևով պատասխանել Հասմիկին:

Բայց նրանց ամուսնությունը այնուամենայնիվ տեղի ունեցավ:

1941 թվի աշնանը, երբ մենք նորից դասի հավաքավեցինք, տղաներից շատերը, որոնց թվում Սլեքսեյը, Վարդգեսը, «Արոֆեսորի փեսան» արդեն սազմաճակատ էին մեկնել: Արքան մենք զարմացանք, երբ լսեցինք, որ Պատղաշան մինչև պատերազմն էլ բարձր հրամանաւարի կոչում էր ունեցել, կովկասի էր Խալխին-Գյոլում և այժմ հենց առաջին օրը բանակ էր զորակոչվել: Մեր կուրսի աղջիկներից մի քանիսը, վաղգուշը, Նունիկը, ավաբանի էին բըժշկական քույրերի կարճատես դասընթացները և նույնպես կամավոր կերպով բանակ էին զնացել: Աշխատող-սովորողներն սկսել էին շատ վատ հաճախել դասերին: Համալրաբանը ախուր տպավորություն էր թողնում: Դասամիջոցներին առաջվագես ուրախ աղմուկ չեր լսում, թևանցուկ զբունողները միջանցքում հատ ու կենտ էին: Դրսում Երևանի սեպտեմբերյան արեգ դեռ կիզում էր զետինը, իսկ մեզ թվում էր: Թե աշնանային մանր, անընդհատ անձրեւ է մաղում:

Մնացողներս թեև առաջվագես լսում էինք դասախոսությունները, բայց հաճախ զարմանքով հարց էինք տալիս իրար, «մերգյուք սովորելու ժամանակ է, չի՞ լինի, որ համալսարանը փակեն և բալորիս ուղարկեն սազմաճակատ»: Երկար ժամանակ սովորելու վրա նայում էինք որպես մի երկրորդական գործի, որ անհասկանալի պատճառներով մեր վզին էին փաթթել: Տարօրինակ էր թվում, որ մեր ընկերները գնացել էին Հայրենիքը պաշտպաններու, իսկ մենք հանգիստ խղճով պետք է ջարունակեինք սովորել: Պետք էր տեսնել, թե ինչպիսի ընդունելություն գտավ ուսանողներից մեկի այն առաջարկը ժողովում, թե պետք է թողնենք համալսարանը և զնանք կոլխոզների բերքը հավաքենք: Բայց մեզ այդ թույլ չտվին:

Կուրսում մնացած տղաների մի մասը, որոնց թվում Արշոն, ամեն օր սպասում էին, որ իրենց սազմական կոմիսարիատ կկանչեն և բանակ կուրպարկեն: Երանք գալիս էին համալսարան միայն նրա համար, որ դասամիջոցներին միմիանց հաղորդեն պատերազմական նորությունները, վե-

Ճեն միջազգային հարցերի շուրջը, իսկ հաճախ էլ դասերին չէին մասնակցում:

Բայց կային և այնպիսի ուսունողներ, որոնք զարժանում էին մեզ վրա: Օրինակ մի կարմահասակ աղջիկ կար մեր կուրսում, որը երբեք չէր խոսում պատերազմի մասին և ինչպես միշտ, հանգիստ պարագում էր: Նրա մատիկը ընկերուն հին հույսունակես, լույլ առջած սպիտակամորթ մի գեր կին հավատացնում էր, թե պատերազմը մի քանի ամսությ կը վերջանա և ժամանակ կորցնելու կարիք չկա: Նա ևս ավելի ջանասեր էր զարձել մանավանդ, որ գերազանցիկ ուսունողների թիվը պահանջել էր և ըստը թվանշաններ ստանալու հավանականությունը ավելացել էր նրա համար:

Հասմիկն այդ օրերին տեսնդային էր զարձել: Դասումիջոցներին չէր երևում, երբեմն էլ զատերից «փախչում» էր: Այսուամենայնիվ երբ հայտնվում էր գասին ինչի մասին են խոսել ինչ թեմա են անցել զոտախոսները: Նախորդ տարիվանից նա մի պարագ ուներ: Մի օր եկավ այն հույսով, թե անմիջապես քննություն կտա ու կանցնի, որովհետև պատերազմի պահանառով նրա կարծիքով պահանջներն էլ պետք է որ իրաւութիւնն իմացավ, որ «պրոֆեսորների վրա պատերազմը չի ազգել», հայտարարեց, թե գրադարանից զիրք կվերցնի ու մի շաբաթ տանը կվարապի: Սակայն նրա անհանգիստ բնավորությունը ըստ երևացթիւն թույլ չէր տալիս տանը նստելու: Մի զարաթը գարեավ երկուակի երկուակիք, Հասմիկը զեռ քննությունը չէր տվել ու դրա համար էլ ավելի անհանգիստ էր: Բայց նա հիմա ավելի եռանգուն կերպով էր զբաղվում իր պատի թերթով և միայն զանդաւում էր, որ «հիմա ուսունողները կարգին քան չեն զրում»: Մի անգամ, երբ հողված ստանալու գործում անհաջորդության էր մասնվել: Նա բարձրածայն ասում էր:

—Ի՞նչ է, կարծում էիք ևս չէ՞ կարող թվանշանների հետեւց ընկներ իսկի էլ չէի զրադի պատի թերթով, եթե

չմիներ Ալեքսեի հիշատակը: Այս, թե Փրոնտ գնացած չէր
լինի, ամեն ինչ կղցեի նրա վրա ու միայն զասերս կըպա-
րապեի:

Մի օր էլ հկավ առաջին ժամը դեռ չսկսված և խըն-
դրեց ընկերություն չունեմ գիրք կարգավու, առաջին
անգամ կյանքումս տեսրով, էն էլ ուրիշի («ուրիշի» բառը
նա դառնությամբ շեշտեց) տեսրով պետք է պարապեմ:

Իսկ երեկոյան քննություն տվեց և լսարան մանելով
կանչեց.

—Պատերազմի ժամանակ երեքն էլ հերիք է, մի բան
որ «միջնադարն» ուսիրից ընկավ: Առ կարծես իսկապես
թեթևացած քայլնց գեղագիւղուու:

Արշոն ախուր նայեց նրա հետեւյց և մոռանալով, որ
ինքը սովորաբար ավելի կոպիտ էր խոսում Հասմիկի հաս-
ցեին, ափսոսանքով ասաց.

—Պատերազմը շփոթել է աղջկան:

Այս խոռքերի վրա Հասմիկը գուան մոտից ետ դարձավ
և հայացքը սկսեց Արշոին: Նրա ոչ այնքան խոշոր, շա-
գանակագույն աշքերից կայծեր էին ցայտում:

—Քեզ չեն խնդրում, որ իմ մասին հոգ տանեա: Պա-
տերազմը քեզ է շփոթեցրել Ուրիշների նման հիմա դու
էլ պետք է Փրոնտում լինեիր:

Արշոն զարմացած, բայց ինչոր հիացմանքով և ինչ-
պես առաջներում՝ Հասմիկի հետ խոսելիս լրջանալով ասաց:

—Ինչ արած, ինձ դեռ չեն կանչել երբ որ կանչեն,
կգնամ:

—Թող կամափոր գնայիր, իմ եղբայրներս առաջին
օրը զնացին, առանց կանչելու, միայն ժողովներում ճառ
տաել գիտես:

Նա շըջվեց ու հարաս, համաշափ քայլվածքով, գե-
տինը գովիելով, գուրս գնաց:

Երբ զանգը հնչեց, նա ներս եկավ, բայց հակառակ իր
սովորության նստեց ոչ թե աղաներից որևէ մեկի մոտ,

այլ իմ և գեղեցիկ ժպտացող կնոջ կողքին։ Հասմիւ-
կը պունատվել էր։ Դրանից նրա ճակատն էլ ավելի սպի-
տակ ու գեղեցիկ էր երևում։ Նա հետ տվեց վզից իր երկար
գանգուրները, արձակեց նուրբ, վարդագույն շըջազդեստի
վզի մոտ դասավորված մի երկու կոճակը և մի փոքր հան-
դատանալով չզիտես ինչ մտքերից ու հույզերից, իմ ձեռ-
քից առանց թույլտվության վերցրեց մատիտը և սկսեց
ինչ-ոք նկարել սեղանի վրա։ Հետո մատիտը տվեց ինձ,
բայց ծնոտը և լուրջ լսելու դիրք ընդունեց։ Բայց այդ
էլ չօգնեց և նա դարձավ ինձ ու հարցրեց։

—Կարողանեմ ես լսել։

Ես ուսերս թոթվեցի։ Պարձենալ չեի կարող, ես նույն-
պիս դժվարությամբ էի կենարոնանում։

—Ես չեմ կենարընանում, պետք է մի բան անեմ, —
ասաց Հասմիկը, —միմիայն դասերով կյանքս չի լցվում։
Ինձ թվում է, թե մենք էստեղ զլուխ ենք պահում, մի
տեղ արյունահեղ կուիլ են մղում, մյուս տեղը հանգիստ
նստած սովորում են, կարծես պատերազմը մի մասին վե-
րաբերում է, մյուսին՝ ոչ։

Մի բողէ լսելուց հետո նա դարձավ կամացուկ հար-
ցրեց։

—Նունիկից ու Վազգուշից նամակ կա։

Ես ասացի, որ նրանք առայժմ Հայաստանում են,
բայց հայտնի չէ որտեղ, որովհետև նրանք գրում են փոս-
տային հասցեով։

—Երանի նրանց, ես էլ հետները մի քանի օր քույ-
րական կուրսեր գնացի, բայց որբակտիկայի ժամանակ
հիմանդրանցում ուշաթափվեցի։ Բժիշկն ասաց, որ ես քույր
չեմ կարող լինել տեսնես ինչո՞ց է, միթե ես քաղքենի եմ։
Բայց ինձ թվում է, որ քրոնտում լավ կլինեմ, ես վախ-
կոս չեմ, մի խոսքով որոշել եմ կամավոր գնալ։

—Որ ինչ անես, —դեպի Հասմիկը դարձավ իմ կողքին
նստած մաքրությունից առաջվա պես փայլող կինը, որը

անգամ իր հեղահամբույցը ժողովակին ավելացրեց հեղնանշքի ինչոր արտահայտություն:

—Մի բան կանեմ, քիչ բան կա անելու, —տարակուսանքի թեթև շեշտով պատասխանեց Հառմիկը:

—Երեսի ուզում ես գրոնտ գնալ միայն նրա համար, որ տաեն, իսկական հայրենասեր ես: Ուզում ես բանակին օդներ այստեղ օգնիր, կանանց համար թիկունքում ավելի շատ գործ կճարվի:

—Օրինակ, ինչ գործ:

—Առայժմ լավ սովորել իսկ հետո կյանքը ինքը կասպի թե ինչ պետք է անելը Ասենք թե բոլորը քեզ նման մտածելով ֆրոնտ գնան, մի պետք է բանակի կարիքները հոգա:

Հառմիկը ուշադրությամբ նայում էր խոսակցին, հետո թեքվեց դեպի ինձ և ականջիս փսխաց.

—Զգացմունքներից աղքատ է, բայց ինչը ունի, հը...

Այդ օրերին ոռ մի անգամ էլ ներկա եղա Արշոյի և Հառմիկի հանդիպմանը: Արշոն զուրս եկավ գահինից, որակեղ կոմերիտական ժողով էր և հեալով ցած էր իջնում ունդուխքներից: Զեռքը ամուր խիփելով ճաղին, նա կանգ տառվ և սկսեց արագ-արագ խոսել: Արշոն դժգոհ էր այն բանից, որ ժողովի նախագահության մեջ նստած մի աղջիկ իրեն լավ չեր պահում, որ ժողովականների մի մասը գաղափար չունի այս պատերազմի մասին և պահում է իրեն բոլորովին ոչ այնպես, ինչպես պետք է:

—Այ թե Ալեքսեյն էստեղ կլիներ, —ջղածգորեն ձեռքերը արսցելով շարունակեց նա, —ինչու նո նրանց հետ կամավոր չփնացի... Վաչե, դե շուտ արի, —բղավից նա մի աղջիկ, որ նույնպես զուրս էր եկել գահինից և շտապ ցած էր իջնում: Արշոն բանեց նրա թել և վազեց գեպի զիմավոր մուտքը, որ բացվում էր փողոցի վրա և համարյաց զաների մեջ հանդիպելով Հառմիկին, կանգ տառվ: Հառմիկը նույնպես ինքնաբերաբար կանգնեց: Նրանք մի բոպե սպասողաբար իրար էին նայում, հետո Արշոն պոկլեց տե-

զից ու միայն հետանալով ձեռքը բարձրացրեց օդի մեջ և
հրաժեշտի շարժում անելով ասաց,

—Մնաս բարով, Հասմիկ:

Հասմիկը զունատավեց ու արձանացավ տեղում, իսկ
մի վայրկյան հետո զարձավ ինձ ու կարծես երազի մեջ
հարցրեց.

—Գնացի՞ն...

Երկու տարի անցավ այդ օրվանից: Համալսարանի
ընկերներից շատերի հերոսական մահվան լուբն ստացվեց:
Պատմում էին, որ Աղեքսեն ընկել է իր զորամտուր գրոհի
առաջնորդելիս և վերջին բողիքին խնդրել է աանիտարուհի
ընկերոջից հանել իր զրադանից վազուց մահացած մոր նը-
կարը և բանել իր աչքերի առաջ: Տղաներից շատերը մի քանի
օրով եկան, զբաննեցին իրենց սիրած աղջիկների հետ ու
նորից սազմանակատ վերադարձան: Շատերից ըոլորովին
տեղիկություն չկար:

Մենք արդեն ավտրատական քննություններ էինք տա-
լիս: Չաենանված ուրախ օրեր էինք ապրում, լսելով մեր
զորքերի հաղթական առաջնադաշտացման մասին դեպի արեա-
մուտք:

Մի օր համալսարանում տեսա Հասմիկին: Նա նիշա-
րել էր և գունատավել, խուսափում էր մեղ հետ խոսելուց:
Յանկություն էր լինում մխիթարել Հասմիկին, որովհետեւ
ըոլորս արդեն գիտեինք, որ նրա կրտսեր եղբայրը, որով
նա այնքան հպարտանում էր առաջներում, վերադարձել
էր ստաք կտրված: Բայց Հասմիկի բնավորությունը չէր
հանդուրժում մխիթարություն: Հասմիկը չէր սիրում, որ
իրեն խղճան: Նա առաջվա պես հպարտ էր քայլում, իսկ
տիրությունը մի առանձին հմայք էր ատլիս նրա գեղեց-
կությանը: Հասմիկն այժմ ավելի բարեխիղճ էր գարձել
դեպի զատերը: Կարճ ժամանակավ, երբեմն նույնիսկ ըովե-
ներով գալիս էր ընթերցարանը, կարդում էր, գրանցում՝

ներ անում և ասկա շտառ գուրս էր զալիս: Աչ ինքն էր խսում, ոչ առիթ էր առլիս, որ մենք խսենք:

Ֆիզկուլտուրնիկ Վարդգևսը, որն արգեն վերավորված վերադարձել էր պազմաճակատից, բայ երկույթին տնոյակ չէր Հասմիկի գործառությանը: Մի անգամ նա կանգնեցրեց Հասմիկին միջանցքում և հարցրեց թե ուր է այդպիս շտառ պատում նա, կարծես թե ավելի կարեռ գործեր ունի քան պետական քննությունները և ավելացրեց, որ Հասմիկը շատ է փոխվել բոլորովին փոխվել է:

Հասմիկը պատասխանեց նրան այնպես, կարծես ոչ մի տառանձին բան չէր պատահել այսինքն իր առաջվարշույթ, առերևոյթ ուրախ, իսկ ներքուստ մտերմական տառով: Յույց տալով նա ասաց.

— Սրանք, այս մայրիկներն ինձ չնասան, բայց ես սրանց հաստ, աշխատում եմ, հիմա մեր տան աշխատողը ես եմ:

Մի ուրիշ անգամ ես նրան տեսա այն լսարանի առաջ, որտեղ մենք նախորդ օրը քննություն էինք ավել Հասմիկը մեջքով հենվել էր պատին: Գիրքը սեղմել ծնոտին և մտածելու նայում էր իր ոտքների առաջ: Դիմացի լուսամուտից ներս ընկած ամառային բարկ արել ճառագայթ՝ ները ամբողջովին իրենց զիրքն էին առել նրա իրանը, բայց Հասմիկն ըստ երկույթին չէր դպում այդ:

— Քննություն ես տալիս, Հասմիկ:

— Բա ինչ էիս կարծում, հանկարծ ոթավվելով և երեկ վիրավորվելով իմ կարևորական տօնից, պատասխանեց Հասմիկը՝ զարծիս անունն ինչ է: Օւ անմիջապես լսարան մատու:

Ինձ համար գաղանիք չէր, որ Հասմիկը առանձին գեղքերում կոպիտ էր, բայց այս դեպքում նրա տօնի մեջ ոչ թե այդ կոպտությունն զգացվեց, այլ ծաղր իմ թերահավատության նկատմամբ և քաղաքիված վիշտ:

Անցավ կես ժամ կամ մի քիչ ավելի և Հասմիկը դուրս եկավ լսարանից կարմրած և ուրախ: Ես պրզեն չէի կաս-

կածում, որ նա լով թվանշան է ստացել, այնուամենայնիվ հարցը ի.

— Ի՞նչ ստացար:

— Հինգ, —ուրախ պատասխանեց նա, բայց իր փոքրիկ սեղիկուն ու գերքը թեի տակ, իսկ մատները ամառային շրջազդեստի նորածն զբանների մեջ դնելով, հանկարծ առաջվա պես մտածելու դարձալ ու մեղմ իրոնիայով հարցեց,

— Հետաքրքիր է, դմւք ինչ բանի էք, ամեն մեկն իր թվանշանի համար, չէ՞ հապա ինչմւ առաջվա պես ընկերություն չեք անում:

— Դու մեր ընկերության կարիքը չես զգում կարծեմ...

— Եսու հասաչեց Հասմիկը — և թերես չեմ զգում, ինձ համար ինչ կա, ճիշտ որ գժվար բան է համալսարան ավարտելը, բայց ոչինչ, ինչպես երեսում է, բոլոր քննությունները կտամ, և էլ ձեզ նման որոշել եմ չնահանջել:

— Ինչի՞ մասին է խոսքդ:

— Ոչինչ, մի բան կա, ինարկե, բայց չեմ ուզում ասել...

— Նիհարել ես:

— Դիտեմ, — անփույթ պարզությամբ ասաց Հասմիկը, — երբեմն գանությամբ եմ հիշում այդ մասին, բայց առաջվա պես չեմ վախենում: Զարմանալի բան է, հիմա չեմ մտածում գուր գալու մասին, ընդհակառակը, բժամինդիք եմ գարձել աղաների նկատմամբ, եթե գուր չեն գալիս, ընկերություն էլ չեմ անում... երեք դա նրանից է, որ լավերն այնտեղ են...

— Իսկ ինչ է պատահել որ ընկերության մասին ևս խոսում...

— Ոչինչ — գարձյալ աշխատելով անփույթ ձևանալ ասաց նա, բայց ինձ մի լով նայելուց հետո հանկարծ փոխեց իր որոշումը:

— Մի թեթև հոգս ունեմ:

— Դե լավ է, որ վիշտ չէ, այլ հոգս:

Առաջին անգամ ես Հասմիկի դիմքին զարմանք և չը-

Թաղցրած թախիծ նկատեցի: Նա տիսուր տարակուսանքով
ինձ էր նայում, կարծես ուզում էր որոշել թե ինքը վիշտ
ունի, թե հոգս: Նա կարծեա ինքնամսուացության մեջ բռո-
նց թես ու դանդաղ փոխելով քայլերը հարցրեց.

— Արշոյին հիշմում ես...

— Մեր Արշոյին, ինչպես թե...

Մենք արդեն իջնում էինք սանդուխքներով: Հաս-
միշը լուս էր և թվում էր, թե այլիս չի ուզում խոսել,
բայց ես զգում էի, որ նա բացատրվելու կարիք ունի:

— Հիշմում ես, — զլուխն ուզգելով ասաց Հասմիշը, եթք
մենք հասանք վերջին սանդուխքին և պետք է գնայինք
տարբեր ուզգություններով: Ոնց էինք ամեն անզամ խե-
թում իրար... Չեմ հիշում, որ մի քնքուշ խոսք լսած կամ
առած լինեմ նրան... իսկ հիմա...

— Հիմա ի՞նչ...

Հասմիշին իր ոեղիկուլից երկու նամակ հանեց և մեկ-
նաց ինձ:

Ես հենց ձեռագրից ճանաչեցի այդ նամակներից ա-
ռաջինի հեղինակին: Իմ առաջ անմիջապես պատկերացավ
Պատաշայի արմունկը, որ զրելու ժամանակ վեր էր բար-
ձրանում: Պատաշան երախտագիտությամբ լի մի նամակ էր
որել Հասմիշին: Նա շնորհակալություն էր հայտնում Հաս-
միշին այն բանի համար, որ վերջինս օգնել է նրա ընտա-
նեքին վառելիք և երեխաների համար հագուստ ձեռք
բերելու համար որ նա պարապում է իր տղայի հետ, որի
շնորհիվ փոքրիկը սուսերենից դերազանց է սատցել և որ
այս ամենը այնպիս էր ազգել իր՝ զինվորի և հոր վրա, որ
չգիտի, թե ինչպես արտահայտի իր երախտագիտությունը:

Նամակի վերջում, ըստ երեսլյթին դուշակելով, թե
ինչը կարող է ամենից շատ ուրախացնել Հասմիշին, Պա-
տաշան խորամանկորեն ավելացրել էր.

«Ես մեծ դժվարությամբ, բայց և այնպիս իմացա մեր
Արշոյի հասցեն և նրան նամակ զրեցի, որտեղ զրել էի
նաև քո մասին: Արշոյից մի ողելունչ պատասխան ստացաւ

Այդաեղ նա զրել էր, որ ինքը հիմա է քեզ վերջնականապես համկանում և բազմակետեր է զրել նոստացել է մի ուրիշ առիթով «կրկին վերադառնալ քո հարցին», եթե զրական պատասխան ստանա: Արշոյից մի նամակ ստանալն ինձ համար մի կատարյալ տոն էր: Զգիտեմ, որ գիտեմ, թե չէ, որ հսնրան շատ եմ սիրում, և ցանկանում եմ, որ ձեր նամակազրությունից էլ մի լավ բան դուրս գան:

Մյուսը Արշոյի նամակն էր:

«Հասմիկ! —զրում էր Արշոն, —չեմ թագյնում, որ համակբանքի հետ մեկտեղ, ևս երբեմն հակակրանք եմ զգացել քո նկատմամբ ինձ թվում էր, թե զու գժվարության դիմանալու, անձնազոհության ընդունակ չեն: Պուցե զու հիմա էլ այս տօղերը կարգավիս զայրանում ես և առում: Փինչեւ ես զրում, մի է այդ քեզ ինդքելու: Բայց համբերիք մի բողեւ Պապաշայի նամակն ստանալուց հետո իմ համակրանքը քո նկատմամբ այնքան ավելացավ, որ սերս կը կնապատակեց: Դու ընտանիք ես կերպակրում, Պապաշայի ընտանիքին ես օդնում, և միննույն ժամանակ լավ ես սովորում, այդպիս էր զրել Պապաշան Այստեղ, սապմաճակառում, այդպիսի բաները, հոտեկապիս ընտանիք պահելը շատ բարձր է գնահատվում: Եթե դինվոր չինսիք և դու էլ առաջլաւ «անարխիստը» մնայիր, զուցե երբեք չըացարվիիք»:

Այնուհետև Արշոն զրում էր, որ հիմա երբեմն մարտում, երբեմն հանգստի ժամին լուսմ է Հասմիկի ձայնը՝ արդին մեղմ, սիրաշունչ երբեմն էլ թվում է, թե Հասմիկի զլուխը իր կրծքին է փարզում, և մեղմ շոյում է այտերնու: Նորից նա հեռանում է, անեանում, և ինքը ինչոք հեռվում բարձրության վրա տեսնում է Հասմիկի առլեռիկ ֆիգուրան, որ ձեռքը պարզած կանչում է դինվորին և իր հնչեղ ձայնով առում է նրան «սպասում եմ քեզ»:

Ես չէի կասկածում, որ Հասմիկը զրական պատասխան կզրի և մտքովս անցավ, որ երեի նույն բառերով է պա-

տառիսանել՝ «Սովորում եմ քեզ»: Բայց ինչժամ էր Հասմիկն այդպիս տիտր նայում ինձ:

—Դու նամակի ամսաթիվը չնայեցիր,—ասոց Հասմիկը գուշակելով իմ մոքերը և ցանկանալով հասկացնել որ ոճնժումանակ եմ ուրախանում:

Իսկապես, Արշոյի նամակը գրված էր ուղիղ ինը ամբողջ:

—Նոր նամակ չկտ...

—Դա տառջինն է և վերջինը: Բայց ռարսափելին այդ չէ:—շարսնակեց Հասմիկը:—Այս նամակն սահմանալուց մի շաբաթ հետո, երբ ևս Պալաշայինց տանը պարապում էի նրա երեխայի հետ, ոյնտեղ եկավ Արշոյի մայրը: Կանգնել ու երկար նայում էր ինձ, հետո հանկարծ հեկնկալով փառթաթիվը ու սկսեց համբուրել մագերս, ճակատս... «Իմ հարսն ես գու, իմ բալիկն ես, Արշոս քո մասին գըել է, խնդրել է, որ տեսնեմ քեզ, խոսեմ հետդ»: Մի խոսքով Արշոն հավատարիմ է մնացել իր ոկզրունքներին, ինձ հեռակա կերպով ծանոթացրել է մոր հետ: Դե ինձ էլ ինչ էր սրակաս: Վեր կացա ու պնացի նրանց տուն: Սկզբում մեկմեկ էի գնում, իսկ հիմա շատ հաճախ: Մեղքս գալիս է պատավին: Ասում է, քանի որ գու տուն ես գալիս, ևս զիտեմ, որ Արշոս կդա, անպատճառ կդա, որ գնում ես տունը կարծես գտառարկվում է, ինչպես Արշոյիս գնալու ժամանակ: Երբեմն պարապում եմ Արշոյի պատեզանի մոտ, կարգում եմ նրա ժըստ հիշողությունները, բայց զըրբանք էլ բավական են նրան համար համար եռ հիմա եմ զլիսի ընկնում, թե ինչու էինք մենք այնքան հաճախի ընդհարվում: Ամեն մնկո ուզում էր, որ իր սիրած մորդը կատարելություն լինի:

Մի բովե լուսթյուն տիրեց: Ես նայեցի Հասմիկն: Ինձ թվաց, թե նրա աշքերը լիքն են: Մի կողմ նայելով, որպեսզի թաքցնի ինձնից արցունքները, Հասմիկն ասոց:

—Գոնե նամակս ստացած լինեմ, իմանար որ ես սպառում եմ իրեն:

Այս խոռահցությունը տեղի ունեցավ 1943 թվի ամսանը, իսկ 1944 թվի վաղ գարնանային մի օր քաղաքի կենտրոնական փողոցում ևս հանդիպեցի Արշոյին։ Արդեն լսել էի, որ նա ուղղականակատից եկած պատզամավորության մեջ է, բայց չէի տեսել։ Նա բռնել էր ձեռքս և ոչինչ չէր կարողանում ասել, ինչպես և ես նրան։ Շատ բան կար հարցնելու, բայց ինչպես պատահում է նման գեղքեցիում, չդիտեի ինչից և ինչպես սկսել։ Երկի նա էլ նույն վիճակումն էր։ Վերջապես Արշոյն ժպագ դրությունը գիտակցող հասուն մարդու ժպիտով և այդ ժամանակ ես լավ նայեցի նրան ու տեսա, թե որքան է փոխվել։ Սևացած, առողջ դեմքի վբա փայլուն աչքերը մեկ կացճկլտում էին, մեկ էլ կարծես հանգիստ որոնելով հանգչում էին մի կետի, նա մի քանի շքանշան ու մեղալ ուներ։ Դրանցից մեկի վրա ես բարձրաձայն կարդացի, «Գերազանց հետախույզ»։ Ել կարծեմ դա իմ առած առաջին խոռքն էր։

—Ես էլ ամենից շատ սրանով եմ հպատականում։ Լավ հետախույզը երբեմն որոշում է զորամասի բախտը։ Լավ, թողնենք այդ։ Այժմ առա, ինչ լուր կա մեր կուրսի աղաներից, —հանկարծ խոռքը փոխեց Արշոյն։

Ես գեռ մտածում էի, թե ինչ պատասխանեմ, երբ նա արագ վրա բերեց։

—Ալեքսեյը նամակ զբան է, նրանից որևէ տեղեկություն ունեմ։

Ես մեր կուրսի աղաների մասին լսել էի թե ուրախ և թե ախուր լսւելու հայց որպեսզի տխուր բաների մասին պատմելու առիթ չտամ, ուրախ բաների մասին հիշեցի միայն և խուսափում էի որևէ բան հաղորդել մտնավանդ Ալեքսեյի մասին։ Գիտեի, որ նա Ալեքսեյին մի քիչ իդեալականացնում էր զեռ առաջներում և հիմա շատ կտիրեր, եթե իմանար նրա մահվան լուրը։

—Ինչքմն ժամանակով է եկել ձեր պատզամավորությունը, ուղղականակատում մեր ծանոթներից մեմ եք տեսել —հարցը ես։

— Երեխ մի տաս օր կմնանք, թեև ճիշտ առած, կուզեի-
երկար մնալ: Բացի այն, որ կարուել էի երևանի հողին,
ջրին, այս զմայլելի գարնանային օդին, եկածս օրն էլ
ամուսնացաւ:

— Խոկապես, մեմ հետ, — կեզծ զարմանքով հարցըրի նոտ-
Արշոն այդ ժամանակ հեռուն էր նայում և ինչ-որ
մեկին երջանիկ ժպտում էր: Ես էլ այն կողմը նայեցի:

Իր հաղթական քայլված քով, ժպիտը դեմքին մեզ էր
մոտենում զեղեցկունի Հասմիկը: Նա բարեկց միայն ինձ,
որովհետեւ Արշոյին երևի նոր չէր տեսնում, և իր սովորու-
թյան հակառակ՝ խոսք չկտնելով, կարմրեց ու կանգնեց
Արշոյի կողքին: Վերջինս մտերմական քնքությամբ և մի
տեսակ հետաքրքրությամբ դիտում էր Հասմիկին: Երևի
հիանում էր իր «ընության հբաշքով», հետո շոյեց նըա-
մազերն ու տասաց.

— Այսօր ավելի հետաքրքիր ես:

— Շնորհակալություն կոմպլիմենտի համար, զործերդ
պլրձմբ:

Այդ ժամանակ Արշոն հանկարծ մի բան հիշելով դար-
ձավ ինձ.

— Ինչպես է որ չես զարմանում մեր այսովհի մաս
հարաբերությունների վրա, ես Հասմիկի հետ եմ ամռու-
նացել.

— Գիտեմ, գիտեմ, — ասացի ես նրանց շուտ աղատելու-
ցանկությամբ: — Ես ձեզ վաղուց հմ շնորհավորել, միայն
թե ասա, դու ուազմանակատից ես դալիս, զուցե որիէ բան
ավելի գիտեմ, ոլատերազմը Ի՞րը կվերջանա, ձեր ուղղու-
թյունը մըն է, դուք մրտեղ եք կանգ առնելու:

— Պատերազմը Ի՞րը կը վերջանա, էդ չեմ կարող առել
բայց որ մենք Բեռլին պիտի մտնենք, էդ մեկը հաստատ
պիտեմ:

— Բեռլին պիտի մտնեք, ուրեմն՝ նաև դու, բանառ-
տեղծդդ, և Հասմիկը ձեր ոտքերի տակ ծաղիկներ կցանի,

— Հիշելով Արշոյի՝ պատի թիրթում տողված բանաստեղծությունը, ասացի ես:

Արշոն նորից փաղաքանքով նայեց Հասմիկին։
— Կարծեմ այդպիս էր մի ժամանակ ցանկանում Հասմիկը, որ աղաները կռվին, իսկ աղջիկները ծաղիկներ ցանեն նրանց սովորի տակ։ Իսկ ինչ որ ինձ է վերաբերում, ես այսպիսի աղջկան թույլ չեմ տա կռանաւ այլ ձեռքից կվերցնեմ ծաղիկները և ճակատը կհամբուրեմ։

Նա նորից հիացմունքով շոյեց Հասմիկի մազերը, երկար նայեց նրա սպիտակ ճակատին, հետո դարձավ ինձ ու ասաց.

— Սյաօր արի մեր հարսանիքին։

Թվում էր, թե այս խոսքներից հետո նրանք կհիռաւնան, բայց Արշոն հանկարծ տիրեց, զբաղանից ծխախոտ հանեց (նա ըստ երեսյթին սազմաճակատամ ծխել էր սովորել), վասեց և նայելով հեռուն, փողոցն ի վեր, ասաց,

— Վախճանում եմ այսպիսի ամուսնությունից, Ո՞վ գիտեինչ պատահի,, Ես չեմ ուզենաս որիէ մեկի զժբախտության պատճառը լինել... Երիտասարդ աղջկա համար սիմպատիա կորցնելը սարսափելի չէ զուցե, իսկ ամուսին...»

Արշոն տիրուր նայեց Հասմիկին, կարծես նրանից փըթյունն էր սպասում։

— Գնանք, — կշտամբանքով ասաց Հասմիկը Արշոյի թիրեց քաշելով։ — Ամուսնուցովը մենակ դժւ ես, իսկ բա, իմ ցանկությունը...

Հասմիկը կարմրեց, բայց իրեն հատուկ ոլարդությամբ խոսքը մինչեւ վերջը տարավ։

— Ես ուզում եմ ոչ թե քո սիրեկանը լինել այլ կինը, քաջ և աղճիկ մարդու կին, և ոչ թե սիմպատիա խաղալ... Դեմ, գնանք, գնանք, մորդ իսկի չես խղճում, խեղճի աչքը ջուր կտրեց, իսկ գու էստեղ փիլիսոփայում ես։

Հետո ուրախ փարվելով Արշոյի թիկն, նա դարձավ ինձ։

— Ուրեմն կգտն մեր հարսանիքին։

Փարուն էր: Աշխատանքից հետո Երեանի կենարոնաւ կան փողոցներում արտակարգ եռ ու զեռ է լինում: Հիմնարկներից մեծ ու փոքր խմբերով միանգամից գուրս են դալիս բոլոր աշխատողները և շտապում են տուն, կամ մայթերին կանգնած ծանոթների հետ զրոյցի բռնվում:

Այդպիսի մի օր ես աեսա մայթի վրա խմբված մարդկանց միջից արագ անցնող մի կնոջ, որի գրկին երեխա կար: Նա նայում էր ուղիղ դիմացը, շուրջը չէր նայում և բավական չի լինի տաել թե այդ կինը տխուր էր: Տարսորինակ էր ինձ համար, բայց փաստ էր, որ ես Հասմիկին անմիջապէս չճանաչեցի: Եվ որովհետեւ ինձ թվաց, թե նա ինձ չի նկատել աշխատեցի խոռսափել Հասմիկի հետ հանգիստերոց, թեպետ կուղենայի շնորհավորել երեխա ունենալու առթիվ, տեսնել նրա փոքրիկին: Ես լսել էի, որ Արշոյի հերոսական մահվան լուրն էր ստացվել բայց չըգիտեի, հայտնի՞ է այդ Հասմիկին, թե ոչ: Ով գիտե, գուցե նրան խնայելու համար հայտնած չլինեին ուրսափելի լուրը: Ես էլ չէի ցանկանում այն մարդը լինել որից առաջին անգամ նա լսեր այդ մասին: Բայց անկյունից թեքվելու ժամանակ Հասմիկը ինքը նկատեց ինձ ու մի հպարտ ժըպիս դեմքին կանգ առավ:

Ես բոլորովին շփոթվեցի: Նայում էի երեխային ու թվում էր, թե հիմա լաց կլինեմ:

—Կարծում ես հուսահատվածում եմ,—հնչեց Հասմիկի վշտահաբայց հպարտ ձայնը,—ամենեկին աչ: Նա ընկավ Քեռլինի ճանապարհին, հայրենիքի համար: Ես ծաղիկներ չեմ կարող ցանել նրա ոտքերի տակ, թեև երազում էի այդ մասին, բայց այ, նրա տղան...

Մենք մի քիչ հեռացանք դեպի համեմատաբար ոչ մարդաշատ մի փողոց: Մի տեղ դարձյալ կանգնեցինք: Ես բաց արի երեխայի դեմքը, ուզում էի տեսնել, թե որին է նման:

—Արշոյին,—գուշակելով միտքս և, խանդաղատանքով նայելով իր երեխային ասաց Հասմիկը.—Երբ մեծանա,

մենք կգնանք Բեռլինի ճանապարհով, միասին, ձեռք-ձեռքի տված, կայցելենք հոր զերեզմանը, այնտեղ նա կերպի հոր նման «իւ հայրենիքի արժանավոր քաղաքացի դասնալ»... Հիշում ես, այդպես ասաց կարծեմ Արշոն այն օրվա ժողովում:

Հասմիկի աչքերից արցունքի երկու խոշոր կաթիւ ընկավ երեխայի գեմքին և նա շատպով ծածկեց փոքրիկի դեմքը: Փորձեց դսպել իրեն, բայց ըստ երկույթին այդ նրան ավելի վատ կացության մեջ էր դնում: Թուլացավ, հենվեց պատին և ազատություն տվեց իր արցունքներինչ ևս փորձեցի վերցնել նրա ձեռքից երեխային, բայց իմ այդ շարժումը կարծես սթափեցրեց Հասմիկին և նա ճիպ դորածագրեց, ուղղվեց, ամուր զրկեց երեխային: Նրա գեմքին երեաց հայրտության փայլը:

—Իսկ հիմա ես կպահեմ ու կդաստիարակեմ իմ բաւլիին, կը պատմեմ իր հոր ու նրա ընկերների մասին, այս պատերազմի մասին: Ինչքան բան պիտի սովորեցնեմ նրան...

Անհոգ, ծաղկուն աղջիկը չքացել էր: Իմ ասած կանգնած էր արդեն վիշտ ու տառապանք ապրած, բայց հայրու ու վճռական մի կին, որ գիտեր իր կյանքի ճանապարհը:

—Տեսնում ես, ինչքան ծանր է, բայց ես էլի հայրու իմ իմ սիրով ու ամուսնությամբ, իմ փոքրիկին ել հայրուտանալու շատ բան ունի (Նա մի փոքր բարձրացրեց երեխային ու քնքությամբ նայեց նրան)՝ Նրա հայրը հերոսների սերնդից էր, նու ընկալ հայրենիքի համար:

ԳՐԱՍԵՆՅԱԿԱՌՄ

Պատերազմն սկսվելուց մի քանի օր հետո գրասենյակը գրեթե դատարկվեց: Մեծ-մեծ լուսամուտներով, բարձր առաստաղով ընդարձակ սենյակի տարբեր անկյուններից դեպի դուռն էին նայում կարծես որբացած գրասեղանները: Էլ ավելի տխուր տպավորություն էր գործում գրատենյակն այն բանից հետո, եթե լուսամուտներից կաղույտ սովորաբուղթ կախեցին լուսաքողարկման համար և ապակիների վրա մառլայի բազմաթիվ քառակուսիներ կացըրին:

Դրասեղաններից միայն մեկը, որ ծածկված էր կանաչ մաճուղով և այդ պատճառով զեղեցիկ փայլ էր տալիս նրա վրա գրված հարուստ, մարմարե զրենական պիտույքներին, առաջիկ պես ուրախ ողջունում էր ներս մանողին:

Դրասենյակում հին աշխատողներից մնացել էին միայն երեք հոգի, որոնցից երկուը կին էին:

Մեկը ծեր էր, ակնոցները քթին, կտրած ուղիղ մազերով, գուբրա ընկած աչքերով, միշտ մաքուր սրբած ծուռ կոշիկներով: Նա ներս էր մոնում թե չէ, սուսիկ քայլերով մոտենում իր գրասեղանին, հանում էր հաստ գրքերն ու նայում, նայում այնքան մոտիկից, որ կարծես ոչ թե կարդում, այլ հոտոտում էր գրքի թերթերը:

Մյուսը երիտասարդ էր, բարակիրան, կանոնավոր կազմվածքով: Նա նույնպես ակնոցներ էր կրում և մազերը հին մողայով ծոծրակի վրա հավաքում, իսկ սպիտակ ճաշկարին, էրը թե անփութությունից, խոպակներ էր թողնում, որպեսզի ավելի երիտասարդ երես:

Եշրսրբը վարիչն էր:

Պատերազմից առաջ էլ վարիչը արտաքուստ այնպես
էր պահում իրեն, որ ասես ուզում էր տարբերվել մյուս
աշխատակիցներից, թեև մի քանիսը գիտեին, որ նա բար-
ձրացել է զրկանքներով լի կյանքից, որ նրա բնավորու-
թյան խստության, հաճախակի մուայլության հետ չի սա-
դում կարմիր գծերով մետաքսե փողկապը:

Պատերազմն սկսվելու օրից վարիչը դարձավ ավելի
խիստ ու պահանջկոտ: Հիմա արդեն նա բոլորովին չէր
ծիծաղում, հազվագեղ էր ժպտում, չէր հանդուրժում ամե-
նաշնչին անփութությունն անզամ և աշխատում էր ավելի
լարված: Նա ամեններն չփոխեց միայն այն սովորությունն-
երը, որոնք կապված էին արտաքինը վայելուչ և մաքուր,
անզամ փայլուն ցույց տալու հետ: Առաջիւ պես գեղեցիկ
փողկապներ էր կապում, իր գրասեղանին մոտենալիս կամ
գրասենյակից դուրս գալիս հանում էր դրանից մի ահա-
գին կարմիր սանր և ուսցնում էր իր գոտող մազերը, որից
զլուխն անբնականորեն մեծանում էր: Եթե չէր շտապում,
շատ գործնական արտահայտություն տալով գեմքին, սանրը
սրբում էր և նոր միայն գրպանը դնում:

Ծեր կինն ու ջահել կինը նստում էին մի երկար սե-
ղանի երկու տարբեր ծայրերի մոտ, որովհետեւ նախորդ
տարիներին գրասենյակում աստիճանաբար նոր մարդիկ
էին ավելանում, իսկ սեղաններն, ընդհակառակը, մաշվում
էին, շարքից դուրս գալիս: Վարիչը, սակայն, համառորեն
չեր ուզում նոր սեղան գնել գործ ունենալ առեւտրական
հիմնարկների հետ և ըստում էր թույլ դիմադրության ճա-
նապարհը: «Սեղանը մեծ է, միառժամանակ յոլա գնացեք,
հետո կտեսնենք»—ասում էր նա կանանց: Բայց ահա ան-
սպասնելիորեն սեղաններն ազատվեցին, այն էլ ոչ թե մեկը,
այլ մի քանիսը: Սակայն կանանցից ոչ մեկը չէր փոխա-
դրվում: Երիտասարդ կինը անձկությամբ նայում էր ան-
տեր մնացած սեղաններին, հիշում էր նրանց տերե-
րին, որոնք մի քանի օր առաջ բանակ գնացին և նրան
թվում էր թե՝ արտավորած կլինի գնացածների հիշատակը,

եթե անմիջապես փոխադրվի և զբաղեցնի նրանց սեղանն-ները։ Ծեր կինն էլ մտածում էր, թե իրեն վայել չէ նորին ձգտել իր համար այս հինն էլ լավ է, թող երիտասուրդ կինը, եթե ուղում է, նոր սեղան զբաղեցնի։

Մի քանի օր հետո զբասենյակ մտան երկու նոր աշխատողներ։ Դրանցից մեկը մի 25 տարեկան կին էր, որի նիհար ու գունատ գեմքին՝ արյան պակասության պատճառով սկ բժիշկ կային։ Պատերազմն սկսվելու չորրորդ օրը, երբ ամուսինն արդին բանակումն էր, նրանց գուանը կանգնել էր շտապ օգնության մեքենան և կիսամեռ վիճակում նրան հիվանդանոց էր տեղափոխել։ Ոտքի կանգնելով, ջահել կինն ոկղում շվարած նայում էր ծննդաբերությունից ապաքինվող կանանց, զարմանում էր այն բանի վրա, որ տյբ կանանց չեր տանջում ապագայի հոգսը։ Եղան այնպիսի ըստակեներ, որ նա զղջաց, թեթևամտություն համարեց իր արածը բայց մի երկու օր հետո արդեն ուրախ էր, որ ազատվել է երեխա ունենալու հոգից, որ կարող է աշխատել ու պահել այս մեկին, մինչև ամուսնու վերադարձը։

Մյուս նորեկը մի թիկնեղ երիտասարդ էր, խստաշայաց, արտաքուստ չափազանց լուրջ, փոքր ինչ ծաղկատար գեմքով, բայց կանոնավոր գիմագծերով։ Գեղեցիկ էին հատկապես նրա ատամները։ Գուցե այդ էր պատճառը, որ երբ նա խոսում էր, գժվար էր հավատալ, թե գա այն նույն մարդն էր, որ քիչ առաջ այնպես լուրջ գրեթե կըշտամբանքով էր նայում խոսակցին։ Խոսելը բացահայտում էր երիտասարդի ներսում թագնված ինչոր չարածնի մանկական բարություն։ Հենց տուաշխն օրից երիտասարդը առանձին ուղարկության արժանացալ իր անվան պատճառով։

— Այդ ինչ տարօրինակ անուն է, — ակնոցների տակից երիտասարդին զննելով ասաց ծեր կինը, — Մուրամուտ

Իսկ երիտասարդ կինը կոկետաբար մի վայրկյան ուղղեց իր ձակատի խոպովները, նույնպես ուշադիր զննեց երիտասարդին և բարկացած հոնքերը կիտեց։ «Ինչու այս առողջ երիտասարդը բանակ չի գնացել» մտածեց նա։ Եվ

Հըկաբ ժամանակով հակակը անք էր զգում նորեկի նկատ-
մամբ այն պատճառով, որ վերջինս զբասենյակ գալով ոչ
ոքի չհարցրեց, թե ումն են աղատ մնացած սեղանները և ա-
ռանց տատանվելու զբաղեցրեց նրանցից ամենալավը։ Մու-
սաղը չասաց, որ ինքը գնալու է ճիշտ այնպես, ինչպես զբանց
նախորդ տերերը, այդ պատճառով էլ նրան չեն հետաքրա-
քում երիտասարդ կնոջ քննուշ զգացումները գնացած ըն-
կերների նկատմամբ։ Նա նստեց իր ընտրած սեղանի առաջ
և աջ ձեռքը ականջին հենած շուրջն էր նայում ասես
կողմնորոշվելու համար։ Հետո ձեռքերը շարվարի զբան-
ները զբած ման եկավ սեղանների արանքում, ոչ ոքի չը-
նայելով, կարծես մի բանի համար բարկացած, մի բողե
էլ կանգնեց լուսամուտի առաջ, բայց իր համար հըապու-
րիչ բան չդառնելով դրառում, նորից շուռ եկավ ու նստեց
սեղանի առաջ։

Վարիչը ուզում էր նորեկ երիտասարդներին ցույց
տալ իր լուրջ՝ միշտ զբաղված լինելը և անբարյացակամ
արտահայտություն ունեցող գեմք ընդունած, գլուխը կախ,
դրում էր։ Մուրագ անունը լսելով նա մի պահ բարձրացրեց
զլուխը և նայեց այդ անունը կրողին։ բայց երբ նորից
կախեց զլուխը, զդալիորեն թթվեց և մտածեստ զարձավ։
Նա այն մարդկանցից էր, որոնք չեն սիրում աղավիննել
հիշողություններին, ատում են վիպական, ողբերգական և
կամ դրամատիկական դրությունները կյանքում։ Երա կար-
ծիքով դրանք լավ են վեպերում, բեմի վրա, իսկ կյան-
քում դրանք սարսափելի են, որովհետև միայն վերքեր են
առաջացնում։ Ահա թե ինչու նա աշխատեց վանել իրենից
այս հիշողությունը, որ կապված էր «Մուրագ» անվան հետ
և որպեսզի այդ իրեն հաջողվի, նա շարունակեց զբեկ զի-
ղեցիկ մարդարտաշար տառերով։ Այդ ժամանակ գըառեն-
չակի պատից կախված էլեկտրական զանգը երկու անգամ
հնչեց և վարիչը մազերն շտապ ուռոցնելով դուրս գնաց։

Սշխատանքի նոր ընդունված գումար կինը—Մար-
շանյանը—էլեկտրական զանգին նայելով քմծիծաղ ալեց

Երկար ժամանակով հակակբանք էր զգում նորեկի նկատ-
մամբ այն պատճառով, որ վերջինս զրասենյակ գալով ոչ
ոքի չհարցրեց, թե ումն են ազատ մնացած սեղանները և ա-
ռանց տատանվելու զբաղեցրեց նրանցից ամենալավը: Մու-
սադը չսաց, որ ինքը գնալու է ճիշտ այնպես, ինչպես դրանց
նախորդ տերերը, այդ պատճառով էլ նրան չեն հետաքըր-
քրում երիտասարդ կնոջ քնքուշ զգացումները զնացած ըն-
կերների նկատմամբ: Նա նստեց իր ընտրած սեղանի առաջ
և աջ ձեռքը ականջին հենած շուրջն էր նայում առեն
կողմուրոշվելու համար: Հետո ձեռքերը շարվարի զրադա-
ները գրած մանեկով սեղանների արանքում, ոչ ոքի չը-
նայելով, կարծես մի բանի համար բարկացած, մի բոպե
էլ կանգնեց լուսամուտի առաջ, բայց իր համար հըազու-
րիչ բան չլունելով դրսում, նորից շուռ հկավ ու նստեց
սեղանի առողջ:

Վասիլը ուզում էր նորեկ երիտասարդներին ցույց
տալ իր լուրջ, միշտ զբաղված լինելը և անբարյացակամ
արտահայտություն ունեցող գեմք ընդունած, զլուխը կախ,
զրում էր: Մուրազ անունը լսելով նա մի պահ բարձրացրեց
զլուխը և նայեց այդ անունը կրողին, բայց երբ նորից
կախեց զլուխը, զդալիորեն թթվեց և մտածեցու զարձավ:
Նա այն մարդկանցից էր, որոնք չեն սիրում ապավինել
հիշողություններին, ատում են վիպական, ողբերգական և
կամ դրամատիկական դրությունները կյանքում: Նրա կար-
ծիքով դրանք լավ են վեպերում, բեմի վրա, իսկ կյան-
քում դրանք սարսափելի են, որովհետև միայն վերքեր են
առաջացնում: Անա թե ինչու նա աշխատեց վանել իրենից
այս հիշողությունը, որ կապված էր «Մուրազ» անվան հետ
և որպեսողի այդ իրեն հաջողվի, նա շարունակեց զրել զե-
ղուցիկ, մարդարտաշար տառերով: Այդ ժամանակ զբանեն-
յակի պատից կախված էլեկտրական զանգը երկու անգամ
հնչեց և վարիչը մազերն շտապ ուղանելով դուրս գնաց:

Աշխատանքի նոր ընդունված գումար կինը—Մար-
չանյանը—էլեկտրական զանգին նայելով քմծիծաղ ավեց

կարիք կա դրա համար ուրիշին դիմելու, ևս ձեզ չեմ հաս-
կանում:

Այս խոսքերի վրա վարիչն իսկապես մոռացավ Մու-
բագի մասին: Նա մի իսկական կոխի սարքեց երիտասարդ
թարգմանչուհու հետ, և բանը վերջացավ նրանով, որ
թարգմանչուհին դիմում դրեց աշխատանքից աղաւավելու
մասին, իսկ վարիչը կարդալով դիմումն՝ ասաց.

—Ո՞չ ընկեր, մենք ձեզ չենք աղաւիր: Եվ ի՞նչ է
նշանակում աշխատանքից աղաւել: Եթե մենք ձեզնից ա-
զատվենք, սովորական ժողովուրդը, միենույն է, ձեզնից
հո չի աղաւիր, դուք պետք է մի տեղ աշխատեք, ճիշտ է:
Հետեւապես մենք պետք է օգնենք ձեզ, որպեսզի աճեր:

Վարիչի այս փելիստիայությունը աողջեցրեց նորեկշ-
ներին: Մուրազն այնպես էր նայում վարիչին, կարծես
կյանքում առաջին անգամ տեսնում էր մի տարօրինակ
մարդու:

Իսկ հուզված թարգմանչուհին մոռանալով ամեն մի
հեղինակություն ու պաշտոն, այն որ, ինքը խոսում է հիմ-
նարկի պետի հետ, համարյա ծղրատ:

—Ի՞նչ եք ասում, թվի է ձեզ իրավունք տվել ամեն
մի ծուխ-պատի բանի համար սովորական ժողովրդի ա-
նունից խոսելու: Ես այդ ժողովրդի համար թարգմանու-
թյուն չեմ անի, սևագործություն կանեմ, ևս նպատակ չու-
նեմ ձեզ նման պետ դառնալու...

Երբ վարիչը տեսավ, որ թարգմանչուհին կորցրել է
իրեն, հանգստացավ, կամ գոնե այդպես ձեացրեց և ճա-
կատը շինուալ սկսեց նայել թարգմանությանը:

Մուրազը, որ մինչ այդ չէր կարողանում մեկնաբանել
վարիչի տարօրինակ փաստարկումը, հանկարծ մտածեց,
թե երկի թարգմանչուհին շատ կոսիւտ ուսալ է թույլ աը-
վել: Հետաքրքրությունը ստիպեց Մուրազին մոտենալ վա-
րիչի գրասեղանին և խնդրել թարգմանության տեքստը:

Վարիչը ակնհայտ գժկամությամբ, երկի այն բանի
համար, որ չեր սիրում, երբ երիտասարդները չափազանց
ինքնավտան են լինում, թարգմանությունը տվեց նրան:

Մուրազը երկար կարդում էր: Քանի գնումնրա դեմքին ավելի հաճախ էր երեսում չարաձի ժպիտը: Այդ ավելի շատ նկատում էր երիտասարդ թարգմանչուհին, որովհետեւ նա չգիտեր, թե ինչ է ներկայացնում իրենից այդ «Մուրազը», որ հանգուկն կերպով հանձն առավ վճռելու իր և վարիչի դատը:

Մուրազը մի անգամ էլ վերադարձավ վարչի նշած տեղին, հետո ուղիղ քայլերով գնաց դեպի թարգմանչուհիների միացյալ սեղանը: Ինչոր մի բառ գրելով, նա հարցրեց:

— Այսպես ավելի լավ չէ՞ ։ Փոխանակ «հրաման» բառը փոխելու, կողքի բառը փոխենք:

Թարգմանչուհիներից ծերը, որ իր մոտ էր քաշել «Դաղբաշյանը», դեն հրեց այն և մի փոքր մտածելուց հետո ասաց.

— Ճիշտ է, այդպես շատ ավելի լավ է:

— Իսկապես, ինչպես գլխի չէ ընկեր — բացականչեց երիտասարդ թարգմանչուհին:

Իսկ վարչը, որ միայն իրեն էր հայտնի, թե ինչու հպարտացավ Մուրազի գյուտով, հսկորական տոնով առաց.

— Իսկ դուք չէիք ուղում ծեր սխալն ընդունել: — Հետո դիմելով Մուրազին ավելացրեց.

— Դուք խմբագրեցեք այդ նյութը:

Այդ օրվանից Մուրազը հեղինակավոր և նույնիսկ անփոխարինելի անձնավորություն դարձավ հիմնարկում: Երիտասարդ թարգմանչուհին, որ չար, կոպիտ, անգամ արհամարհական վերաբերմունք ուներ դեպի գրագետ ձեացող անգրագետ մարդիկը և ընդհակառակը՝ պաշտելու չափ հարգում էր գրագետ մարդկանց, փոխեց իր կարծիքը Մուրազի մասին: Ավելին: այդ օրվանից «Արքիկալան» վերաբերմունքը ուներ դեպի Մուրազը, հիացմունքով էր նայում նրա թիկնեղ ուսերին, աղատ շարժ ու ձեերին, իսկ դեմքի ծաղկատար լինելը ամենեին չէր նկատում:

Վարչը նույնպես փոխեց իր վերաբերմունքը Մուրազի նկատմամբ: Քիչ է ասելը «փոխեց»: Ոչ մի մարդու նկատմամբ ներողամտության զգացմունքը չէր հաղթահա-

բում վարիչին այնպես, ինչպես այդ լինում էր Մուրագի նկատմամբ: Բայց նա զգում էր, որ իր սիրալիքության պատճառը միայն Մուրագի կարգացած ու զարգացած լինելը չէ: Նրա կարծիքով դրանք զատարկ բաներ են, և թե մարդ աշխատասեր չէ, և որ գլխավորն է, չունի պատասխանատվության զգացում: Իսկ Մուրագը, նրա կարծիքով, այս երկու թուլություններից էլ որոշ չափով ուներ: Ուրեմն ինչու ինքը չի կարողանում նրան էլ այնպիս կըշամբել ասենք, առանց իր թույլտվության աշխատանքի ժամերին հիմնարկությունից բացակայելու համար, ինչպիս այդ կաներ մի ուրիշի նկատմամբ: Մյուս կողմից միշտ իր գործն իմացող այդ մարդը վերջերս մոռացկուություն և ցրվածություն էր հաճախ բերում: Առաջներում էլ վարիչը նկատում էր, որ հաճախ իր վրա զարմանում են և երբեմն էլ չգիտես ինչու, խղճում: Բայց այն ժամանակ նա շատ չէր բարկանում զրա համար, որովհետեւ գտնում էր, որ ինքը ամենելին խեղճ չէ: Թեև ոչ մի հարազատ և նույնիսկ մոտիկ մարդ չունի, բայց աշխարհը մեծ է, ինչն էլ խեղճը զլիին մարդ է, զնահատում են և առատ վարձարբում: պատասխանատու գործ են վստահում, էլ ինչ է պետք աշխատասեր մարդու համար:

Իսկ հիմա... ինչու համար այդ Մուրագը նայում է իրեն զարմացած, բայց ներողամտաբար: Չլինի՞ թե ճանաչել է և խղճում է... Եվ վարիչի մեջ ավելի հաճախ էր հանդիս գալիս բռնկվելու, որան-նրան կշամքելու ցանկությունը:

Բայց միայն այդ չէր վարիչի վերջերս ավելացած ներվայնության պատճառը: Նո ուզում էր թագյնել իր անրավականությունն աշխարհի գործերի ընթացքից, այդ Մուրագ անունը բորբոքում էր՝ նրա երևակայությունը:

Հաճախ հիմնարկի աշխատողներից որևէ մեկը բանակ զնալուց առաջ դարձիս էր մնաս բարե ասելու: Վարիչը բըռնում էր նրա ձեռքը և չոր ու ցամաք առնով պառակ էր միայն: «Հաջողություն, հաջողություն»: Շատ կուզենալ

ասել. «Հերոս եղիք, հաղթանակով վերադարձիր», բայց գըշտանք նրա հարազատները չէին, ոչ մեկի հետ մոռիկ հարաբերություններ չուներ և չէր կարողանում ասել ու վըրդովված նստում էր աշխատելու: Երբեմն աշխատակիցներին կշտամբում էր այն բանի համար, որ նրանք տիրությամբ էին խոսում մեկն ու մեկի բանակ մեկնելու առթիվ, կամ անհամբերությամբ ու լացով էին սպասում մեկն ու մեկի նամակին սաղմանակատից:

Աշխատակիցները այս ամենը վերագրում էին վարիչի անդքա և անհոգի բնակորությանը և վատ էին արամադրվում նրա նկատմամբ:

Թրասենյակի աշխատակիցները երբեք չէին ուշանում աշխատանքից, վարիչը շատ էր խիստ: Միայն ծեր թարգմանչուհին, որը թոշակառու էր, կարող էր աշխատանքի ներկայանալ ուղած ժամին: Բայց վերջերս նորությունները լույս համար, նա նույնպես շուտ էր գալիս, հատկապես չէր ուզում, կամ չէր կարողանում բաց թողնել այն ըսունակերը, երբ թերթերն ստացվում էին ու սեղանից սեղան շըշելուց հետո ընկնում էին Մուրազի սեղանի վրա, որը արգեն աչքի անցրած նյութերը, մանավանդ ինչփորձբյուրոյի հաղորդումները նորից բարձրածայն կարգում էր: Եզ որովհետեւ նա լավ առողջանություն ուներ, բոլորը լսում էին, իսկ հետո մտքերի փոխանակություն էր սկսվում:

Միայն մի անգամ ընթերցանությունը վերջացնելուց հետո մտքերի փոխանակություն չեղավ: Ծանր օր էր: Թարգուություն էր տիրում: Այդ օրը սաղկոն ու թերթերը առաջին անգամ հաղորդեցին Մոսկվան ոմբակոծելու մասին: Համարյա բոլորն էլ այս կամ այն կերպ լսել էին, բայց չէին ուզում հավատաք իսկ հիմա տեսնում էին սեռվ սողեակի վրա գրված:

Մուրազը վեր կացավ ու ձեռքերը գրպաններում հուզ-

ված զրջեց սեղանների արանքում, Վարիչը նկատելով երիշտասարդի արտակարգ մռայլ տրամադրությունը, մի տեսակը բարեկամաբար առաց.

—Թշնամի է, հապա ինչ էիք կարծում, պետք է դիմանալ:

—Այն, ուղղակի սրտներիս է խփում, —ասաց Մուրազը և հիշեց, որ ինչոր ծանոթ բառեր է ասում, բայց այդ բուպելն չիշեց, որ զբանք Անդրեյ Բալկոնովու խոսքերն հնդարձյալ Մոսկվայի մասին:

—Հուսահատվելու բան չկա, —ավելացրեց վարիչը, աշխատելով քաջ ու առույդ երեալ:

—Հուսահատվել այդ բառը ես առհասարակ չեմ ոիրում, —ասաց Մուրազը և նստեց:

Այդ օրը նա մի լոցաջունչ հոդված դրեց սովորակուն երիտասարդության մասին, որը կարդալով՝ վարիչի միջցանկություն առաջացավ լինել երիտասարդ, կովկել, ճուշակել թշնամուն ոչնչացնելու գերազույն հաճույքը: Նոր հանկարծ ուզեց պատմել իր երիտասարդ տարիների մասսին, բայց և իսկույն վանեց այդ մտքերը, որովհետեւ ահացածը տխուր էր և սարսափելի:

Այդ օրը Աննա Բագրատովսան ուշ եկալ աշխատանքի: Ուրիշների պես նա էլ էր լսել Մոսկվան սմբակոծելու մասսին և երբ ներս մտավ, ոչ թե սովորականի պես լուս նըստեց իր տեղը, այլ դողդոջուն քայլերով մոտեցավ վարիչը կողքին կպցրած քարտեղին և երկար ժամանակ չէր կուրողանում այնտեղից հեռանալ:

Հարցրին, թե ինչ է պատմել:

Աննա Բագրատովսան չկարողացավ միանդամից պատասխանել նա հանեց թաշկինակը և ակնոցների տակից արցունքները սրբելով ձեռքը մեկնեց քարտեղին:

—Մոսկվան... Տղաս Մոսկվայի կայազորությն էր, այլ, բոլորում...

Բոլորն էլ խղճացին Աննա Բագրատովսային, բայց միայն երիտասարդ թարգմանչուհին միսիթարեց նբան, ուսիւ-

լով, որ տղային ռչինչ չի պատահի, իզուր է Աննա Բագրատովան անհանգստանում: Մարջանյանը հարցնում էր ինքն իրեն, թե ինչու Աննա Բագրատովան քարտեզին մուտեցավ, միթե մոռացել է Մոսկվայի տեղը: «Շփոթվել է, երեխ կարծում է, թե քարտեզից կարելի է իմանալ թի ինչ է պատահել Մոսկվայի աէրոդրոմին»: Իսկ Մուրագը սպասում էր, որ վարիչը հիմա կասի Աննա Բագրատովային, «Գնացեք, հանգստացեք, այսօր ձեր փոխարեն յուակտանենք»: Բայց որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ վարիչը խրատական տոնով ասաց ծեր կնոջը.

—Ինչու էք սուզ անում, Աննա Բագրատովան, ձեր տղան հայրենիք է պաշտպանում, դուք՝ պետք է ուրախ Անեք դրա համար: Զարմանում եմ, ինչու եք լավիս:

Բոլորը մի տեսակ սասնություն զգացին վարիչի այս չոր ու ցամաք տոնից: Իսկ Մուրագը, որ մտովին երբեմն նմանեցրել էր նրան այն մարդու հետ, որ սովի տարին պահել է իրեն, այժմ վերջնականապես եղբակացրեց, որ դա այն մարդը չի կարող լինել: Նրա մեջ ցանկություն ասածացավ անպայման մի վերափորական բան առել վարիչին: Բայց կատարվեց հակառակը:

Այդ ժամանակ զրասենյակ եկավ Մարջանյանի հին ընկերներից մեկը — «Թատ բարե» ասելու: Նա մեկնում էր սաղմաճակատ: Ընկերների բաժանումը սրտառուչ էր: Գրասենյակի աշխատաղները թիեւ չեին ճանաչում երիտասարդին, բայց բարությամբ ու մի տեսակ երախտագիտությամբ լի հայացքներով ճանապարհ գրին նրան: Իսկ Մարջանյանը, երեխ հիշելով ամռանու և եղբայրների գնալը և կամ իր ու փոքրիկ տղայի մենակ մնալը, թաշկինակը տառավ աչքերին ու թնկթնկաց:

Վարիչը, որ գլուխը կախել էր և աշխատում էր ցույց տար թե ամեններն չի նկատում այդ սրտահույզ տեսարանը, իրոք տանջվում էր: Ինչու ինքն էլ մի հարազատ չունի, որ կովելու ուղարկի: Ինչու ինքը ոչ մի կերպ չի կարող նրանց նման մասնակցել այս կովին: Զէ՞

որ սա իր կոփին է, կոփիվ զերմանացու դեմ, հայի ոխերի՝
թշնամու դեմ: Ո՞չ, լուց լինել չի կարելի, ինչու են լավիս:
ինչու է այդ երիտասարդ կինը լալիս, պետք է տաել մի-
այն տաել և վրեժ լուծել:

— Ընկեր, գուք երիտասարդ էք, — ասաց նա զլույնը
բարձրացնելով, — գուք ձեր ընկերներին լալով չպետք է
ուղարկեք թշնամու դեմ: Ո՞ւմն են պետք ձեր արցուն-
քները, ինչ սրտով պետք է նա կավի գնա ..

Մարջանյանը, որին ձանձրացրել էին վարիչի ծայրա-
նել պաշտոնակությունն ու ավելորդ լարվածությունը, այս
խոսքերն ընդունեց որպես բացարձակ վիրավորանք՝ իր,
սովորական երիտասարդի հասցեին: Նա այդ բողեին այն-
պիսի հոգելիքակ առլուց, որ աչքերից հետ տարավ թաշ-
կինակը և վեր կենալով տեղից, համարյա հանդիսավոր
քայլվածքով մոտեցավ վարիչի զբանեղանին: Առանց շտա-
պիկու նա ձեռքը մեկնեց պրեսս-պալյայեին, բայց երբ նրա
ձեռքն իր ափի մեջ առավ պրեսս-պալյայեի մարմարե կոլլը.
Նո ձեռքը հետ քաշեց:

Մուրազը տենդորեն հետեւում էր Մարջանյանի շար-
ժումներին, մոտավորապես կուահելով նրա մատղը թյունը
և զբանից բխող հետևանքները: Բայց եղավ մի բռուի, որ
ամբողջովին ուշադրություն դարձած նա նայում էր մշա-
րիչի գեմքին:

— Եթե դուք կշաբունակեք այդ տոնով ինձ հետ խո-
սել... — ասաց Մարջանյանը: Այդ վայրիլյանին Մխիթարյանը
խղճալի, տարակուսանքով ու զարմանքով լի մի հայացք
էր ուղղել Մարջանյանին և կարծես հնազանդ սպասում էր
հարվածին: Նրա հայացքի մեջ այդ բռուի շինծու ոչինչ
չկար, այդ արգեն նա ինքն էր: Այդ էր պատճառը, երիշ,
որ նրա մեջ Մուրազը տեսալ մանկական միամտություն և
զարմանք և ճանաչեց Մխիթարյանին: Նա իրեն լավ հաշեվ
չտվեց, թե ինչու, բայց այլևս ոչ մի կասկած չուներ, որ
դա Տիկոն էր:

Մարդանյանն իհարկե չխփեց Մխիթարյանին։ Նու
այլքան անտակտ չէր, այլ միայն առաց.

—Ես ոս ձեր ճակատին կխփեմ—և հուզված գուրս գնաց։

Երբ Մխիթարյանն ուշքի եկավ, ոպառնաց աշխա-
տանքից հեռացնել Մարդանյանին, մեղադրեց նրան ան-
վայել վարքագծի մեջ, բայց Մուրազն արգեն չէր լուս-
նըան։

«Ճիկո»—կըկին ասաց նա մտքում, և զգաց որ այդ
մարդը պարզվում է իր համար։ Նա շատ փոքր էր եղել և չը-
փորձեց իր հույսը հիշողությունների վրա գնել, բայց դրա
փոխարեն նա ազատ էր ենթադրություններ անելու մեջ։
Դիրմանացիների, պատերազմի պատճառով առանց հարա-
զատների, կյանքի բեռան տակ մենակ մնացած, հարազատի
ինամքից ու գուրզություն զարգանալ։ «Նա իրեն չնշին մարդ է հո-
մարում», —մտածում էր Մուրազը, —բայց միենույն ժամա-
նակ նրա մեջ անդաւազ ցանկություն կա ամբողջ ժողովրդին,
գուցե և ամբողջ մարդկությանը հանել գերմանացիների գեմ։

«Իսկ եթե նա չէ... Ոչ, ոչ, նա է, —ուրախանալով գյուտ
արած մարդու պես, շարունակում էր մասորել Մուրազը։
Իսկ որքան լավը է եղել նա... Սովոր տարին, մի որը ուշ-
տանի էի, պահել է ինձ, անտեր մնացած երեխայիս։

Այդ ըոպեկն Մուրազը այնպիսի կարեկցությամբ ու
խանդաղատանքով էր նայում Մխիթարյանին, որ վերջինս
չփոթվեց և արդեն նույնպես վերջնականապես համոզվեց,
որ դա իր ենթադրած Մուրազն է։ Երբեք և ոչ ոք նրան
այցպիս չէր նայել։ Այդ հայացքի մեջ, որով Մուրազը հիմա
իրեն էր նայում, չկար ոչ արհամարհանք, ոչ կշամքանք,
ոչ բարկություն։ Հետաքրքրություն, կարեկցություն, հա-
րազատություն կար միայն։ Ավելին, վարիչին թվաց, թե
Մուրազն ուղում է մի բանի համար ներողություն խնդրել
իրենից։ Եվ այդ աչքերը... չիմա արգեն բոլորովին ծանրթ
էին և անցյալի մշուշից կյանքի էին կոչում ծանրթ պատ-

կերներու Բայց վարիչը հանկարծ հիշեց, որ ինքը ռոմանատիկ մարդ չէ, որ չի կարելի հիմա տարվել այդ պատկերաներով և աշխատեց հեռու վանել գրանք իրենից:

Սակայն Մուրազի աչքերը ձեռք չէին քաշում նրանից, գամկում էին ձեռքերին, խառնում շարժումները՝ Մխիթարյանին թվում էր, թե հիմա իր շարժումները ոչ թե ինքն է ղեկավարում, այլ Մուրազի սևուռն հայացքը:

Վերջապես Մուրազը խոսեց: Նա բոլորովին մոռացավ, որ քիչ առաջ ուղում էր վերավորել վարիչին նրա անզգա, չոր ու ցամաք խոսքերի համար և մեղմ, հետաքրքրությամբ, գրեթե հեղությամբ հարցրեց.

— Դուք հարազատներ ունեք, ընկեր Մխիթարյան:

— Ո՞չ — խուսափողական պատասխանեց վարիչը, խառնելով իր առջև փոստ թղթերը:

— Ոչ մի:

Վարիչը որ իր կյանքում ոչ ոքից գաղտնիք կորցելու փորձ չէր արել և ամենեին խորամանկ մարդ չէր, հանկարծ մտածեց խորամանկության դիմել:

— Ոչ մի: Իսկ դուք հարազատներ շատ ունեք, որտեղացի էք:

Մուրազը ժպտաց իր մանկական ժպիտով: Նրա հայցքը կարծես ասում էր. « Դուք ուղում էք, որ առաջինը ես ասեմ. շատ լավ, կասեմ»:

— Ես ինձնից մեծ մի քույր ունեմ, հորս ու հորեղայրացներիս կոտորել են թուրքերը, առաջին պատերազմի ժամանակի, մայրս մեռել է ճանապարհին, ես նրան չեմ հիշում: Բայց ես, իմ կարծիքով մի կորած եղբայր էլ պետք է ունենամ: Դա իմ հարազատ եղբայրը չէ, բայց դա մի որբ տղա է եղել որ 18 թվին փրկել է իմ կյանքը:

Մխիթարյանը գունառվել էր, նրա կլոր սև աչքերը տեսդադին վայլում էին, դեմքին սառը քըտինք էր պատել Նա ճիշ էր գործադրում ցույց տալու, թե անտարբեր է գեղի Մուրազի ասածները բայց իրոք ուղղում էր գուրս գալ սենյակից, կարգի բերել մտքերն ու դղացմունքները,

որոշել անելիքը: Նրա բաղդից զանգը հնչեց և նա այս
անգամ մոռանալով մաղերը սահըթ շուապ դուրս եկավ
գրասենյակից:

Ամբողջ օրը նա ոչ ոքի հետ չխոսեց: Մեկ շփոթված
էր երեռմ, մեկ տենդագին լարված, այնպես որ Մուրա-
գը զգջում էր իր արածը, տեսնելով այդ մարդու գունատ
դեմքն ու հիվանդագին շաբժումները: Նա չէր ենթալրում,
որ իր հայտնությունը այդպես կազդի Մխիթարյանի վրա
և չէր հասկանում, թե ինչու է նա խուսափում ասելուց,
որ այդ ինքնն է:

Իսկ Մխիթարյանը հաստատապես որոշել էր չասել:
Քանի երեք տարի շարունակ նրան այնպես էր թվացել
թե մարդիկ ոչ մի գործ չունեն իր ներքնաշխարհի, իր
զգացումների հետ: Այս հարցում մեծ դեր էր խաղացել Մու-
րագի հետ կատարված դեպքը: Նրան հանկարծ թվաց, թե
մինչև այդ ինքը ուրիշ մարդ է եղել—բարի, հոգատար, սի-
րով լի դեպի մարդ արարած և գեպի փոքրիկ ու որք երեխա-
ները: Նա հիշեց, թե ինչպես էր լվանում Մուրազի թա-
թիկները, այդ մանկական փոքրիկ ձեռքերը... Հիշեց, որ
Մուրազը երբեմն լաց էր լինում իր հետեւց, իսկ ինքը հա-
մոզում էր նրան. «Կամ, հայ կը երեմ քեզ համար»:

Հիշողությունների աենդի մեջ Մխիթարյանն հանկարծ
ուղեց շուռ գալ իր գիրկն առնել Մուրազին և ասել. «Հի-
շմամ ես, հիշում ես...» Բայց այդ մի բազե տևեց: Նա նորից
որոշեց իրենից վանել միտքն զբաղեցնալ այդ պատկեր-
ները և աշխատել միայն աշխատել:

Բայց պատկերները համառորեն հետապնդում էին նը-
րան: Մխիթարյանը չըիտեր, որ գրանք այդպես թարմ են
իր հոգում: Անա տուածին հանդիպումը: Գաղթականների
խառնիխուռն զանգնած սայլերը մի տափարակի վրա, ան-
ձրեկի կաթիւներից թշրիցող կը ակը, որի մոտ ինքն ուզրում էր
չորացնել տրեխները, երբ լսեց մի զարհուրած ձայն—
«Թուրքերը գալիս են»: Մի բռնկում սայլերն ու մարդիկ
իրար խառնվեցին: Տիկոն դեռ չէր կարողացել տրեխները

կապել երբ սայլերն սկսեցին հեռանալ աղմուկի ու հարայշ
հրոցի մեջ: Սկսեցին ցորեն, անկողիններ, ամանեղեն վայր
թափել սայլերից, որպեսզի կարողանան արագ փախչել:
Անցավ շատ կարճ ժամանակ, որի ընթացքում նա շվարած
կանգնած էր, երբ տեսավ որ մենակ մնաց տափարակի մեջ:
Հեռավոր ազգականները, որոնք հովանավորում էին Տիւ-
լոյլին, ծնողների ու եղբայրների սպանությունից հետո,
մոռացան նրան, փախան: Բայց նա արդեն մեծ տղա էր—
տասնչորս տարեկան, և կարող էր, որքան իրեն թվում էր,
սայլերից ավելի արագ գնալ: Նա այն է, ուզում էր
սայլերի հետքերով առաջ վազել, երբ հանկարծ իր հանում
երեխայի լացիցձայն լսեց ու հետ դարձավ, այնքան աղի-
ողորմ էր այդ ձայնը:

Համարյաց ցեխի մեջ, փալառների վրա պառկած էր մի
կին և ըստ երեսոյթին զառանցում էր: Նրա կողքին կանգ-
նած չորս կամ հինգ տարեկան մի երեխա անօգնական ու
սարսափած հայացքով մեկ մորը, մեկ շուրջն էր նայում և
կանչում էր. «Կանե, Կանե»:

Մի ստարորիկ կին լայն փեշերով քամի անելով ոլ-
լընթաց անցավ Տիւլոյի մոտով՝ ասելով.

—Եռել է, փախի:

Տիկոն մի քայլ արագ, որպեսզի փախչի խունքայով
հիվանդ կնոջից, բայց մի անհայտ ուժ կարծես հետ պա-
հեց նրան: Տիկոն ետ դարձավ, պաղեց ու մեջքը դեմ արագ
երեխային առելով.

—Արի շալակա:

Երեխան, որ արդեն սովոր էր շալակով ճանապար-
հորդելու և կարծում էր, թե Տիկոն իրենց ազգականներից
է, իր փափուկ մարմինը զցեց նրա մեջքին և ձեռքերով
զրկեց նրա վեզը: Տիկոն անմիջապես բանեց նրա ազդրե-
րից ու բարձրացավ: Նա արագ գնում էր զեպի գաղթա-
կանները: Նա չէր մտածում այն մասին, թե ինքը
ուր է տաճում երեխային և ինչ կիսի հետո նրա
զիմով անցնում էր այն միտքը, որ եթե մայրը մեռնի,

Երեխան մենամենուակ կմնաւ այս առնմարդաբնակ հարթության
վրա, անձրեի տակ, քամու առաջ, իսկ երր մթնի, նա վա-
խց կմեռնի, կամ գայլերը կուտեն նրան: Տիկոն ուզում էր
երեխային մարդկանց մոտ տանել, թեկուզ անծանով
մարդկանց մոտ: Նա հրշեց երկու պառավ կանանց,
որոնք կարեկցում էին որբ երեխային, նայում էին մինչև
իր վերադարձը, բայց ոչ ոք չվերցրեց նրան մշտապես պա-
հելու և Տիկոն շատ զբկանքներ էր կրում Մուրազի պատ-
ճառով: Նա երեխն մտածում էր, որ առանց նրան իրեն
համար շատ ավելի հեշտ կլիներ, ինքը քիչ կչարչարփեր,
բայց խղճում էր երեխային, որն այնքան էր ընտելացիւ
իրեն, որ ամեն անգամ Տիկոնի հայտնվելը ուրախ ճիշով
էր գիմազուրում: Իսկ որոշ ժամանակ անց նա ինքն էլ այն-
պիս ընտելացավ փոքրիկ Մուրազին, որ մոռանում էր, թե
նա իր հարազատը չէ, օտար է. Նա իր կյանքը չէր պատ-
կերացնում առանց Մուրազի, ում համար պետք է աշխա-
տեր հապա: Նա ոչ ոք չուներ աշխարհում, բացի Մուրազից:

Բայց այդ ժամանակ ահա մարդիկ վիրավորեցին նրան,
այնպիս վիրավորեցին, որ այնուհետև Տիկոյի իրնե բարի
որտում մեղմությունն ու կարեկցությունը փոխվեց կող-
տության ու անհաշտության: Այդ արգեն Ալեքսովումն էր:
Նա Մուրազի հետ միասին ազգում էր մի կոշկակարի տան
խոհանոցում: Կոշկակարի կինը էր վրա էր վերցրել Մու-
րազի խնամքի մի մասը, որովհետև Տիկոն ջրաղացում գործ
էր գտել և ամեն առավատ Մուրազի համար բաղարջ էր բե-
րում, որից կինը բաժին էր հանում իր երեխաներին:

Մի առավոտ, երբ Տիկոն կտորի մեջ փաթաթած բա-
ղարջը ձեռքին գալիս էր տուն, Մուրազը փողոց դուրս վա-
ղեց, Տիկոյին ընդառաջ: Տիկոն շտապով Մուրազին մեկնեց
իր բերած բաղարջը:

Այդ ժամանակ էր ահա, որ գիմացի մայթից մի կին
խելագարի նման վրա վագեց, խեց Մուրազի թաթիկը, մի
պատնալի հայացք ձգեց Տիկոյի վրա ու՝

— Սալիք, Սալիք, Մուրազը, Մուրազին գտա, — ասելով

վագեց գեալի փողոցի անկյունը, երեխային քաշ տալու թեքվեց անկյունից ու անհայտացավ:

Տիկոն երեք չի մոռանա Մուրազի վերջին հայացքը: Անկյունից թեքվելիս երեխան զլուխը ետ թեքեց ու այն ձեռքով, որով բռնել էր բաղարջը, մի անհասկանալի շարժում արեց: Բայց կինն այնքան արագ էր քաշ տալիս նըստան, որ երեխան ոչինչ չկարողացավ թոթովել:

Տիկոն շվարած կանգնել էր: Հետո հանկարծ պոկվեց աեղից ու վագեց գեալի անկյունը, բայց այն կողմում ոչինչ չտեսնելով, նա նորից շփոթված կանգնեց: Ո՞ւր է վազում, ինչու ուղում է ետ խել Մուրազին, ինչ իրավունքով, խոմ նա իր իսկական եղբայրը չէ: Իսկ այդ կինը, կամ Սալվին, որին նա կանչեց, երեկ Մուրազի հարազատներն են: Ո՞ւմ մոտ էր տանում կինը Մուրազին, գուցե մայրը չի մեռել գուցե Սալվին նրա մայրն է, և եթե մայրը չի մեռել, ուրեմն ինքը ոչ մի տոանձին բան չի արել փախցնելով երեխային մոր մոտից: Բայց այնուամենայնիվ ինչ է ինքը, ինչու ոչ ոք չհարցընեց, թե մոլ է ինքը, ինչպիս է պահել Մուրազին, ինչ չարչարանքներ է կրել: Ինչու այդ կինն այդպես նայեց իրեն:

Տիկոն գանդազ մի քանի քայլ արեց փողոցում, նայեց բակից ներս: Ոչ ոք չկար: ԻնչՃ՛փնտուել Մուրազին: Հիմանա արդեն անտեր չէ, դտավ հարազատներին: Իսկ ինքը... Տիկոն ձեռքերը կոտրատելով նայեց շուրջը և առաջին անգամ իրեն բոլորովին մենակ զգաց, մոռացված, անտեր ու հալածական:

Եվ ահա նստել է այդ Մուրազը իր կողքին ու այնպես է նայում, կարծես բժիշկը ծանր հիվանդին, որին ուղղում է անպայման փրկել:

Եվ վարեչը չի կարողանում աշխատել, չի կարողանում կենարոնանալ: Նա չի ամուսնացել, հարազատներից ոչ ոք չի գտնվել: Նա աշխարհում միայն մեկին է սիրել, կարեկցել իր պատանեկական մաքուր սիրով: Բաժանվելուց հետո էլ սիրում էր, հիշում: Սակայն երբ ժամանակ անցավ, կար-

ծում էր, թե մոռացել է, էլ երբեք չի հիշի: Բայց անս նստել է նա իր կողքին, արգեն հասուն և այնքան շնորհա-քով մի երիտասարդ ու նայում է իրեն, նայում... Բավա-կան է ասել—այդ եռ եմ, Մուրազ, Տիկոն, որին դու եղ-բայրդ ես համարում, և համոզված է, կիտաթաթվեն, լաց կլինեն, որտոները կթեթևանաւ, Բայց ոչ, նա գրասենյակում այդպիսի տեսարաններ չի կարող սարքեր «Հիմարություն» է, հիմարություն, պետք է թագցնել, բնչ կասեն այս մարդիկ»:

Աշխատանքից հետո կանացք գնացին և գրասենյա-կում մնացին միայն վարիչն ու Մուրազը: Վերջինս ուղում էր մենակ մնալ Մխիթարյանի հետ՝ հասկանալի դիտավո-րությամբ: Բայց Մխիթարյանը բոլորովին չնայելով նրա աչքերին, ասաց, որ ինքը ուրիշ մարդ է, նույնիսկ ժպտա-լով ավելացրեց, թե ամեն մի մարդ իր նման մեկն ունի աշխարհում և Մուրազն անկասկած սխալվում է:

Իսկ Մուրազը ընդհակառակը, նրա խոսակցության բանազբոսիկ ձևերից ու խուսափուկ հայացքներից ավելի ևս համոզվեց, որ նա ինքն է, բայց չէր հասկանում, թե ինչու Տիկոն չի ուղում խոստովանել: Նրա բնավորությու-նից գատելով պետք էր ենթադրել, թե վախենում է թույլ ու զգայուն մարդ երեսը:

Այս բացատրությունից հետո, մի շաբաթ անց, մի օր Մուրազը մի տարիքով կնոջ հետ կանգնած էր դեպի գրա-սենյակ ատանող միջանցքում և ցածրաձայն տսում էր նրան:

— Տես, դու առայժմ իրեն ոչինչ չառես, հետո, իմ գնալուց հետո, կգաս, դուրս կկանչես, կտաս իմ նամակը, տուն կիրավիրեն, կպատվես, նա ոչ ոք չունի:

Հետո նա այդ կնոջը տարավ գրասենյակ և գուան մոտ ականջին փափաց: «Ուրիշ մարդիկ չկան, միայն նա է»:

Կինը կամացուկ ներս մոտավ և միանգամից նայեց Մխիթարյանին: Մինչ այդ նա կարծում էր, թե որեկ կերպ իրեն ծանոթ կինի այն մարզը, որը սովոր տարին, այն գժոխաքի ժամանակ, պահել է իր եղբորը, բայց ոչ, նա ոչ մի տեղ չէր տեսել Տիկոնին:

— Քույրու է, ծանոթացեք — ասաց Մուրազը և երբ կինը
արասանեց իր անունը, Մխիթարյանն այլայլից:

Մուրազը նկատեց Մխիթարյանի այլայլումը, սպա-
նեց մի բռպե: Գուցե հիմա Տիգրանը որմեն բան կառի, կը-
խոսառվանի, կտամի դեպքը, բայց որովհետեւ այդպիսի
բան չեղավ, նա մի փոքր հուսահատված, իր ուժեղ ձեռքը
մեկնեց Մխիթարյանին:

— Գուում եմ, հենց էսօր, կարծեմ ուղիղ սազմաձա-
կատ, ով դիտե, գուցե այլևս երբեք չհանդիպենք, ընկեր
Մխիթարյան:

Մխիթարյանն ուշքի գալով նայեց Մուրազին: Սրաի
պարկերն արագացան, հանկարծակի քըտինք եկավ գեմքի
վրա: Նա չկարողացավ, ինչպես մյուս ընկերներին ասել՝
«Հաջողություն, հաջողություն»: Նա լուս կանգնել էր և
հեռում էր: Հետո բանեց Մուրազի ձեռքը, մնաց այդպիս
կանգնած, նրան նայելով, ապա հանկարծ մոտ քաշեց Մու-
րազին ու փաթաթվեց նրա զողով:

— Տիկու ազագակեց Մուրազը և գրկեց Մխիթարյանին:
Այսուղ Տիգրան Մխիթարյանը չկարողացավ զաղել
իրեն և հեկեկաց:

Դրասենյակի աշխատողները զարմացել էին: Երբ
Մխիթարյանը հանգստացավ և լուս արցունքներն էր ուր-
բում, Մարջանյանը մոտեցավ Մուրազին և հարցնում էր,
թե որտեղից են նրանք իրար ճանաչում, ինչու Մխիթա-
րյանն այդպես հուզվեց, չե՞ որ նա լաց լինելը փոքրողու-
թյուն էր համարում:

— Ե՛ս, քուրիկ ջան, էղի էղվա բան է, — նույնուկու
արցունքները սրբելով ասաց Մուրազի քույրը:

Իսկ Մխիթարյանը ճանապարհ գցելով Մուրազին, ա-
սում էր.

— Ա՛յ, երբ որ հազթանակով կվերադասնաս, կլուծես
մեր ժողովրդի վրհյը գերմանացիներից, կնսունք միասին
ու կպատմենք մեր զլիսով անցածը,

Մուրաղի գնալուց հետո գրասենյակ եկան նոր մարդկան բայց վարիչի և աշխատողների միջև այլքս ոչ մի ընդհարում չեղավ։ Աշխատանքն ընթանում էր փոխադարձ բժիշկներն և հարգանքի մթնոլորտում։

Միսիթարյանն ավելի անհամբերությամբ, քան ուրիշ ները, սպասում էր Մուրաղի նամակներին և բավական է նամակ ստանար, գրասենյակի բոլոր աշխատողները պետք է լսեին, թե ինչ էր գրում Մուրաղը ռազմաճակատից։

ՃԻԱԽՈՏՄԱԳՈՐԾՆԵՐԻ ՕՂԱԿՈՒՄ

Երեկո էր, երբ նոր նշանակված ագիտատորը դուրս հկանէլ փողոց։ Նա շարունակ գնում էր ծանոթ, ծուռ ու մուռ փողոցով և դիտում էր շուրջը։ Նրան արքեցին էր վաղ գարնան շունչը, արթնացող հողի բուրմունքը։ Աչ ծանոթին կային, ոչ ծառերն էին ծաղկել բայց օդի մեջ տարածված բուրմունքը նրանց գալուստն էր ավետում և դրանից նրա սիրտը լցվել էր ուրախությամբ ու սիրով՝ դեպի կյանքն ու բնությունը։

Գյուղատնտեսուհի Նարգիզը ամեն տարի այս օրերին որոշում էր փոխել իր պրոֆեսիան։ Ի՞նչ տարօրինակ բան—հեղնանքով մտածում էր նա ինքն իր մասին,—գործ ունի ծխախոտի, այսինքն փաստորեն թունավոր բույսի հետ, որը մարդուն ոչ մի օգնութ չի բերում, ընդհակառակը, նույնիսկ վնասում է, այնինչ բազմաթիվ այլ տեխնիկական բույսեր, որոնք օգտակար են կյանքի և մարդու առողջաւթյան համար, քիչ են տարածված։ Կընարի գրանցից մեկը, գիտական հայտաբերումներ կանի։

Բայց այսպես մտածում էր նա պատերազմից առաջ։ Պատերազմի տարիներին փոխվեց նրա վերաբերմունքը դեպի ծխախոտը։ Ծխախոտի թուփը, որ առաջներում նրան առելի էր թվում իր միապաղապահ կանաչ գույնով, հիմտ գեցեցիկ էր թվում և նա ցանկանում էր, որ այդ թուփը փարթամորեն աճի, բազմաթիվ տերեններ արձակի։ Հանուն գրա էլ հիմա նա գնում էր կանանց մեջ ագիտացիա անելու։

Ծխախոտի մասնագետը 40 տարեկան կին էր, գաշտերի

ու բույսերի ջերմ սիրահար, շրջանում ամենքի կողմից ճանաչված։ Գլուխը բայց, զագանակագույյն, խիտ գանգուր մազերի ծայրերը քամուն տված նա գնում էր ու իր կապույտ, մեծ աչքերով շարունակում էր նայել շուրջը, բայց ոչ թե գյուղի տներին, այլ լրջակա բլուրներին ու հովիտներին, որոնք դեռևս երեսում էին հրեկոյան գորշ մշուշի մեջ։ Գյուղը թառած էր բլրի վրա, որը բարձրանում էր ահագին ձորի մեջ, իսկ ձորի երկու կողմերում նորից բլուրներ էին ու նորից ձորեր։ Այդ ամենը նրան ծանոթ էր, Ահա այնտեղ, ձախ կողմում, գյուղին մոտ գտնվում էին ջերմոցները, իսկ գյուղից վերև՝ այն սրածայր բլրի հետեւում, ուր «Մաֆլի» կոչվող հովիտն է ընկած, գտնվում են ծխախոտի ամենալավ դաշտերը և ջերմոցները։ Գյուղի ջերմոցները բարձր տեղում են, այնտեղ սածիլն ուշ է հասնում, իսկ հովտի ջերմոցներում, ընդհակառակը, սուծիլն ավելի շուտ է հասնում, այնտեղ վաղն էլ կարելի է ծխախոտի ցանք սկսել։ Բայց ինչպես վարվել երբ այնտեղ ջուր չկա, ճանապարհն էլ գեպի Մաֆլու հովիտը՝ փակ է։ «Իսկ գարունն այս տարի ուշանում է, ծխախոտի ոլլանը վասանդի տակ է»։ Նա դանդաղեցրեց քայլերը։ Մինչև առ կումը հասնելը ուզում էր որոշել, թե ինչպես խոսի օգակի անդամների հետ, որ նրանք հանձն առնեն ջուր տանել հովիտը այն ճեռվ, ինչպես ինքը որոշել էր այս գիշեր...»

Նոր օգակի անդամներին նարգիզը լավ չէր ճանաչում, գոնե այդպես էր թվում իրեն։ Երեք տարի էր, ինչ նա աշխատում էր լրջանի ուրիշ գյուղերում, իսկ այս տարի ավելացրել էին Վերին Կ. գյուղի ծխախոտի ցանքի տարածությունները և այդ պատճառով գյուղատնտեսին նորից այսեղ էին ուղարկել։ «Բոլորը կանայք են, — շարունակում էր մատրալ աղիտատըրը, — ում որ հիշում եմ, դեռ այն ժամանակ ամենաքիչը երեք երեխա ուներ, այդպիսիները կդժվարանան կես գիշերին վեր կենալ...» Բայց նա որոշեց, «Ե ինչ էլ լինի, պետք է գլուխ բիրել հովիտը ջուր տա-

Նելու գործը, ջրել նոր անկած սածիները, արագացնել
ծխախոտի ցանքը:

Նա արգեն հասել էր ակումբին, որի պատշաճը վո-
ղոցից բաժանվում էր մի ահագին փոսով: Այդ փոսի վրա
փայտե կամուրջի նման մի անցարան էր շինված; որն այս
ասքի նորոգել էին: Բայց անցարանի կողքին նոր ամրա-
ցրած փայտերը այնքան հղված ու մաքուր էին, որ փոսի
ցեխի հետ անմիջապես աչքի ընկնող հակագրություն էին
կազմում: Այդ պատճառով Նարգիզը ձիպոտով բարկացած
խփեց իր վերարկութ փեշերին ու կոշկներին, այդ ձեռվ
թափ տալով գրանց վրայից ցեխի մեծ կտորները: Հետո
նա մտավ ակումբ, որի դռուը կընկի վրա բաց էր: Ակում-
բում ոչ ոք չկար, բայց երկում էր, որ հենց նոր այդտեղից
շատ մարդիկ էին գուրս դնացել: Անկարգ կերպով, այս ու
այն կողմ աթուաներ ու երկար նստարաններ էին գրված,
արգեն վերցված վառարանից թափված մոխիրը դեռ չէին
հավաքել: Կողքի պատից կախված էր մի հին, արգեն խու-
նացած քարտեղ, որի վրա կարմիր ու կապույտ մատիտով
նշաններ էին արված, սլաքներով ինչոր բաներ էին
ցույց տրվում: Նարգիզը մոտեցավ քարտեղին: Մատիտով
արված նշանները ցույց էին տալիս մեր և գաշնակից զոր-
քերի կողմից գրաված քաղաքները, իսկ սլաքները՝ ուղ-
մանակատաների ուղղությունը, բայց նշաննակված էին շատ
վաղուց: Դրանից և Նարգիզը գդգոհ մնաց: «Գուցե թարմ
նորություններն ուրիշ քարտեղով են ցույց տալիս»—
մտածեց նա ու հետ նայեց: Բայց դիմացի պատին քար-
տեղ չկար, այլ կար մի փոքրիկ պատի թերթ:

Որքան նրան թվաց, այդ պատի թերթը թարմ էր և
կախել էին մի քանի օր առաջ, որովհետեւ այնտեղ արդեն
խոսվում էր գարնանացանի առաջիկա խնդիրների մասին: «Արուսի և Սաթոյի օղակները մըցում են»—կարդաց Նար-
գիզը և նրա հողմահար, կոպտացած դեմքի վրա ուրախու-
թյուն և հետաքրքրություն երևաց: «Աշխատում են, մինչև

անգամ արդեն մըսում են» — ասաց նա ինքն իրեն։ Ոտնաւ ձայներ լսելով նա ետ նայեց։

Գլխին սպիտակ մեծ շալ փաթաթած մի աղջիկ մտավ ակումբ և տեսնելով զյուղատնտեսին, շվարած կանգ առավ։ Իսկ ծխախոտի մասնագետը վայրկենապես փոխեց դեմքի արտահայտությունը։ Նա զայրացած ոտից գլուխ չափեց աղջկան, մոտեցավ նրան և ասաց։

— Դժւ ես ակումբի վարիչը, աղջի, էս որաեղ ես, լսի դիտես, թե ակումբու ինչ օրի է, ոտքերդ էլ դրառմ չես սրբում, սա ջահելլ դործ է, քեզ եմ հարցնում։

Նարգիզը ցույց տվեց շուրջը։

Աղջիկը մի քայլ ես գնաց, ամաչելուց, թե վախենաւոց կծեց շրթունքը և չկարողանալով ուղիղ նայել զյուղատնտեսի աչքերին, շփոթված բարձրացրեց սեղանի ծայրից անփութորեն կախված կարմիր, խունացած կտորը։

— Քիչ առաջ կոլխոզվարչության ժողովն էր ըստի, հետո էք գե, կարացի ոչ։

Նարգիզը աչքերը պլացեց ու դարձյալ մի քիչ մոտեցավ աղջկան։

— Ի՞նչ կը թություն ունեմ։

— Միջնակարգն եմ ավարտել։

— Բայց զու բարբառով ես խոսում, թերթն էլ ես էդ ողես կարգում կոլխոզնիկների համար։

— Ո՞նց թե, — վիրավորվեց աղջիկը, — թերթում ոնց գրած ա, հընենց էլ կարգում ենք, դե որ մեր գեղումն ըստ ենց են խոսում...»

Այսերի վերեւմ, աչքերի մոտ փոսիկներ գոյացնելով, աղջիկը ժամաց և նայեց Նարգիզին։

— Մեր գեղըցիք կծիծաղեն, կասեն զարգացել ա, զրքի լեղով ա խոսում։

Աղջիկը կարծում էր, թե Նարգիզը վերջապես կժաման կոկոի կատակեր նա մի քիչ լսել էր Նարգիզի մասին, զիւ տեր, որ նա չար չե, բայց սարսափելի բարկացկոտ է և խստապահանջ։ Եվ, իրոք, Նարգիզը շարունակում էր իւ

մեծ, կապույտ աչքերով, առաջվա պես անբավականությամբ նայել նրան:

—Դու քեզ արդարացնելու համար ես գյուղացիներին վկայակոչում. նրանք ըոլորովին էլ չեն ծաղրի բարբառով շխոսելու համար:

Աղջիկը շարունակում էր լոել և հարցերին չեր պատասխանում, իսկ նարգիզը ասես մտադրվել էր իր զայրույթը թափել նրա գլխին:

—Սովետական դպրոց եք ավարտում, լիդու և գրականություն եք սովորում, ինչ խոսք, պետք է զարգացած լինել, սա ձեր պատերի դառը չի, համականման եք:

Հետո նկատելով, որ աղջիկը շփոթված ու խեղճացած նայում է իրեն և նրա ջահեց կարմիր այտերից անհետացել են այն գեղեցիկ փոսիկները Նարգիզը մեղմացավ և գնալով դեպի պատի թերթը, արդեն խրատական տոնով ասաց աղջկան.

—Դու թիրես կարող ես ուրիշ տեղերում խոսել այնպես՝ ինչպես ցանկանում ես, բայց ակումբում պետք է խոսես միայն գրական լեզվով, սա կուլտուրական վայր է, այստեղ քեզնից բան պիտի սովորեն: Դե, հիմա հավաքիր, կարգի բեր ակումբը, դու չգիտես որ հիմա մարդիկ պիտի գան:

—Գիտեմ, բայց չգիտեի, որ ազիտատորը գուք եք. —պատասխանեց աղջիկը և մտքում ակնլացրեց. «Որ իմանայի, ես ժամանակին մաքրել կտայի»:

Նարգիզը, որ այժմ ուշադիր, բայց մեծ գժվարությամբ, որովհետև արդեն սկսում էր մթնել, կարգում էր պատի թերթը, աշխուժով դարձավ դեպի ակումբի վարեչը:

—Իսկ պատի թերթն ավ է գրել:

Աղջիկը շփոթվեց, առի՞ թե չասի, որ ինքն է գրել լավ բանի համար է հարցնում, թե վաստ երեխ շատ սխալներ է արել... Դժվար... այդ կողմից նա բավական ինքնուժուահ էր:

—Ես եմ գրեք ընկեր նարգիզ:

—Ապրես, զրելու կտղմից լավ ես:

Աղջիկը չպատասխանեց: Բայց նրա թշերի վերևում նորից հայտնվեցին փոռիկներն ու անհայտացան և աղջիկը պահարանի գլխից իջեցրեց լամպը, վառեց և մեծ եռանդով, ընդամենը մի քանի րոպեում կարգի բնրեց ակումբը:

Դրսից բարձրաձայն ծիծաղ լսելով, նա ասաց.

—Ընը, Սաթոն եկավ:

Երկար, շեկ հյուսերը կրծքից թիկունքին նետելով ներս մտավ մի բարձրահասակ, թիկներ, լիքը կրծքով ջահնել կին: Նարգիզին տեսնելով նա ևս կանգ առավ ակումբի մեջտեղում ու ժպտաց, որից նրա պինդ, սպիտակ-կարմիր այտերը կարծես գունդ եղան փոքրիկ քթի երկու կողմերում:

—Ընկեր նարգիզ, էղ ինչ լավ է էլել որ ձեզ են զարդել մեղ ագիտատոր: Աշխարքից թամուզ բեխարար ենք ըլեւ:

—Բայց ուշ եք դալիս, մեր են մյուսները:

—Կամաց-կամաց են գալի, չգիտեք մեր կնանց խասիաթը: Էս ըրեխին ջուր տուր, էն ըրեխին քնացրու, էս մինը բռովիել ա, խաթրն առ: Դե ինձ համար ինչ կա, ես որ վախտ ուղենամ կգամ, ըրեխա չունեմ, բան չունեմ, իմ ըրեխեն իմ սկեսուրն ա, ես էլ հո նրա ըրեխեն եմ:

Սպա մի փոքր լրջանալով ավելացրեց.

—Համ էլ հմի օղակավար եմ ախր:

—Այ թե ինչ, օղակավարը դու ես ուրեմն և մրցության մեջ ես մտել—ուրախ ասաց նարգիզը: Իսկապես նա մի րոպե ուրախացավ, որ գոնե օղակավարը երեխա չունի, բայց և իսկույն հարցը եց.

—Բա ինչո՞ւ դու երեխա չունես:

Սաթոն ամաչելով գլուխը կախեց ու իր փարթամ հյուսքի ծայրի հետ խաղալով ասաց.

—Մի շաբաթվա պսակված էինք, որ պատերազմն ակսվեց ու մարդիս բանակ տարանտ:

Նարգիզը ուշագիր նայեց ջահնել կնոջը, դանդաղ մուռեցավ ուղանին ու մի թեթև հառաչելով նստեց:

— Նամակ կա, — կարեկցալսոր հարցը եց նա:

— Բա ո՞նց ուրախ պատափանեց Սաթոն հպարտ շարժումով նորից կրծքին դցելով իր ոսկեպույն հասաւ հյուսքերը:

— Եղ լավ է, իսկ դու օղակի ցուցակն ունես:

— Գիտեի, որ պետք կդա, — ասաց Սաթոն ու շատակ ծոցից հանելով օղակի ցուցակը, մեկնեց նարգիզին: Հենավելով սեղանի ծայրին, նա սպասում էր իր օղակի աղիւտառորի նոր հարցումներին:

Նարգիզը մատը դըեց ցուցակի առաջին աղջանվան վրա.

— Աս նա է, որ էն տարին աշխատում էր չորտանոցում:

— Այս, նա է:

— Իսկ այս մեկը կոլխոզի հախափահի կինը չէ՞, եղիազարյանի Հիմի աշխատմում է, իսկ մարդը...»

— Բանակումն է, շտապ վրա բերեց Սաթոն, — շքանշան է ստացել:

— Ես էլ վեց երեխա ունեցող թագուն է, թե ուրիշ թագուն է:

— Էն ա, հմի յոթն ունի, փող ա ստանում:

Նարգիզը այսպիսով ճանաչում էր օղակի համարյառուսը անդամներին: Նրան բոլորովին անծանոթ էր ցուցակի միայն վերջին անունը:

— Էս ո՞վ է, Հայկուշ Սահակյան:

— Ես մինը սկի աշխատել չեմ, ընկեր նարգիզ, անցյալ տարի աշխօրեցի մինիմումը զոսով կատարեց, չդիտեմ, կը ճանաչես թե չէ, բըիգաղիք Բարասի կնիկն ա, էն որ մըըցումը մի գլուխ տանում էր, Մոսկվա գնաց գյուղատնտեսական ցուցահանդեսին, մեղալ ստացավ ու կնկանն էլ հնչքան բաներ էր բերել:

Նարգիզը ժպտալով նայում էր Սաթոյին: Նա բըիգաղիք Բարասին շատ լավ էր հիշում, բայց հիմա նրան-

հետաքըքըողը Բարսոսի կինն էր և նա ոպառում էր Սա-
թոյի վերջաբանին: Բայց Սաթոն դեռ շարունակում էր հիշ-
շեցնել:

— Են էլի, որ երեք տխպեր էին ու մենակ ինքն էր
պատելված, իրեքով աշխատում էին ու բոլորը մի տեղ հա-
վաքում, ուզում էին մի մեծ տուն շինել հլա հիմքն
էլ գրին, բայց իրեքով էլ բանակ դնացին ու կիսատ մը-
նաց: Մերը, կնիկը, երեխեքը, դե էնքան ունեին, որ մինչև
հմի առանց աշխօրի էլ ապրում էին, համա հմի կամաց-
կամաց դատարկվեցին, Հայկուշն էն անզամ ինձ առավ,
որ ուզիւչուզի էս տարի պատի աշխօր անի:

— Իսկ Բարսոսից նամակ կմ:

Սաթոն անորոշությամբ գլուխն օրորեց:

— Ախաղորներից մնիցը սև թուղթ ա էկեւ, էն մնիցն ու
Բարսոսիցն էլ խաբար չկա:

Կանայք կամաց-կամաց գալիս էին, «բարի իրիկուն»
ասում ու նստում պատերի տակ դրված աթոռների ու
նստաբանների վրա: Ներս մտավ նաև յոթ երեխայի մայր
Թագոն: Նա գուցե կանանցից ամենից տարիքովն էր, գըշ-
խին սև զիխաշոր էր կապել բայց գունքերի մոտից ուղրել
ու գուրս էր բերել դեռևս բոլորովին սև, հաստ մազերը:
Մասնիկ, սև բարի աչքերը լամպի լույսի տակ կկոցելով,
նա նայեց Նարգիզին, մոտեցավ, կանգնեց նրա զիխավերեն
ու ընտանեբար ասաց.

— Բարով ես եկեւ Նարգիզ ջան, հենց դըուստ քո
տեսությանն էինք կարոտ, հազիվ մեջներս մի տղամարդ
տեսանք:

Կանայք ծիծաղեցին, ծիծաղեց նաև Նարգիզը ինքը
և իր ընդուստ ձայնով, որը երբեմն խօսապես ոչ թե հնչե-
ղությամբ, այլ միայն կոռպիս շեշտերով, հիշեցնում էր
տղամարդու ձայն, ասաց.

— Բա ինչ պակաս տղամարդ եմ, տոեք, որ տղամար-
դուց պակաս գործ եմ անում:

Կանանցից մի քանիսը դարձյալ ծիծաղեցին, մի քա-

Նիսը քաջալերող խոռքեր ասացին Նարգիզին, բայց հանեկարծ բոլորը դարձան դեպի դռւուց Թուների մեջ կանգնած էր օղակի նորեկ անդամը, որը նայում էր կանանց ու երեվում էր, որ չղիտի, թե ինչ պետք է անի, առաջ գա նստի, թե մաս գոների մոտ Նըա զլիսից մետաքսե ծաղկավոր դրխաշորը ընկել էր ծոծրակին ու երեւում էին սև, փափուկ ու նոսր մազերը, Դեմքի վրա, ոքը կարծես կաթի գույն ուներ, աչքի էին ընկնում բարակ շարժուն ունքերը և նշանեւ, անմիտ ժպտացնող աչքերը:

—Արի, դրնաղ հո չես,—ասաց նրան օղակավարը և իր կողքին աթու ցույց տվեց:

Հայկուշը միւերկու քայլ առաջացավ և աչքերը չըհեռացնելով ներկաներից ու հատկապես նայելով Նարգիզին, նստեց Սաթոյի կոպքին, գոնից ոչ այնքան հնոու:

Կանայք սպասում էին, թե ուր որ է ագիտատորը թերթը բաց կանի բան կլարդա ու տուն կուղարկի ժողովրդին, իսկ Հայկուշը տաաջին անդամն էր գաւակս զբույցի և պատկերացում չուներ դրա մասին: Նա կարծում էր թե ժողով է լինելու, զեկուցելու են, բայց վերջում թատրոն չի լինելու, ոչ էլ ջահելները առաջվա պես կերպեն ու կպարեն ժողովից հետո, որովհետև գյուղում մասցել են ջահելներից միայն աղջիկները, նրանք էին հոսիրտ չունեն ուրախանալու: Այդ պատճառով նա սկսորջ խորհրդով հետը բերել էր կիսատ գործած գուլպան ու երբ կանայք սկսեցին գետից-դենից խոսել նա իր լայն շորի ծոցից հանեց գուլպան ու սկսեց գործել սկզբում զրույցին միանդամայն անուշաղիր:

— Սուում ես նախադան մարդդ հիմի էլ ֆրոնտումն է շքանշաններ ստանում, համ, Վարսո—հնչեց Նարգիզի իշխող ձայնը դու բախտավոր կնիկ ես:

—Բախտավոր եմ, բա բախտավոր չեմ—ձեռքերը կըծքին ծալելով ու կարծես իր բախտավորությունը ավելի շեշտելու համար ոտքը ոտքի վրա գնելով ասաց ձվաձեւ

գեմքով, մեծ ու դուրս ընկած ճակատ ունեցող մի էին, որ
հստել էր Թագոյին մոտիկ:

Հայկուշը մի բռպե աչքերը բարձրացրեց խոռոշ կնոջ
վրա, նրա ունքերը խաղացին, երեխ որևէ քաղցը հիշողու-
թյունից, բայց նա կը կին անտարբեր կախեց աչքերը և
շարունակեց գործել իր գուլպան:

—Մարդկ ի՞նչ է գրում, նամակներից չունեմ մոտպ, —
շարունակում էր հարց ու փորձը նարգիզը:

—Ես էրեկիս ջանելն եմ, որ մարդիս նամակները ծո-
ցիս պահեմ, —կատակով ասաց Վարսոն, —նամակները ըրե-
խեքն են պահում, նարգիզ ջան:

—Բա ի՞նչ է գրում, չես հիշում:

Նարգիզը ամնափց ավելի ցանկանում էր, որ կոլխոզի
համեմատ նախագահը գրած լիներ ծխախոտի մասին, այն
մասին, որ նրանց, կարմիր բանակայիններին ծխախոտ է
հարկավոր ուղարկել:

Վարսոն, իհարկե, չէր գուշակում նարգիզի մտքերը,
չպիտեր, թե ինչու է նա այդքան հետաքրքրվում իր մար-
դու նամակներով, այդ ժամանակ ով չէր հետաքրքրվում
ուղղմանակատացինների նամակներով:

—Ի՞նչ պաի գրիր հա ջարդում ենք զերմանացուն
ու առաջ ենք գնում, էրեխեքիս լավ պահի, զուշաղ կաց,
աշխատելուց մի վախի, շատ կաշխատեա, կոնդանաս, թե
որ մին էլ շատ նեղն ընկնեա, նամակ գրի ինձ, հրամանա-
տարիցս թուղթ կղրկեմ, քեզ կօդնեն:

Այս խոսքերի վրա կանայք ինչոք փսփռացին, բայց
Վարսոն ավելի հպարտ բռնելով զլուխը, շարունակեց.

—Բա, նարգիզ ջան, շքանշան էլ հո, ստացել աւ:

—Է՞հ, ուրեմն ֆրոնտում ամեն ինչ էդպիս լավ է:

—Ի՞նչ լավ, մրտեղից լավ, այ ազիզ ջան, շատ նեղն
ենք ընկնում, գժվար օրեր ենք քաշում, առում է, ու է-
տենց վախտ էնքան ուտիլը աչքներիս չի գալիս, ինչքո՞ն
ծիրիլը:

Ու հանկարծ, ինչոր հույսով լուսավորված, վարսոն
գլուխը առաջ զցեց դեպի Նարգիզը:

—Այ մասնագետ ջան, կարալ չե՞ս էդ մեր փոստի նա-
շալնիկն մի խոսք հասկացնել, որ մի քիչ թութուն զըս-
կենք մարդիս:

Նարգիզը ծիծաղեց և սկսեց բացատրել թե ինչու
հնարավոր չէ ծանրոց ուղարկել բանակայիններին:

Այդ ժամանակ Հայկուշի ձեռքին գուլպայի ճաղերը
հանգստանում էին: Հայկուշը մեկ վարսոյին մեկ Նարգիզին
էր նայում ու նրա սրտում նախանձի նման մի բան էր
արթնանում: Վարսոյի մարդը կովում է, զյուղում էլ նրա
մասին շատ են խոսում, կինն էլ ուզում է ծանրոց ու-
ղարկել: Իսկ Բաբասը... Ինչ պակաս պատիվ ուներ նա էդ
նախագահի ժամանակ, ինչ պակաս աշխատող էր, իսկ հիմա
նրա մասին ոչինչ չեն խոսում, գերի է՝ պրծավ գնաց: Եթե
տեղեկություն չկա, ուշեմն գերի է: Ինքը Հայկուշը միշտ
գոն էր այս բանով, որ իր մարդը թեկուզ գերի, բայց
կենզանի է, մերօնք կհաղթեն, գերիներին էլ կազատեն, և
իր Բաբասը անվիաս տուն կդաւ: Լսելով կողմողի նախա-
գահի կնոջը, նա մի բոպե մտածեց, թե լավ կլիներ, որ
Բաբասն էլ նրա պիս կովում լիներ, նա էլ շքանշան ստա-
նար և այդպիս հպարտությամբ կարելի լիներ խոսել նրա
մասին: Բայց հաջորդ բոպեին մտածեց թե «Ի՞նչ իմանաս,
որ Վարսոյի մարդը մինչև վերջը ուաղ կմնա, իսկ Բաբասը
հո անպայման սաղ կմնա: Նա նորից սկսեց գործել գուլ-
պան, բայց այս անգամ նրա շարժումների մեջ ջղաձիգ
արագություն էր նկատվում:

Այդ ժամանակ նա լոեց Թագոյի մտահոգ ձայնը և
նորից մի բոպե թողեց գուլպան:

—Նարգիզ ջան, բա քո մարդիցն ու ախպորիցն ի՞նչ
խարար կա:

Հայկուշը հետաքրքրությամբ նայում էր Նարգիզին:
«Սրա մարդն էլ հո գերի չի»:

Նարգիզը աչքերը հասել էր առջև փոված կարմիր

կոտորին՝ ավելի ճիշտ՝ մի ու կետի վրա: Նրա դեմքի մկան-ները լսրվել էին. հոնքերը, որ մինչ այդ աչքի չէին ընկնում, վեր էին բարձրացել ու գեղեցիկ ճակատի վրա զույգ թրերի նման կարծես իշխում էին գեմքին, որպեսզի թռչյլ չտան մատնելու հոգեկան տանջանքը: Նարգիկին ուշաղիք նայող կանանց թվաց, թե չնայած այդ լարմանը, որը որ է՝ հիմա արցունքներ կլաթին նրա աչքերից, բայց մի վայրկյան անց՝ նարգիկը հանկարծ գլխով ու կրծքով հետ ընկալ աթոռի թիկնակին ու անփույթ ձևանալու համար կողքից վերցրեց իր ճիպուլը, զբեց ծնկներին և քողուով առաց.

—Ե՞ս, Թագու, իմ մասին չխոսենք, զուր է, կախըհնք:

—Վո՞ւյ, քոռանամ ես, վատ խաբար ես իմացել, իմանայի, չէի հարցնի:

—Բա քո մարդուց, լոելով խաբար ա գոլի, —ասաց կանանցից մեկը, —ախալերդ էս ասում են, գերի ա:

Նարգիկը լսրվեց, ուշաղը լույսին:

—Ամուսինս մահացել է գոսպիտալում, իսկ ախալուր մասին ձեզ մվ ասաց, թե գերի է: Իմ ախալերը գերի... Նա այս վերջին բառերն ասաց տյնովես զարմացած ու կշտամբանքով, որ կանանցից մի քանիսը իրենք ևս զարմացան: Եվ ամենից՝ ալելի զարմացավ Հայկուշը և կյանքում գուցե առաջին անգամ խոսեց հասարակական վայրում, շատ մարդկանց առաջ:

—Դե ինչ կա որ, գերի կլի ու պատելազմը վերջանալուց կգա, —ասաց նա միխթարելու առնուի, բայց իրոք նրան հետաքրքրում էր, թե ինչ կարծիքի են կանայք և հատկապես Նարգիկը գերիների մասին, կզմն արդյոք նըրանք, էլ ևւմ մարդն է գերի:

—Պատերազմը վերջանալուց կզա... արհամարհանքով առաց Նարգիկը: Ուրիշները կովեն իր տան ու տեղի, իր ոլատի, իր հողի համար, իսկ ինքը գերի... ինչ է, վախ-կոտ էր, գերմանացիների մոտ աշխատելն էր լով, թե պատվով մեռնելը... իմ ախալերը ձեռքերը վեր բարձրացնի

գերմանացու առաջ... Նա հանկարծ թեթևացած շունչ քաշեց և ուզդվեց աթոսի վրա:

— Իմ ախպերը գերի ընկնող չի, նրա պեսներին գերմանացիները բոնելուց սաղ չեն թողնում:

Հայկուշը ապշած նայում էր Նարգիզին: Նրա ուրախ, թոփումն ունքերը անշարժացել էին, զուլպան վայր էր ընկել նրա սիրտը խոցվել էր Նարգիզի խոռքերից, որովհետեւ նրան թվում էր, թե Նարգիզի ասած խոռքերը գերիների մասին ամբողջովին վերաբերում էին Բարսախն, իր ամուսնուն, որի մասին նա այն կարծիքն ուներ, թե նա աշխարհի ամենաքաջ և աղատվավոր մարդկանցից է: Վախենտ, Բարսաը վախենա... աշխատում է գերմանացիների մաս... Գերիներին աշխատեցնում և ով գիտի, ինչպես են չարչարում: Նա հանկարծ հիշեց ժողովրդի միջայնքան տարածված խոռքը. «Ես հո քո գերին չեմ» և զարմացավ, որ ինքը սիայն հիմտ է լավ պիսի ընկնում, թե ինչ բան է գերի:

Մի բավեռում բազմաթիվ, մինչ այդ անծանոթ մըտքերը պաշարեցին Հայկուշին: Նա համեստես կանու առավերանցից մեկի վրա, օհաբանն էլ իր կամքով գերի ընկած հո չի լինի: Ու այդ մաքից մի փոքր հանգստացավ: Մինչեւ այդ նրա համար կարեորն այն էր, որ ամուսինը կենադանի լինի, իսկ հիմտ առուվել կարեոր էր թվում նրա պատիվը: Մի փոքր զգաստացած նա վերցրեց գոզն ընկած գուրզան և այն է ուզում էր մի բան հարցնել երբ Նարգիզը ձեռքը թափ տալով շարունակեց.

— Ե՞ս, լավ ով գալու է, կդա, ով չէ, չէ, եկեք միք գործից խոռնեք: Դուք տեսնում էք, որ էս տարի գարունը ծանր զոնազի նման է գալիս մեր շրջանը, մնց պիտի անհնք:

— Ո՞նց պիտի անենք — առաջ կանանցից միկը, օքերը կտաքանան, սածիւը կհառնի, դաշտը կտանահնք, կցանենք: Ակումբի վարիչն զգաց, որ ազիտացիան նոր է սկըսում և ավելի լարված էր հետեռում Նարգիզին, իսկ Հայ-

կուշը ամսոսաց, որ վերջացակ խոսակցությունը գերիների մտախն և ինքը իրեն հետաքրքրող նարցի մասին որոշակի բան չիմացավ։ Այժմ արդեն նրա աշքերը ներքին տագնապով մեկ որան մեկ նրան էին նայում, նու գուլպան այլիս չեր գործում։ Նորպիզի առաջները զերիների մասին նրա մեջ հազեկան խոսվք էին տառջացրել Աշխատելով թագշնել այդ ներքին անհանգույնությունը, նա լսում էր կանաց նոր խոսակցությունը։

Նարգիզը վերջին կանջ առաջների վրա մտազբաղ դարձյալ մի բովն նայեց ուղանին փակած խունացած կը տորին, շայեց ծնկներին գրած ճիպուզ և մտածելով ասաց։

—Հենց բանն էլ էդ է, որ Մաֆլի գոտում օրերը շուտ են տաքանում, մեկ էլ տեսար էնսեղ դարուն է, իսկ էստեղ դյուզում, զես ձմեռ է։

Ակումբի վարիչը՝ որ նստել էր Նարգիզի կողքին, պատուհանի տակ, քանի անդամ արդեն տեղում անհանդիս շարժում էր արել ցանկություն էր զգացել ասելու նարգիզին։ «Իրեւ հրեա դուք էլ բարբառով խոսեցիք» բայց միշտ էլ զապել էր իրեն, որովնետե այս զրուցը շատ քիչ էր նման իր անցկացրած ագիտացիային, կանայք չեին քնում, տանու գործ չեին անում, ընդհակուակը լսում էին ու խոսում, կամ, ինչպես նա մտքում ասում էր, «ակուիվացել էին»։ Իսկ այս ամենը նրան պատկառանք էր ներշընչում նարգիզի նկատմամբ։

—Հա, —ի պատահան Նարգիզի խոսքերի առաց թագոն, —ընտեղ զարունը շուտ ու զալի, սածիլը շուտ ու հառնում, զաշտն էլ ջերմացներից մոտիկ ար

Նարգիզն ուղում էր, որ ունկնդիլներն իրենք ասեն այդ մասին և լսելով թագոյի խոսքերը, ցնցեց զուրկ մագերը և ուրախ շտկեց զլուխը։

—Իմ ասելն էլ էդ է, էլի, էնտեղ ցանենք վերջացնենք, մինչև զյուղում էլ օրերը տաքանան, հետո կսկսենք զյուղի դաշտերը ցանել Զենք ուշանու ու ցանքի պլաններն էլ կկատարենք։

Կանայք սկսնցին լուրջ կերտղով ասարկել նարգիզինը առում էին, որ Մաֆլում ջուր չկա, ճնարավոր էլ չէ այս-տեղ ջուր տանել, և որ այդ պատճառով ամեն տարի հովտի դաշտերն էլ մյուսների հետ են սկսում ցանել, թեև այս-տեղ օրերը շուտ են տաքանում:

Նարգիզը մի փոքր հուսահատվեց, —մի՞թե զլուխ չի դալու: Ակումբի վարիչը նկատեց այդ և կարելցությունը էր նայում նարգիզին: Բայց նարգիզը ժամալով բարձրացրեց զլուխը և որոշեց արդեն գործի զնել ամենագործոն միջոցը:

—Դե տոեք՝ չեք ուզում բանակին օգնել էլի, մնց պիտի էս տարի էղքան ծխախոտ տանք բանակին:

—Վա, ընենց բան ևս տառում, նարգիզ ջան, թե ճնար կա՝ զու տաս, բա որ մեր ձեռքին ըլի, բանակի համար ծխախոտ կիսնայմաք:

—Մեր ձեռքինը մեր ձեռքին է, —քունքերը տրորելով, իբր ինե մտածկոտ է, ասաց նարգիզը, այնինչ նա արդեն վստահ էր, որ կանայք կը նդունին իր առաջարկությունը: —Բայց մի քիչ դժվար գործ է, կանանց համար զժվար...

—Են, քու մերը չմեռնի, նարգիզ, զու հնարը զիանս, հալբաթ, թե չէ ընենց նո չէիր ասի, զի ասա, ասա, մի ամանչի, թե կարանք, հո կանենք:

Այստեղ օդակալար Սաթոն, որ զլսի էր ընկնում նարգիզի մտագրությունը, զայց, որ առաջենը ինքը պիտք է պաշտպան կանգնի իր ագիտատորի առաջարկությանը: Նա կանգնեց տեղից, շուրջը նայելով մի բռպի խաղաց իր ոսկեգույն հյուսքերի հետ, մի բռպի մտածեց և վերջնականագործ զլիի ընկնելով տաելիքը, ովկորված խոսեց.

—Զէ, կանանք, ինչ էլ ըլի, եգուց մեկ էլ օրը պիտի ոկանք Մաֆլում սածիլ տնկել, թե չէ ընտեղի սածիլը գերհառունացում կտա: Համ էլ էնքան դժվար բան չի, հրեն ձմեռ օրով Սարգիս բիձին մին-մին ուսով ջուր էր տանում ջերմոցները սածիլի համար:

Այստեղ արգեն կանայք համարյա բոլորը հասկացան,

Ենչ էր ուղղում ասել Ստթոն։ Այդ բանը Նարգիզին թհա-
թևություն պատճառեց, բայց լուրջ և նույնիսկ մոտախոն,
զիտակցելով, որ այնուամենայնիվ դժվար բան է տուածար-
կում կանանց, նա ասաց.

—Այս, ընկերներ, եթե բոլորս միասին մի տառ օր,
շատ չե, տաս օր, լույսը չբացված ուսով ջուր տանենք
Մաֆի, առանձին-առանձին ջրենք ամեն մի սածիլը՝
չթողնենք, որ սածիլները չորանան, շատ բան կշահենք,
եթե չտահմ, որ լրիվ կապահովենք ցանքի պլանի կատու-
րումն ու այս գժվար տարին Մաֆի բոլոր դաշտերից կը-
ստանանք առաջին տեսակի ծխախոտ։ Անմիտ բան կլիներ
ջուրը տանել սարի վեցով, մինչև տեղ հասնելը լույսը կը-
բացվի, սածիլը չի բռնի, պարզ է, որ...

Նարգիզն այսուղ մի բողեք կանգ առավ, սպառղա-
բար, մի փոքր տագնապով դիտեց կանանց։ Վերջիններու-
րում և ուշադիր բռնմ էին նարգիզին և նա զգաց, որ կա-
նայք շատ լավ հասկանում են, թի որ ճանապարհի մասին
է խոռքը... Դե, ինարկե, ոտրի զլիով անցնող ամենակարճ
ճանապարհի, որ պատի պես զիք էր, քարքարոտ, իսկ տեղ-
տեղ լզրծուն ցեխս... Եվ ինչ կտահն կանայք, կհամաձայնվեն
կժերն ուսերին բարձրանալ այդ սարը... Կարմաղ են երե-
խաներին տունը թողնել և լուսը չբացված դուրս գալ
տանից մինչև ուշ երեկո...

Վճռելով, որ հետագա բացատրություններն ավելորդ
են, և կանայք լիովին հասկանում են իրեն, նա մտերմա-
բար, մի քիչ ել կարծես ինգրելով դիմեց նրանց.

—Դե, ասեք, կանայք, կարմաղ եք!

—Կարանք, ընկեր Նարգիզ, կարանք,—նորից ոգնոր-
վեց Սաթոն, —որանցից ո՞ր մինը ջահել ժամանակը չի
բարձրացել էդ ճամբովը։

—Թեղ համար ինչ կա, դու կբարձրանաս։ —ասաց կա-
նանցից մեկը, որ մինչ այդ չէր խոսել —բա սա կարմ
բարձրանա, իբ օրումը ով գիտի գյուղից դուրս չի եկել։

Խոսող կինը ցույց տվեց օղակի նորեկ անդամին
Հայկուշին:

Հայկուշը, որ գուլզան ծալել ու ծոցն էր գրել զար-
մացած նայեց այդ խոսքերն ասող կնոջը: Ինչու է նա այս-
պես կարծում, թե հենց Հայկուշը չի բարձրանա: Քանի
անգամ է նա Բարասի հետ այդ ճանապարհով գնացել Մա-
ֆիլ և Բարասը միշտ էլ ասում էր, որ եթե Մաֆլում շուտ
ցանեն, առաջին տեսակի ծխախոտ կլինի: Ինչու հատկա-
պես իր մասին են ասում, թե չի կարող բարձրանալ:
Չինի՞ թե կարծում են, որ իր մարզը գերի է ընկեր
ինքն էլ չի ուզում աշխատել բանակի համար: Այդ մտքից
Հայկուշի սիրու անսովոր կերպով կոկծաց: Նա այդ մի
բողեում այնքան շատ բան հառկացավ... Հասկացավ
որ լավ աշխատելով պետք է փրկի իր ամուսնուն, նրա և
իր ընտանիքի պատիվը, որ գրանով միայն կարելի է ու-
րախացնել Բարասին, որը կամ չի հասկացել ու գերի է
ընկեր կամ նրան բռնել են, որովհետեւ Բարասը իր կամքով
գերի չը ընկնի: Ինչու է նա մինչև հիմտ կարծել, թե
Բարասը այդպիսի վատ բան կաներ: Հայկուշի հոնքերը
այլև չէին շարժվում: Նա իր լուրջ հայացքը ոկողում
գարձրեց գեպի այն կինը, որն այնպիսի թերահավատու-
թյամբ արտահայտվեց իր մասին, հետո էլ ոեպի նարգիզը
և ասաց:

—Թե հենց մենակ ինձ վրա եք կասկածում, սխալիել
եք, և կբարձրանամ:

Կես գիշերին Սաթոյի օղակի անդամները դատարկ
կմերը ուսերին գյուղից իջնում էին ձորը, ջուրը վերցնում
ու այնուեղից բարձրանում սարը, Մաֆլու հովիտը տանող
ճամբով: Եթե լուսնյակ գիշեր էր լինում, ձորի միջից գևալի
վեր նայողին թվում էր, թե թուշունների մի խորհրդավոր
երամ է գնում գեպի երկինք:

Առաջին օրը Հայկուշի համար շատ ծանր էր: Սիրու
արագ էր խփում, շունչը կարգում էր, երկար ու լայն շրջա-

զգեստի գեղեցքը խանգարում էին, ութքը կպչում էր քարե-
րին կամ ցեխի մեջ խրվում: Ռանամանը ցեխի միջեց
դուքս քաշելիս, Հայկուշը քիչ էր մնում լաց լիներ: Շատ էր
անսովոր այս տմենը նրա համար, տնային թեթև աշխա-
տանքից հետո:

Բայց ահա Սաթոն առաջինը հասով զարտթին, կու-
ծը դրեց քարերի մեջ ու նստեց:

— Կնանիք, հեյ, եկեք, թե չէ շուռ հմ դալիս դմբը,—
կանչեց նա ու նկատելով, որ մի-երկուողը ես են մոռաք,
վեր կացավ ու վազեց օդնելու: Նա անցավ մյուսների կող-
քով ու դնաց գեղի Հայկուշը, որ ամենից վերջն էր:
— Տներ կուժու:

— Եսքան բերել եմ, Էնքան էլ կտանեմ,— համառից
Հայկուշը: Իսկ երբ հասան զարտթին, նա նույնպես կուծը
դրեց քարերի մեջ ու Սաթոյի պես նստեց մի քարի: Ի՞նչ
քաղցր էր հանգիստը հոգնությունից հետո: Նա զմայլված
շուրջն էր նայում, կարծես առաջին անգամն էր տեսնում
իրենց սարերն ու ձորերը: Նա չղիտեր, որ քրտինք թա-
փող մարդու համար բնությունն իր յուրահատուկ քաղց-
րությունն ունի: Նա նայեց գեղի հոգիւթը: Ահա կիշնես,
միկամեկ կղըի նա իրեն հանձնված դաշտի ստծիները՝
Բանակայինները ծխել են ուզում: «Եթե Բարասը կավում
լիներ, կծխեր ու կիմանար, որ սա իմ մշակած ծխախոտն
էլ առաջ անցավ նրա մոքով: Նա սթափից, երբ տեսավ,
որ կանայք առանց կունդ առնելու ոկտեցին իջնել: Նա ինքն
էլ ուսեց կուժը և զգուշ ու արտադ ոկտեց իջնել:

Իսկ հետեյալ օրը երեկոյան նա կապեր սարքեց իր
չուստերին, որպեսդի ճանապարհին սոթից գուրս չզան,
ավելի թեթև ըրջապես ճարեց հագնելու համար և այդ
օրը ճանապարհը բոլորովին այնպես ծանր չթվաց, ինչ-
պես երեկ:

Զորբորդ օրը նա սարի գլուխը հասավ Սաթոյի հետ
միտոին և այստեղ Սաթոն ասաց նրան:

— Ես պետք է քեզ սոցմրցման կանչեմ:

—Կանչում ես, կանչի, վախացնում ես, —պատասխան
նեց Հայկուշը:

Ասոջներում Հայկուշը օրելով միայն երեխաների շուրեցն էր վանում, կարկատում, կով կթում, ճաշ պատրաստում, իսկ երեկոյան գուլպա գործում։ Այդ բոլոր գործերում սկեսուը այնքան շատ էր օգնում նրան, որ նա ամենին չէր գուռմ գրանց ծանրությունը և գլխավորապես իր փոքրիկ երեխաներով էր զբաղվում։ Հիմա արդեն նա չէր կարողանում երկար տանը նուաել ծիշտ է, երբեմն համերժակի անհանդատանում էր ու տուն վազում, կարծելով, թե երեխաների հետ գերախտություն կարող է պատահել բայց որովհետեւ նրանց միշտ կտյառո էր տեսնում, ակնորոշ հետ ավելի հարդանքով էր վերաբերվում, իսկ երեխաների նկատմամբ հետզհետեւ ավելի անհոգ էր դառնում։ Նրան սկսել էրն հետաքրքրել ակումբը, ժողովները, աշխօնիրի գրանցումը իսկ ամենից ավելի գուռթյունը ուսումնաճակատներում։ Կարմիր բանակայինների քաջազգությունների մասին նա առանձին զարմանքով էր լուսում և նրբեմն նույնիսկ կարծում էր, թե դրանք հեքիաթային մարդիկ են։ Նրա համար կարմիր բանակի մարտիկը դա միայն ներուսություն էր, ազնվություն, քաջություն։

Երբ տուն էր գալիս, բոլոր լածների մասին պատմում էր սկեսորջը, չէր մասանում նաև աշխօրերի մասին։ Սկեսուը լսելով Հայկուշի պատմածները հիշում էր իր կրտսեր որդու կրտսատը և լալիս էր, բայց երբ խոսքը դառնում էր ապրուստին, նա նայում էր թռոներին ու վառք տալիս աստծուն, որ իր տանը թեև տղամարդ չկա, բայց բնը է գալու, երեխաները քաղցած չեն մնալ։

—Բաքասս ու Դարես կգան, ու մեզ առաջվա ոլես կտնանեն, Հայկո ջան, —վերջացնում էր նա, —քեզ մատադ,

քու դադրն էլ էն ժամանակ ավելի լավ կիմանան, չարչաբառաւ նու, ամա ինչ արած, հաղբաթ էսպես էր պետք:

Իսկ Հայկուշը հիմա Բարասի մասին մտածելիս, տըխ-
րում էր, դառնում լրակցաց: Նա հաճախ նայում էր ամուս-
նու մեծացրած նկարին, որ կախված էր իր մահճկալի վե-
րեաւմ, զննում եր նրան այնպես, կարծես առաջին ան-
գամն էր տեսնում, և ամուսնու համարձակ առանական
դեմքը ավելի ևս համոզում էր նրան, որ ամուսինը դերի
չէ: «Ի՞նչ է յեղել ուրեմն, սպանվել է: Զէ, չէ, հեռացնում
էր նու իրենից այդ միտքը,—թող դերի լինի, միայն թե
սակ մնա, ներս մտնի էս դոնով, տեսնի իր էրեխեքին, հե-
րություն անի նրանց, համբուրի էր բարկանա էր աշ-
խատանքից բեղաբած տուն գա, ասի—«հաց զցի, Հայկո».
Թող նրա մերը չտեսնի մեծ տղի կորուստը»:

Բայց պատահեց մի դեպք, որից հետո Հայկուշը հաշտ-
վեց այն մաքի հետ, որ ավելի լավ է իր ամուսինը սպան-
ված լինի, քան թե դերի:

Ամառ էր և ծխախոտն արդեն մշակում էին Մաֆի
հովտում: Նաբգիզն ամբողջ օրը գաշտումն էր, և, ինարկե,
տմենից շատ լինում էր Սաթոլի օղակի մոտ, որովհետեւ
նրա օղակի աղիտատորն էր: Այդ օրը նախաճաշի ժամա-
նակ, երբ թագոն լավաշի բրդուճը կծելով իր այդ գիշեր-
վա երազն էր պատմում, ոչ թե սարի տակի երկար ճա-
նապարհով այլ նրա գագաթի դիք ճանապարհից հանկարծ
դեպի նրանց սլացավ զյուղի կատարածուն, 13 տարեկան
մի տղա ու դեռ հեռվից տեսնելով օղակի մոտ կանդնած
նարգիզին, ինչոր թղթի կտոր թափահարելով, հեալով
կանչեց.

—Աչքու լիս, ընկեր Նարգիզ, աչքու լիս:

Կանայք բոլորը կանգնեցին և աչք չեին հեռացնում
կատարածուից, որը վազելով մոտենում էր, իսկ թագոն
հավաքեց իր և աղջկա կերածի մնացորդները ասելով.

—Տեսմար, որ երազս միշտ ա զուրս դալու:

Նարգիզը անհամբերությամբ սպասում էր մոտեցող

պատանուն: Ճիշտ լսեց արդյոք իր անունը և թե «աչքի
մխար: Ամուսնուց հույս չկար, նա մահացել էր զոստիտու-
լում: Ուրեմն եղբոր մասին կլինի. էլ ինչի՞ համար կատա-
րածուն կվազել զյուղից մինչև այստեղ, այն էլ այդ ճամ-
բով: Առ չգիտես ինչու՝ նա հանկարծ հիջեց իր եղբոր ման-
կությունը—մերկ վտիս, քբոջ վեշը բոնած վաղում է վո-
զցով: Այս անոպահիի հիշողությունից, թե այն լավ լու-
րեց, որ սպասում էր լսեր նա հանկարծ ուզեց պատրին
լաց լինել թափել կուտակված վիշտը:

Բայց ահա տղան մոռեցավ ու շնչառառ մնկնեց
թուղթը:

Նարգիզը խեց այն, բայց աչքերն աբոքեն շաղկում
էին արցունքներից: Նա հաղիվ կարողացավ ջոկել բասերը
և վերջում եղբոր անունը: Նա մի քանի անգամ արցունք-
ները պրեց, մի քանի անգամ կարգաց թուղթը, հետո
ուրախությունից, թե մի քանի բողեի հոգեկան լարվա-
ծությունից, ուժառապա նստեց հողակոշտի վրա:

Իսկ երկու օր անց նա կատարածուի միջոցով օղուկի
անդամներին կանչեց ակումբ, ինքը եկավ բոլորից ուշ—
զուգման զարգարված, եղբորը թեանցուկ արած: Կանայք
ակնածանքով նայեցին նրանց ու կանգնեցին: Զգիտեին
ինչ անել: Շը ջկոմի նախկին քարտուղարը, նարգիզի եղ-
բայրը, որ կրծքին շքանշաներ ուներ, բարեց նրանց,
ժպտաց ու գնաց զեպի իր համար պարասատած տեղը: Նա
առանց այն՝ էլ սովոր էր, որ իրեն առանձին հարգանք
ցույց տան, իսկ այս զեպիում ասավել ևս: Նա զգում էր, որ
կանայք հայացքները չեն հեռացնում իրենից և աշխատե-
լով քիչ կաղաք նստեց: Նարգիզը կանգնեց եղբոր կողքին
և միայն մի խոսք ասաց.

— Ընկերներ, ես եղբորս կանչել եմ, որ մեզ պատմի
պարտիզանների մասին:

Եղբայրը նայեց շուրջը: Այնպես նման չեին այսօրվա
ունկնդիրները իր մինչև վերջերս ունեցած ունկնդիրներին:
Նստած են կանայք լայն ու գույնզգույն շրջապահաներ հա-
գած, ոև կամ սպիտակ զլիալորեր կապած, ոմանք արցունք-

ներն են ողբում, երկի իրենց զոհված հարադատներին հիշելով, սմանքը ուրախ անհամընթյամբ սպառում են իր պատմությանը: Ո՞վ է այն մեկը, թնթացող ունքելովը, որ առանձնապես անհամընթյուն է երևում: Եվ նա, հարմարվելով ունկընդիրների պահանջին, պատմեց, թե ինչպես իրենք մի խմբով, անգական բնակչության օղնությամբ փախան զերությունից ու պարտիզանական ջոկատ կազմեցին, և թե ինչպիսի գործեր կատարեց իրենց ջոկատը:

Վերջում Թագոն հարցրեց.

—Արտաշ ջան, բա գերիներին մնց են պահում, եղինչ որ պատմում են գերմանացոնց զագանությունների մասին, դժուդ ա, հավատալու յա, որ մարդը մարդու հանդեպ ըստենց գաղան ըլլի...

—Դեռ մի բան պակաս են առում,—պատասխանեց Արտաշը և հասածից: Նա մի բովե նայեց Թագոյին ու հանձինս նրա հիշեց ըշջանի անվանի կոլխոզնիկունիներից մեկին, նրու մայրական «Արտաշ ջանն» էլ լրացրեց պակասը և նու տշխուժացավ ու որոշեց տիսոր բաներ չպատմեր խոսել իր ջոկատի քաջերի մասին, բայց նկատեց, որ կտանայք թերում են զեղի այլ կողմ: Նրանք չեին կասկածում մերոնց քաջալթյան մասին, բայց ուղում էին ականատեսուից լսել զերմանական զերիների մասին, չեին հավատում, թե մարդարարածը ընդունակ է այդպիսի գործերի: «Զարմանալի չէ, չեն տեսել»—անցավ նրա մտքով:

—Այ, ես ձեզ պատմեմ, թե ինչպես եղավ, որ մենք գերութցունից փախանք: Փախչել հնարավոր չեր, մենք գիտեինք, որ կմեռնենք, բայց մահը զերագասեցինք զերությունից: Մեզ ձամբար տանելու երկրորդ օրը, ոտիպեցին բոլորովին քաղցած աշխատանքի գնալը Դուքս եկանք բարակից: Անընդհատ, աչքերով փնտրում էի մեկին, մի ծանոթ մարդու, զուցե ուտելու մի բան տար, երկու օր է քաղցած էինք: Աղբի արկդի մասով անցնելիս ես մի տղա տեսա, որ արկդից հետ քաշվեց և հազիվհաղ մնաց ոտքի վրա: Նա կմականքի նման էր, բայց չգիտեմ ինչը դիմ ձագրա:

Նայելի էր գարձնում նրան։ Տղան ինձ էր նայում ական, բայն բացած աչքերով, որ ես չփառեր հետաքրքրությանը է և նայում, որպես նորեկների, թե քաղցից պատրաստ է մեզ վրա հարձակվելու։ Նրա ձեռքին կեղառա թղթի մեջ փաթաթած մի բան կար։ Հանկարծ այդ բանը նրա ձեռքից վայր ընկալի, իսկ ինքը, տղան, վազեց գեղի ինձ և ուզում էր փաթաթվեր սայց չէր կարողանում ոտքի վրա մնալ։ Դա մեր շրջանի ն. գյուղացի Արտեմ բիծի տղան էր հայտնի տրակտորիստ Եղոն։ Երբ ուշքի եկանք, և նկատեցի, որ նրա ձեռքից ընկածը աղբանոցից հավաքած կերակրի մնացորդներ են։ Նա երկար ժամանակ է ճամբարում էր և պարզ երևում էր, որ այլևս չի գիմանա։ Մեզ էլ նույն վիճակն էր սպասում, եթե ոչ ավելի վաստ Հենց այցտեղ էլ սրոշեցինք ինչ գնով ուզում է լինի, փախչել Ռմանք զոհվեցին, բայց մնձամանությանը հաջողվեց փախչել ու թագնվել մոտիկ ապրող տեղացիների մոտ, իսկ հետո էլ ջոկատ կազմեցինք։

—Բա Եղոն, ի՞նչ եղավ վերջը, ընկեր Արտաշ, — գլուխ շորի պոչով աչքերը պրեկով հարցրեց Վարսոն։

—Էլ ուրիշ հայ տղերք չտեսածք էնտեղ, — հետաքրքրվեց մեկ ուրիշը։

Հայկուշի սիրտն արագ զարկեց։ «Ճեր աստված հանկարծ Բարսամին ահսած լինի, այլպես խեղճ ու կրակ սովոր, մահամերձ»...

—Ես ընդամենը մի քանի օր մնացի այդ զժոխքում, հայ աղմաների չեմ տեսել մեր ջակատի աղմաները բոլորը ուսւ և ուկրախնացի ընկերներ էին, նրանց հետ խորհրդակցեցինք և վերջապես հաջողվեց փախցնել Եղոյին, բայց մինչև մի աղմանով տեղ հասցրինք, բոլորովին ուժասպա եղավ։ Պառկիցը մի ծառի տակը աղմաներն ուսուելու բան ճապեցին, համարյա չկերպավ, միայն զարմացած նայում էր ուտեկիքներին, կարծես կասկածում էր, որ զբանք ուտելիքներ են, որ կյանքում դեռ կան այլպիսի բաներ։ Երբ կամաց-կամաց համոզվեց, որ իր տեսածը երազ չէ, աչքե-

ըր վեր պարզեց, երկար նայում էր ծառի ճյուղերին, հետո
մի եկրպ գլուխը շրջեց իմ կողմը.

—Ես էնքան էլ անբախտ չեմ եղել, բնկեր Արտաշ,
դեբության մեջ չմեռա, անտեր չմնացի: Այ, գուք, մեր
շրջկոմմի քարտուղարը, նատած էք իմ գլխավերելը: Ախ, թե
միեր կենացի ու կովի երթայի ձեղ հետ... Դրանից հետո
նա իրեն մի փոքր լավ էր զգում: Բայց քիչ անց տղերքն
ինձ կանչեցին: Եղոն կարծես երակի մեջ զառանցում էր.

—Ճի՞ն իմ տրակտորի ձենն ա գալի...

Հետո հանկարծ ճանաչեց ինձ, բռնեց ձեռքս ու առաց.

—Մորս ասեք որ ես գնրության մեջ չմնացի, ազա-
տության մեջ մեռա... Էս ծառի վրա նշան արեք, թող
մերս դա ինձ զանի:

Կանանցից մեկը, որ ճանաչում էր Եղոյին ու նրա
ծնողներին, բարձրածայն հեկեկաց: Իսկ Հայկուշը գուցե-
միակն էր, որի աչքերին այդ երեկո արցունքը մոտ չեկավ:
Նա իր գեղեցիկ աչքերի վայրենի արտահայտությամբ նա-
յում էր ուղղակի լամպի լույսին և կարծես ինքնամուռ-
ցության մեջ ասաց.

—Որ շուտ վախչեր գերությունից, ավելի լավ կա-
ներ, միշերկուսին էլ գեռ կարող էր ինքն սպանել մեկ է,
մեռնելու էր:

Մութ գեշերին պատերը բանելով տուն էր գնում
Հայկուշը և գարճյալ նույն բանն էր մտածում: «Ճի՞թե Բա-
րամը գերի է ընկեր քաղցած: մնացել ու այդպես անհետ
բարյալ չի փախել, չի եկել մերոնց մատ... Լավ չէ ու լինի
կորեկ... չի փախել, չի եկել մերոնց մատ... Լավ չէ ու լինի
արդյոք, որ մենակը կավի մեջ, զենքը ձեռքին, ընկերները
ապաժողվ կթաղեին: Բայց այդ գեղքում էլ Բարամը հա-
պատճով չէր լինի, երբեք չէր կարելի տեսնել նրան, իմա-
նալ թե ինչ օրեր է քաշել Հապա սկեսուքը... չի դիմանա,
կզմովի խեղձ կնիկը»:

Երբ առւն հասավ, բոլորն արգեն քնած էին: Նո-
առանձին-առանձին նայեց երեխաներին, սկիսը ողը
մտքում միշերկարկ նրանց: Բացարում էր, որ իրենց

հայրիկը գերության մեջ մնացող չէ, որ նա քաջ մարդ է՝
մեռնելուց չի վախենում և եթի նըանից նամակ չկա, ու-
րեմն կամ սպասվիկ է ռազմածակառում, կամ գերությունից
փախչելիս... և կամ... նա հանկարծ ուրախ ետ թռավ երե-
խայի մահճակալի մոտից... «կամ» պարտիզան է, չէ՞ ու
նըանցից ել նամակ չի գալիս...»

Հարստացել էր Հայկուշի նրեակայությունը: Ամեն
տեսակ սպամածակառացին ահարաններ էին զալիս աչքի
առաջ, որոնց կենարունում միծ մասամբ ամուսինն էր...
Դրանք երբեմն աթուը էին վերջանում, երբեմն ուրախ,
երբեմն Բարասը խարում էր թշնամուն ու ազատվում նրա
ձեռքից, երբեմն քաջարար կավում էր և հերոսարար ընկ-
նում և ընկերները լուծում էին նրա վեհժը, երբեմն պար-
տիզան էր, երբեմն վիրավոր ընկած կանչում էր իրեն...

Բազմաթիվ գուշակություններ անելուց Հայկուշը թըմ-
բում էր, մեկ նրան թվում էր թե շատ խորն է իր վիշտը
և մեկ էլ դառնում էր անտարբեր, որպես թե բոլորսին
վիշտ չունի: Իրականում նրան փրկում էր ամենօրյա աշ-
խատանքը ընկերուհիների հետ, Նարզիզի աղիտացիան,
այն զգացումը, որ իրեն լավ աշխատող են համարում, որ
երեխանները առանց հոր չեն կորչի:

Ամառը անցավ, եկավ աշունը: Մի քանի վիրավոր
տղաններ եկան գյուղ: Նրանցից սմանք շքանշաններ ու-
նեին: Հայկուշը մտածում էր, թե որքան երջանիկ են նրանց
հարազատները: Կավել ու պատվով ետ գալ... Միթե իրենք
էլ կարծանանան այդ բախտին:

Այդ օրերին բերքի բաշխում եղավ: Երբ Հայկուշի աշ-
խարերի գիմաց ստանալիք եկամուտը տուն էին բերում,
սկեսուրը և երեխանները կանգնել էին դասնը: Սկեսուրը
շարունակ աչքերն էր սրբում ու աստծոն փառք տալիս,
իսկ երեխանները ծափ էին տալիս, թոշկոտում այս ու այն
կողմ: Հայկուշը զալիս էր սայլի կաղքով ամաչելով: Նա
զարմանում էր, որ այսքան բանն ինքն է վաստակել: Նը-
ման էր այն օրերին, երբ Բարասի ու նրա եղբայրների

պատահն էին տուն բերում, Այ թե Բարասը կիմանար,
ինչքան կուրախանար...

Այդ գիշեր Հայկուշը պարկելուց հետո չհանգցրեց լամպը:
Նա ցանկություն էր զգում մեկին պատմելու իր զգացում-
ները: Բայց մեմ: Նա նայում էր ամուսնու նկարին ու պատ-
մում նրան իրենց օղակի աշխատանքի, Նարդիկի ու նրա
եղրոր մասին, պատմում էր, թե ինչպես ինքը մրցան մեջ
ճախասար դուրս եկավ «Ճանավար Սաթոյի» հետ և այնու-
նա ոչ մեկի հետ այսպիս քննքուշ ու սրտարաց չեր, ինչպես
Բարասի: Դե ոկտոբերը ծեր էր ու չեր հասկանում իրենց
զորքերից, ընկերութիւներն էլ ամեն մեկն իր գարդն ու
հոգուն ուներ, իսկ Բարասը ամենն ինչ այսպիս լավ էր հաս-
եանում, այնքան ուշադիր էր զեակի Հայկուշի ասածները,
լուսմ էր, ժպտում ու շոյում Հայկուշի մաղերը: Այդպիս էր
առենում հիմո Հայկուշը ամուսնուն: Այդ գիշեր Հայկուշը
մտածեց նաև այն մասին, թե ինչու ինքը առաջներում ոչ
մի նման բան չէր խոսում ամուսնու հետ, և առնասարակ
ինչի մասին էր խոսում, չեր հիշում: Այնուհետև ամուսնու
պատկերը հետպետե փոքրացավ անեացավ և Հայկուշը քը-
նեց անուշ երազների մեջ:

Իսկ ամուսնունը...

Նա այդ գիշեր գնացքի մեջ էր: Կես գիշերին գնացքը
վերջապես հասավ այն կայտաբանը, որտեղից Բարասը պիտօք
է պատահական մեքենայով (ուրիշ ելք չկար, նա համբե-
րություն չուներ սպասելու մինչև առավոտ) գար շրջեն-
տրոն ու այնուհետև ոտքով բարձրանար գյուղը: Կայտա-
նում նրան ծանոթները պատահեցին, զարմացած ու շփոթ-
ված գրկախառնված էին, հարցնում որպիսությունը, որ-
տեղ էր, ինչու այտքան ժամանակ տեղեկություն չէր տա-
լիս իր մասին: Բարասը պատմաւմ էր իր գլխով անցածը
և անմիջապես հարցնում էր իր ընտանիքի մասին: Այն-
քան լավ էին նկարազրում Բարասի կողմը, նրա աշխա-
տանքը կոլիտողում, որ նո քանի գնում ավելի անհամբեր
էր գառնում: Եղբոր զոհվելու լուրը ծանոթները թաղցնում

Էին: Նա այդ զգում էր և տիռուք ժաղառում, որովհետև պեսնչ
սաղմանակատում լսել էր այդ մասին: Նա մի զլուխ խըն-
դրում էր համագյուղացիներից ավտո ճարել: Կայարանին
կպած զյուղում, որտեղ բոլոր ճրագներն արդեն հանդել
էին, անտեղից ցեխ էր փողոցներում: Նրանք ման էին
գտնիս ու ձայն տալիս իրար, մինչև որ մեկը կանչեց, թե
այսինչ տեղը մաղութ տեղափախող մեքենան կա, որը հենց
հիմա գնում է շրջկենարոնը: Բարասը վաղեց դեպի այդ
կողմը: Իր համագյուղացին կանգնած էր մեքենայի մոտ
ձեռքին մի ճիշտ, որպեսզի շրջերն էր վերջին ուղղութ-
ներն աներ մեքենայի վրա: Ճիշտի լույսի տակ համացու-
ղացու աշջով նորից բնկան Բարասի շքանշաններն ու մե-
դալները, մաքուր զինվորական զգեստը: Եվ նա Բարասին
խորհուրդ տվեց:

— Էս շրջերդ ու շքանշաններդ ափսոս են, մաղութիւն
բոչկեքի մոտ թամուզ կիեղոտահո, փոխելու լան չունե՞մ:

— Լավ ես տում, Սրապ, արի սրանք փոխենք, սրան-
ցով ես գեռ հրամանատարության պետք է ներկայանամ,
համ էլ էս կես զիշերին ով է ինձ թամաշի էկողը:

Մեքենայից մի քանի քայլ հեռանալով, նա զինվո-
րականի արագ ու կտրուկ շարժ ու ձեռքով փոխեց հագուս-
տը, նորիքը ինամքով տեղափորեց ու թուզ մեքենայի
մեջ: Ինչքան դանդաղ է զնում մեքենան, երբ կհասնի և
առհասարակ հիմանի արդյոք, կտևնի Բարասը մորը, Հայ-
կուշին, երեխաներին:

Ահա և շրջկենարոնը: Մեքենան կանգ տառի ծանով՝
շինքի առաջ: Լուս քնած է մանկությունից ծանոթ վոր-
րիկ զյուղաքաղաքը: Բարասը զիտե թե որտեղ ինչ հիմ-
նալկություն է տեղափորված, և նոյնիսկ թե որ տահն ով
է ապրում, բայց շտապում է: Առաջ տուն, երեխաների,
մոր, կնոջ մոտ, հետո այստեղ էլ կամ, բոլորին կտեսնի,
ժամանակ կլինի... Մի ամբողջ ամիս հայրենի վայրերուն,
դա նրան թվում էր իրականություն դարձած երազ... Քանի-

անդամ մարտի գնալիու մտածել էր, թե այլիս չի տեսնի
այս ամենը:

Եվ քրտնած, բայց ուրախ, շնչելով լեռնային սառն
օղը, նա շարունակում էր բարձրանար բարձրանալ գեպի
բլուրի գագաթը, զեպի այնտեղ ուր թառել է և հիմա հան-
գիստ քնած է իրենց գյուղը: Ահա վերջին փոքրիկ ուրոտը
գագաթի մի կողմում և գյուղը փովում է նրա առաջ: Բա-
րայը ավելի է շտապեցնում քայլերը: Ծները անհանգստո-
ցած գուրս են վազում բակերից, բայց չգիտեն ճանաչում
են, թե զգում են, որ ճամբորգը չի վախենում իրենցից ու
պաշերը քաշած ետ են գնում: Ահա Բարայն անցնում է մի
շենքի մոտով և այստեղ մի վայրկյան կանգ է տառնում:
Ահազին ծանոթ կողպեցը դռան վրա է, այստեղ պահվում
էին իր ըրիգադի գյուղործիքները: Նա մոտենում է և
ինքն էլ չգիտե ինչու, ձեռքը քսում է շենքի հաստ պատին
ու նոր շարունակում ճանապարհը զեպի տուն: Ահա իրենց
տունը: Սրտի զարկերն ավելանում են: Բակի փոքրիկ
դուսը բաց է, ցածրիկ պատշպամբի առաջ առաջի պես
փայլած է իրենց անամերձը, իսկ այ, այստեղ... Եվ որտե-
ղից որտեղ նրա աչքով է ընկնում պատշպամբի տակ, պա-
տին շատ մոտիկ թաղված թառը, որտեղից «չալտիկ հավը»
ջուր էր խմում ու հետո կտուցը զեպի երկինք ցցում: Նա
հիշեց, որ ինքը որոշել էր այդ հավը մորթել փոքր եղբար
հարսանիքին: Սիրտը սեղմվեց, հետո սկսեց էլ ավելի զար-
կիլ: Նա իր զինվորական պայուսակը գրեց պատշպամբն ու
մոտեցալ պատուհանին: Ինչու է ճըագը վառվում, ախր
զես նոր է սկսում լուսանալ միթե որևէ մեկն արթուն է,
ինչու... Աչ, բոլորը քնած են... Ահա զիմացը իրենց մահճա-
կալն է, անկողնու տակից երկում են Հայկուշի ու, փափուկ
մազերը, պատուհանի տակ երեխաներն են քնած, բոլոր
երեքը, փայտե մեծ մահճակալի վրա, բայց ինչքա՞ն փոխվել
են, մեծացել են: Իրենց մահճակալից քիչ ներքե, սնդուկի
մոտ մոր մահճակալն է: Այնպես ուղիղ, մեջքի վրա քնած է
մայրը, ամբողջությունը երկում է բարի զեմքը: Բարային

թվում է, թե մայրը ձեռքերը կրծքին է խաչել նայում է վերև և ինչ որ բան է խնդրում, երևի առածուց. «Մեղմ նանի, գետ համառում է աստծուն»—անցնում է որդու մըռաքով, —երևի մեղ համար է խնդրում... նրան նույնիսկ թըռվում է, թե մոր շրթունքները շարժվում են, նա ինչ որ բան է շնչառն Բաբան այլիս չի համբերում: Կամացուկ հետ հրելով պատռհանի մի փեղկը, փոխված ձայնով, որ հիշեցնում էր նրա մանուկ ժամանակվա կերկերուն ձայնը, Բաբանը հաղիվ կարողանում է կանչել.

—Նանի...

Աչ ոք չի արթնանում: Նրա ձայնն ավելի է գողում, բայց այս անգամ մի քիչ ավելի բարձր ու երկար նա կանչում է մորը.

—Նանի...

Ահա մայրը վեր կացավ, մոտեցավ երեխաներին և երեխաներից որևէ մեկն է արթնացել ու իրեն է կանչում, բայց տեսնելով որ նրանք երեքն ել հանդիսան քնած են, համոզվեց, որ երազում է լոել այդ ձայնը և ուզում էր վերադառնալ իր անկողինք Բայց Բաբանը խռոված երեխայի նման, որին թվում է, թե իր վրա ուշադրություն չեն դարձնում, բողոքող ձայնով կանչում է.

—Նանի:

Մայրը ետ դարձավ ու նայեց դեպի զույը: Մի վայրէ կյուն նա քարացավ, բայց նրա մայրական սիրտը զգաց, ձանաշեց որդու ձայնը, մասավանդ, որ գա նրա երեխա Բաբանի ձայնն էր: Նա նետվեց գեղի զույը և երբ տեսավ որպեսն զմների մեջ քիչ էր մնում վայր ընկներ, բայց Բաբանը շպրտեց ձեռքի պայուսակը, որ բնադրաբար, նորից վերցրել էր և գրկեց մորը:

Հայկուշն ու երեխաները նույնպես արթնացան:

Երբ մեկ լուսեթյան, մեկ ուրախ բացականչությունների, մեկ հորդառատ արցունքների առաջին բոպեներն անցան, Բաբանը մոտ կանչեց երեխաներին ու իր՝ Մոսկվայից վերադառնալու օրերն հիշելով, ոկտեմբերի նվերներ բա-

Ժանել: Ամենքի համար, Հայկուշի, մոր, երեխաների, անգամ հեռավոր մի գյուղ հարս զնացած քրոջ համար նվեր կար: Նա ինամքով առանձին դրեց իր զինվորական զգեստը, որ հանել էր ճանապարհին ու փաթաթել թղթի մեջ: Մինչև նրան ապօրինակ չեր թվում Հայկուշի լուռթյունը: Նա չեր զարմանում նաև, որ Հայկուշը այնպես ուշադիր զննում է իրեն: Ճիշտ է, այդ նրա համար բավականաշափ օտարուի էր, որովհետեւ նա Հայկուշին ճիշում էր ամաչկոտ, զըլուիր կախ, որ քաջում էր մեկին երկար նայել: Բայց նա մտածում էր, թե ինչպես ինքը, այնպես էլ երեկ Հայկուշը կարուել է, և չի կարողանում աչքը հեռացնել: Ինչ էտ որ, թող նայի, ինքը նույնիսկ լավ էր զգում իրեն այդ հայացքի տակ: Բայց երբ Բաբասը տվեց Հայկուշին նվերը՝ զգաց, որ վերջինս գրեթե անտարբերությամբ ընդունեց, և աչքերի մեջ էլ ինչ որ տաղնապ կար:

Իսկ Հայկուշն ինչ էր մտածում: Ան կենդանի վերաբերձել է իր Բաբասը: Բայց մբաեղ է եղել նա, քաջաբար կովել է, որևէ կիրապ աչքի է ընկել, թե նենց գերությունից վախել և ուղիղ տուն է եկել Հավանական է այդպես կլինի, շորերն էլ ոնց որ «զեղերտիրի» լինեն, մաշված կեղտուու Բա այս նվերները ո՞րոեղից են: Մի անգից ճարած կլինի: Իսկ եթե քաջ է եղել, հրամանատար, կամ պարտիզանների մեջ է եղեւ ինչու նարդեղի եղբոր պես հեռագիր չեր տալիս, որ զնայինք կայարան, կամ չեր սպասում, որ առավոտը մաշինով գար, —ոտքով է եկել որ իրեն էդ վիճակում չախնահն: Նա ինարկեն հետո կրմանար այս ամենը, բայց ուղում էր հենց հիմա իմանալ, այնինչ անհարմար էր զգում հարցնել և տանջվում էր: Իսկ Բաբասը զարմացած այս անտարբերությունից, այս ու այն կողմ էր նայում: Նրա մտքով հանկարծ անցավ թե երեխ կինը դավաճանել է իրեն և եթե այդպես է, որը պետք է լինի իր անհլիքը: Նա մոտ կանչեց իր մեծ տղային, որն ուրախ վաղվում էր սենյակում և ուտում հոր նվիրած կանքեաներից, զրկեց, նայեց աչքերի մեջ, կարծես հար-

ցնում էր. «Մայրդ ինչու է այլպես։ Բայց տղան նրա կրծքին սեղմկելով կարծես մի բան հիշեց ու հոր կռւրծքը շոշափելով հացրեց։

—Հայրիկ, բա ինչու դու ոչ մի շքանշան չունես։

Բարասը նկատեց, որ այդ հարցի վրա նույնիսկ մայրը հետ դարձավ և ուշադիր նայեց իրեն, իսկ Հայկուշը լարվեց, ամբողջապես ուշադրություն դարձավ, կարծես այդ հարցի պատասխանից էր կախված նրա կյանքը։ Բարասը ետ հրեց այն տարուրեալը, որի վրա նստել էր, վերցրեց թղթի մեջ փաթաթած իր զգեստները, որ հանել էր պայուսակից ու, զբել սեղանին և բաց անելով ասաց տղային։

—Բա չունեմ, բալիկ, շքանշաններ ել ունեմ, մեղալներ էր ընկեր Ստալինից ել շնորհակալություն եմ ստացեմ բա ես ձեզ ամոթով կթողնեմ...»

Նա ցույց տվեց իր զգեստի կրծքին ամբացված շքանշաններն ու մեղալները։

Մայրը հպարտորեն մոտեցավ որդուն ու նորից համբուրեց նրան, իսկ Հայկուշը մի քայլ հեռու գետ գիտում էր ամուսնուն։ Նրա աչքում Բարասի հասակը բարձրացավ, դեմքը գեղեցկացավ, սենյակը կարծես լցվեց նրա առնական շնչով։ Մոտենալով, Հայկուշը հանկարծ ընկալ ամուսնու ոտքերը։

Բարասը հանկարծակի եկած ուզում էր բարձրացնել նրան։ Մի վայրկյան նրա մտքով անցավ, թե Հայկուշը որիէ հանցանքի համար ուզում է իրենից ներողություն խնդրել, բայց կինը գրել էր նրա ոտքերն ու մեկ այտերը մեկ փափուկ մաղերը ամուսնու ծնկներին քսելով կրկնում էր

—Քաջ ես եղել, սրտիդ մատադ, կդնանք մեր օգակում կպատմեմ ձեր գործերից։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

1. Հպարտություն	•	•	•	•	•	•	•	3
2. Գըտանցակում	•	•	•	•	•	•	•	35
3. Ծխախոռագործների օղակում	•	•	•	•	•	•	•	56

Պատ. Խմբագիր՝ Ա. ՀԱՅՐՅԱՆ
Տեխ. Խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վ.Ֆ. 01215 Պատվեր 769, տիրոժ 3000. Տպագր. 5,5 մամ. հեղ. 5,0 մամ.
Հանձնված և արտադրության 16/XI 1946 թ.
Ստորագրված է տպագրության 20/III 47 թ.

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կեց Պոլիգրաֆ և Հքատարակչ. գարչ.
№ 3 տպարան. Ալահվերդյան № 65 Երևան, 1947

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028402

176,

ԳԻՆԸ 6 Ր.

